

Ուղեցուցիչ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ

*ՄԱՍ ԱՌԱՋԻՆ*

Կազմող՝ Գապոյան Աննա  
Ղեկավար՝ Գաբանյան Մարի

*Հունվար 2017*

*«Մխիթար Սեբաստացի»*

*Կրթահամալիր*

## *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

**ՄԵԾԵՐԸ ԳՐՔԻ, ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

[Թումանյանն՝ ընթերցող: Ռաֆայել Իշխանյան, 1991թ.](#)

[Գրքի ֆենոմենն իբրև շրջափուլաստեղծ գործոն Եղիշե Չարենցի պոեզիայում  
Նիկողոսյան Արքմենիկ, 2012թ.](#)

### **ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

[Մորտիմեր Ադլեր «Ինչպե՞ս կարդալ գրքեր»: Նախաբան: Թարգմանությունը՝  
ընթերցավար Երանուհի Սանթրոսյանի, 2014թ.](#)

[Մորտիմեր Ադլեր «Ընթերցանությունը՝ որպես գործունեություն»: Թարգմանությունը՝  
«Տիգրան Հայրապետյան» գրադարանի ղեկավար Մարի Գաբանյանի, 2014թ.](#)

[Մորտիմեր Ադլեր: «Ինչպե՞ս կարդալ գրքեր»: Թարգմանությունը՝ «Տիգրան  
Հայրապետյան» գրադարանի ընթերցավար Լիանա Տեր-Պողոսյանի, 2014թ.](#)

[Մորտիմեր Ադլեր « Ինչպե՞ս կարդալ գրքեր»: Բազմաթիվ կանոններից դեպի  
միասնական հստություն: Թարգմանությունը՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի  
գրադարանավար Մարգարիտ Հարությունյանի, 2015թ.](#)

[Մերաբ Մամարդաշվիլի «Գրաքննադատությունը՝ որպես ընթերցանության  
գործընթաց»: Թարգմանությունը՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի ընթերցավար  
Լիանա Տեր-Պողոսյանի, 2014թ.](#)

[Լիանա Հայթին «Գրագիտության փոխվող դեմքը. Ինչպե՞ս է պետք կարդալ  
սովորեցնել թվային դարաշրջանում»: Թարգմանությունը՝ անգլերեն լեզվի  
մասնագետ, դասավանդող Յուրա Գանջալյանի, 2016թ.](#)

Գրադարանը մշակութա-տեղեկատվական միջավայր՝ հավանականության ուսուցման դպրոցում: Թարգմանությունը՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի, «Տիգրան Հայրապետյան» մեդիագրադարանի ղեկավարներ՝ Մարի Գաբանյանի, Զարուհի Առաքելյանի, 2013թ.

## **ՍԵԲԱՍՏԱՑԻՆԵՐԸ ԳՐՔԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Մեդիագրադարան: Հեղինակներ՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի, «Տիգրան Հայրապետյան» մեդիագրադարանի ղեկավարներ՝ Մարի Գաբանյան, Զարուհի Առաքելյան, 2011թ.

Գլխավորը՝ չուշանայն է: Հեղինակ՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի գրադարանավար Նոննա Գրիգորյան, 2011թ.

Թվային գրադարանների առավելությունը ավանդականի նկատմամբ: Հեղինակ՝ Տիգրան Զարգարյան, կազմող՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի գրադարանավար Մարգարիտ Հարությունյան, 2013թ.

Գրքի տոն. Ընթերցանության զարգացման նոր հնարավորություն: Հեղինակ՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի ղեկավար Մարի Գաբանյան, 2013թ.

Գրադարանավարների դերը 21-րդ դարում: Հեղինակ՝ Ֆրանսերեն լեզվի մասնագետ, դասավանդող Աննա Մարության, 2011թ.

Ինչ ասել է՝ լավ գիրք: Հեղինակ՝ Հայոց լեզվի և գրականության մասնագետ, դասավանդող Հասմիկ Ղազարյան, 2013թ.

Մեդիագրադարանը, ուսումնական կաբինետը՝ ուսուցման կազմակերպման արդյունավետ միջավայր: Հեղինակ՝ Հայոց լեզվի և գրականության մասնագետ, դասավանդող Թամար Ղահրամանյան, 2012թ.

Գրադարան առանց գրքի: Հեղինակ՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի ղեկավար Մարի Գաբանյան, 2014թ.

Գրադարանի դերը կարփնետային ուսուցման գործում: Հեղինակ՝ «Տիգրան Հայրապետյան» գրադարանի ղեկավար Մարի Գաբանյան, 2015թ.

«Գրադարանային միջավայրը ընթերցանության կազմակերպման ու խրախուսման միջոց»: Դիպլոմային աշխատանք: Ընթերցավար՝ Անժելիկա Մանուկյան, 2015թ.

## **ՄԵԾԵՐԸ ԳՐՔԻ, ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

### **ԹՈՒՄԱՆՅԱՆՆ՝ ԸՆԹԵՐՑՈՂ**

Քանի որ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը հայոց գրական մշակույթի գագաթն է, և նա մեր ամենաազգային գրողն է, ուրեմն, Թումանյանը նաև հայ ժողովրդի համար լավագույն գրքեր ստեղծողն է եղել, ու դա նրա գլխավոր առնչությունն է գրքի հետ: Իսկ գիրք գրելու համար պետք է լինում նաև գիրք կարդալ: Եվ գրքի հետ Թումանյանի հաջորդ առնչությունը վերաբերում է Թումանյան ընթերցողին: Բանաստեղծ ծնվո՞ւմ են, թե՞ դառնում: Եվ մեկը, և մյուսը: Նա, ով ծնվում է բանաստեղծ, իսկական բանաստեղծ, ունենում է երկնային շնորհ, որը հետո բացահայտվում է, իր մեջ անդրադարձնում նաև այլոց տաղանդների արտահայտությունները, որոնք մարմնավորված են գրքերում: Իսկ նա, ով դառնում է բանաստեղծ, մեծ մասամբ գրքերի, այսինքն՝ այլոց գրածների օգնությամբ է դառնում: Թումանյանը ծնվել էր բանաստեղծ. «Ճոխ պարզև եմ առել վերուստ», - գրել է նա իր մասին և ավելացրել. «Զարմանում եմ, թե՞ ո՞վ Շոայլ, ինչքան շատ ես ինձ տվել»:

Ոսկու հատիկները հանում են մեծ քանակով ոսկեբեր ավազ լվանալով: Բայց

հազվագյուտ դեպքերում գտնվում է մաքուր ոսկու մեծ կտոր: Այսպիսին է Թումանյանի ստեղծագործությունը: Եվ չնայած նրա ներշնչումները բնածին էին, իսկ ստեղծագործական ատաղձի հիմնական մասը անմիջականորեն կյանքից, ժողովրդից առնված, բայց և հայ գրականության մեջ նա աչքի է ընկնում նաև որպես մեծ ընթերցող, գրքի գրականության, մամուլի հետ սերտորեն առնչված, դրանց վրա նկատելի ազդեցություն թողած գործուն հեղինակ: Ապա՝ հիշենք, որ Թումանյանը նաև հրապարակախոս էր, գրաքննադատ, գիտնական, իսկ այս բնագավառներում գործելու համար գրքի, մամուլի դերը էական է, հաճախ վճռական:

Թումանյանը Ներսիսյան դպրոցը թողեց չավարտած: Այդպես ուրիշ մեծ գրողներ էլ անավարտ են թողել իրենց ուսումը. հիշենք թեկուզ Մ. Լերմոնտովին, որ չավարտեց Մոսկվայի համալսարանը կամ Լ. Տոլստոյին, որ չավարտեց Կազանի համալսարանը: Բայց Թումանյանի երկերը, թարգմանությունները, հոդվածները, աշխատությունները, նամակներն ընթերցելիս մեծապես զարգացած, բազմատեղյակ մարդու լայն մտահորիզոն ենք զգում: Պարզ է, նա իր կրթությունը շարունակել է ընթերցանությամբ:

1914 թ. գրված «Շունը» պատմվածքում իր 12-13 տարեկան հասակի վերաբերյալ Թումանյանը հետևյալն է հիշում. «Վաղուցվա խոսք եմ ասում, մեր էն բարի ուսումնական ծանոթն էլ վաղուց մեռել է: Նրանից հետո ես մեծացա, զանազան գրքեր կարդացի, նոր-նոր բաներ իմացա ու սովորեցի: Ու ինչքան սովորեցի, էնքան էլ տեսա, որ ես շատ ու շատ քիչ բան գիտեմ»: «Նրանից հետոն» այստեղ նշանակում է 12-13 տարեկանից հետո, այսինքն՝ դրանից հետո բավական ժամանակ անց է «զանազան գրքեր կարդացել»:

Փաստերը ցույց են տալիս, որ Թումանյանը գործուն ընթերցող է դարձել 1880-ական թվականների վերջերում: Ահա թե նա ինքն ինչ է գրում այդ մասին «Մ. Նալբանդյանի հիշատակին» (1916 թ.) հոդվածում. «Շատերը կհիշեն, թե ութսունական թվականներին ինչքան քիչ էր գիրքը Թիֆլիսում, և ինչ դժվարությամբ էր ընթերցանության գիրք ճարվում՝ թե հայերեն, թե ռուսերեն: Դժվար էր մանավանդ ինձ նման մի օտարական պատանու համար»:

1890-ական թվականներին Թումանյանն արդեն անհազ ընթերցող էր իր հերոսներից մեկի մասին այդ թվականներին նա գրել է այսպես. «Գլխի վերևը տխուր պատկերներ, Գրքեր ու գրքեր իր շուրջը բոլոր»: Կարծես իրեն է նկատի ունեցել: Իսկ քիչ ավելի ուշ (1901 թ.) գրած «Պոետն ու Մուսայի» մեջ իր մասին այսպես է արտահայտվել. «Իսկ ես, ախ ես, Միշտ խենթ էսպես, Գիշեր-ցերեկ թերթում գրքեր...»:

Ամեն մի գրողի կյանքում էլ գիրքը դեր կատարում է: Բայց եղել են մեծ գրողներ, որոնք միաժամանակ, եթե կարելի է ասել, գրքի սպասարկում էին: Խոսքը վերաբերում է գրող գրադարանավարներին: Հայտնի է, որ մի շարք խոշոր գրողներ, ինչպիսիք են, ասենք, գերմանացի Լեսինգը, ռուս Կոչիլովը, հայ Շիրվանզադեն գրադարանային աշխատողներ են եղել: Բայց բնավ հայտնի չէ, որ Հովհաննես Թումանյանը նույնպես

իր կյանքից շատ ժամանակ է տրամադրել հենց միայն գրադարանին: Ճիշտ է, Թումանյանը աշխատել է ոչ թե պետական կամ որևէ ընկերության, այլ իր սփական գրադարանում: Իսկ դա այն ժամանակների համար խոշոր գրադարան էր՝ իր ավելի քան 8000 կտոր գրքերով: Թումանյանն, ինքն է ընտրել և գնել այդ ամբողջ գրականությունը դասավորել այն ըստ բովանդակության, քարտագրել, ընթերցանության համար գրքեր տվել ծանոթներին, մի խոսքով, եղել է իր գրադարանի աշխատողը:

Նա իր գրադարանն անվանում էր համալսարան՝ այնքան բազմաբովանդակ էր այն, հարուստ հայ ժողովրդի, աշխարհի այլ ժողովուրդների կյանքին, պատմությանը, իմաստասիրությանը, արվեստին նվիրված գրքերով, գեղարվեստական և բանահյուսական գրականությամբ: Եվ, իհարկե, այդ ճոխ գրադարանի առաջին և գլխավոր ընթերցողն ինքը Թումանյանն էր: Նրա գրադարանի բազմաթիվ գրքերի մեջ Թումանյանի ձեռքով արված նշումներ կան, որոնք ցույց են տալիս, թե ինչ գործուն ընթերցող է եղել մեր մեծ բանաստեղծը: Նա իր ծով գիտելիքները ձեռք է բերել իր սեփական համալսարանում, այսինքն՝ գրադարանում:

Համառոտակի հիշենք նաև, թե իր հրապարակախոսական ու գրաքննադատական գործունեության ընթացքում ինչ առիթներով է բանաստեղծը խոսել, եթե կարելի է այսպես ասել, գրքային հարցերի վերաբերյալ կամ ինչպիսիք են եղել Թումանյանի մատենագիտական բնույթի մտածումներն ու գործունեությունը:

Նախ հիշենք, որ Թումանյանը գրահրատարակչական հոգսեր է ունեցել: Հայտնի է նաև նրա առնչությունները Կովկասյան հայոց հրատարակչական ընկերության հետ: Թումանյանը դեռ պատանեկան հասակում աշխատել է այդտեղ: Ապա՝ մի քանի առիթով խորհուրդներ է տվել այդ ընկերությանը նրա գործունեության վերաբերյալ՝ հայության համար ինչ է անհրաժեշտ հրատարակել, ինչպիսին պիտի լինեն հայերեն թարգմանված երկերը, նրանց լեզուն և այլն: Ուրիշ առիթներով դրել է կովկասյան հանրագիտարան կազմելու և հրատարակելու, եվրոպական մակարդակով լիակատար հայոց պատմություն ստեղծելու, հայերեն գրական ամսագիր ստեղծելու հարցերի վերաբերյալ:

Թումանյանը մի քանի հոդվածով հանդես է եկել հայ տպագրության 400-ամյա հոբելյանը նշելու կապակցությամբ: Նա փորձել է այդ հոբելյանն օգտագործել որոշ օգտակար ձեռնարկումներ անելու համար: 1911թ. երբ հոբելյանը տոնելու նախապատրաստություններ էին կատարվում, Թումանյանը գրում էր. «Եվ ահա առաջներս է այդ մեծ կուլտուրական տոնը՝ ընդհանուր հայոց գրականության տոնը, մեծ հիշատակների, հոյակապ գործերի, փառավոր անունների տոնը: Տոնը այն ամեն նվիրականի ու վսեմի՝ ինչ որ կարողացել է տալ և տվել է հայ ազգը: Եվ անկասկած շատ խոսք կլինի այդ տոնի նշանակության ու հայոց գրականության վրա. բայց չորս հարյուր տարուց հետո հայոց տպագրությունը, հայոց գրականությունը ինչ խնդիրներ, ինչ հոգսեր է հանում մեր առաջ»:

Թումանյանը գրքի գիտակ էր, մատենագետ: Որպես նրա մատենագիտական աշխատանքի մի օրինակ կարելի է բերել թեկուզ «Ոչ գրական ոչնչությունները քննադատ» հայտնի հոդվածում (1909 թ.) նշված գրականության ցանկը, որը վերաբերում է բանաստեղծի միայն «Ծիտը» և «Չախ-չախ թագավոր» հեքիաթների բանահյուսական աղբյուր-տարբերակներին:

Գրախոսականներն էլ մատենագիտության մի տեսակ են: Թումանյանը, ինչպես գիտենք, բավական շատ գրախոսություններ է գրել, մեծ մասամբ հանգամանակից: Հիշենք մի քանի կարևորները՝ երկու գրախոսություն «Համլետի» երկու թարգմանությունների (Հ. Մասեհյանի և Գ. Բաբազյանի), Ն. Մառի «Հայ-վրացական բանահյուսության բնագրերի և ուսումնասիրությունների», Հ. Աճառյանի «Գավառական բառարանի», Պ. Մոճոռյանի «Բանաստեղծություններ» գրքի մասին և այլն: Բոլոր դեպքերում Թումանյանը լավ, պետքական հրատարակությունը հստակորեն տարբերել է անհաջողից և ըստ իր սկզբունքի՝ լավը գնահատելուց հետո թերություններ է նշել, իսկ վատը մերժել գլխովին (օրինակ, Պ. Մոճոռյանի գիրքը): Թումանյանի բոլոր գրախոսականներում այսօր մենք զգում ենք գրքի խոշոր գիտակին ու ընթերցողին:

Թումանյանը լինելով հայկական դպրոցի լավագույն դասագրքեր կազմողներից, մամուլում հաճախ ելույթ է ունեցել նաև դասագրքերի կազմման, իր երկերը դասագրքերում աղավաղելու, այլ կարգի թերությունների հարցերով:

Մի քանի անգամ բանաստեղծն անդրադարձել է հայ մամուլի խնդիրներին՝ և դարձյալ սկզբունքային դիրքից՝ հրապարակվող վատ ելույթների դեմ անզիջում: Երբ մարդը տպագիր խոսքն օգտագործում է անձնական կամ խմբակային շահի միտումով կամ երբ մամուլը դառնում է մարդու ներքին չարությունը, չկամությունը դրսևորելու միջոց և կամ երբ մեկը մամուլում որպես գիտուն արտահայտվելով տարրական հարցերի վերաբերյալ չգիտություն է ցուցաբերում, տպագիր խոսքը, իրոք որ, դառնում է չարիք: Ահա Թումանյանը Ջ. Ռյոսկինի և Լ. Տոլստոյի նման նաև այսպիսի ընդհանրացում է արել. «Տպագրական խոսքը դարձել է մի չարիք, ապականում է ուղեղները և զգացմունքները կամ, ավելի ճիշտ՝ ապականված ուղեղներն ու զգացմունքները խոսում են տպագրական խոսքի միջոցով»:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը տպագիր խոսքի՝ մամուլի, գրքի կույր ջատագով չի եղել: Իրոք, տպագրությունը մարդկության մեծագույն գյուտերից է, բայց տպագրության միջոցով լավի հետ բազմացվում և տարածվում է նաև վատն ու վնասակարը և՛ ավելի մեծ քանակով, քան տպագրության գյուտից առաջ: Գիրքը, մամուլը արժեք ունեն, բանաստեղծի կարծիքով, այնքանով և այն դեպքում, երբ բարին ու պետքականն են ամփոփում իրենց մեջ: Ավելին, լավ գրքի գաղափարը պետք է դուրս գա գրքից, կյանքում իր դերը կատարի, փոխի մարդկանց դեպի բարին և ոչ թե մնա գրքի մեջ: Իր մի բանաստեղծության մեջ Թումանյանը գրում է. «Քրիստոս հարյավ, երկինք գնաց, Երկրում թողեց պատվերներ: Բայց պատվերը գրքում մնաց,

Եվ աշխարհը հեծում է դեռ»: Ուզում է ասել, որ մարդիկ բարի պատվերները գրքում կարդում են, բայց չեն փոխվում, պատվերը գրքում է մնում: Թումանյանը գրքի, տպագիր խոսքի բարի ներգործության, բարի արդյունքի գաղափարախոսն էր:

Բանաստեղծը քննադատել է նաև սեփական ժողովրդին՝ հաճախ լավ գիրքը վատից տարբերել չկարողանալու համար: Օրինակ. «Գրականական մագանդա» բանաստեղծության մեջ ծաղրում է Երազագրքի նման անիմաստ հրատարակությունը արժեքավոր գրքերից գերադասելու տարածված ճաշակը: Կես կատակ նա գրում է. «Եվ գրքերից՝ միշտ հայ ազգը Երազագիրքն է շատ հարգում» ու հետո շարունակում.

Ա՛խ, եթե մենք գեթ մի-մի հատ

Երազագիրք հորինենք,

Այնուհետև գրչով ապրող

Կարգին գրող կըլինենք:

Էլ չենք ծախիլ մեր գրքերը

Ութսունհինգ տոկոսով,

Կոպեկ-կոպեկ առնել փողը,

Այն էլ՝ կանխիկ միայն կիսով:

Թումանյանը լավ գիտեր մեսրոպյան գրի ու գրքի դերը հայության ազգապահպանման գործում: Նա, միաժամանակ, հայ գրի գործադրումը՝ հայերեն գրքի հրապարակումն ու ընթերցումը հայության կյանքի, գոյատևման կարևոր նշանն էր համարում: «Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց» բանաստեղծության մեջ (1913 թ.) կարդում ենք.

Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց

Երկար դարերով, ահեղ հարվածով,

Թեպետև Էսպես ցրեց, տարածեց,

Ձրգեց հոգեհող, փրռեց ծովեծով,

Վկա է սակայն բովանդակ երկիր,

Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,

Եվ ուր հասնում է հայի դիրքն ու գիր -

Կենդանի է դեռ հայության ոգին:



Ապա շարունակության մեջ Սահակին ու Մեսրոպին անվանելով «Հոյակապ սյուներ հայության ոգու» բանաստեղծությունն ավարտում է այսպես.

Եվ թող իմանա բովանդակ երկիր -

Ապրում է անմեռ հայությունը հին,

Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

Թումանյանի՝ իբրև անդադրում ընթերցողի, գրքեր ուսումնասիրողի մասին դժվար չէ գաղափար կազմել նաև նրա գրականագիտական, լեզվաբանական, պատմական բնույթի հոդվածներից՝ կատարած թարգմանություններից: Սայաթ Նովայի ու Նաղաշ Հովնաթանի, Նարեկացու և Քուչակի, Աբովյանի ու Աղայանի, Շեքսպիրի և Սերվանտեսի, Պուշկինի ու Լերմոնտովի, Տոլստոյի և Բրյուսովի, Բաֆֆու ու Ծերենցի, Նալբանդյանի և Տերյանի, Արևելքի բանաստեղծների և ուրիշ շատ դասականների մասին Թումանյանի գրավոր ու բանավոր ելույթները, տարբեր առիթներով արած բազմաթիվ դիտողությունները, Արևմուտքի և Արևելքի ամենատարբեր հեղիակներից նրա կատարած թարգմանությունները, նրա լեզվաբանական, պատմական, թատերական մտածումներն այսօր մեզ ներկայացնում են հայոց ամենաժողովրդական բանաստեղծի գրքային մեծ աշխարհը:

Այսպես, Թումանյանն իր բանաստեղծական «վերուստ ասած շնորհի» հետ ունեցել է նաև ընթերցողի շնորհ: Մեծ բանաստեղծ լինելու հետ եղել է մեծ ընթերցող:

Թումանյան բանաստեղծն ու արձակագիրն այսօր անբաժան է ամեն մի հայագիր ու հայախոս մարդուց: Թումանյանի երկերն ամենից ավելի են մեր ձեռքի, մեր սեղանի գրքերը, նաև մեր մանուկների, աշակերտների գրքերը: Իսկ եթե ինչ-որ չափով այդպես չէ, ապա պետք է ջանքեր թափել որ այդպես լինի, քանի որ երևի հայ գրողներից Թումանյանն է այսօր ամենից ավելի մեզ սովորեցնում սեր, գուր, բարություն, հանդուրժողականություն: Սրա հետ միասին, Թումանյանից է, որ մենք կանոնավոր, համակարգված ու նպատակասլաց ընթերցող լինելու օրինակ կարող ենք վերցնել:

*Ռաֆայել Իշխանյան, 1991թ.*

**ԳՐՔԻ ՖԵՆՈՍԵՆՆ ԻԲՐԵՎ ՇՐՋԱՓՈՒԼԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՆ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ  
ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Չարենցի պոեզիայի այսպես կոչված՝ «գրքայնության» (դրական իմաստով), ինչպես նաև՝ նրա հրատարակչական գործունեության մասին չարենցագիտության մեջ բավականին խոսվել է, նշվել է նրա մեծ ընթերցասիրության, ընտիր գրադարանի, պոլիգրաֆիական զարմանալի գիտելիքների ու նուրբ ճաշակի մասին: Փաստվել է, որ «Մի քանի տարի՝ 1928-ից մինչև 1933 թվականը, վարելով Պետական հրատարակչության գեղարվեստական բաժինը, Չարենցը հայտնի է դարձել իբրև Հայաստանի ցայսօր *չգերագանցված հրատարակիչը*, հրատարակչական գործի մեջ դնելով և՛ իր անսպառ եռանդը, և՛ անթերի ճաշակը, և՛ գեղարվեստական մեծ կուլտուրան»[1], ինչպես նաև՝ որ «Գիրքը, գրականությունը, մշակույթը Չարենցի ոճի տարրերն են»[2]: Դրանք, սակայն, հիմնականում առնչվում են Չարենցի անհատականության ներկայացմանն ու բացահայտմանը՝ ըստ էության՝ շրջանցելով այն հարցը, թե ինչպե՞ս է Չարենցի՝ գրքի հանդեպ ունեցած պաշտամունքի հասնող մեծ սերը դրսևորումներ գտել նրա պոեզիայում:

Չարենցն ինքը «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Տաղեր և խորհուրդներ» բաժնի «Տաղ՝ ձոնված գրքերին» քերթվածում այնպիսի համապարփակությամբ ու բազմակողմանիորեն է սահմանում գիրք հասկացության գիտական-հոգեբանական-զգացական պարագրկումները, որ գրքի, նույնիսկ նորագույն բառարանային սահմանումները[3], այդ համապատկերում երբեմն անիմաստ են հնչում: Եվ դա բնավ էլ ոչ այն պատճառով, որ գրքի այդպիսի հատկանիշները Չարենցն անտեսում էր: Ընդհակառակը՝ Չարենցը գիրք հասկացությունն ընկալում ու մեկնաբանում է ոչ միայն իր բովանդակության (տեքստի), այլև, նույնիսկ նախևառաջ, պոլիգրաֆիական թեկուզև ամենապարզունակ հատկանիշների (տպագրություն, կազմ և այլն) համատեքստում:

*Գրքեր կան, որ խոժոռ են ու խստադեմ,  
Ինչպես ուսուցիչը կամ առաջնորդը, -  
Եվ այնպիսի գրքեր ես գիտեմ,  
Որ համրերի նման անհաղո՛րդ են:  
Աղջիկների նման սեթևեթ  
Կան կարկաչուն գրքեր, որ հանդիպում են մեզ  
Հրապուրում, գերում – և մոռացվում հավետ... (4, 377)*

Կրկին մեկնելով «Տաղ՝ ձոնված գրքերին» քերթվածից, ի սկզբանե պետք է նշել, որ գրքի ֆենոմենը Չարենցի պոեզիայում միշտ չէ, որ կապվում-հա-րաբերվում-առնչվում է միայն գրականությանը: Գիրքը նրա ընկալմամբ ամփոփումի, միատեղումի ու դրանց շնորհիվ՝ պահելու, փոխանցելու, ավանդելու գործառույթներով է նախևառաջ հատկանշվում: Այլ խոսքով՝ գրականությունը կամ գիրքը ընդհանրապես, դեռևս գիրք չէ: Կամ՝ գիրքը պարտադիր գրականությունն չէ (այդ առումով խոսուն է «Տաղ՝ ձոնված գրքերին» քերթվածի հետևյալ հղումը՝ «Ես սիրում

եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին, // Թե արվեստով գրված, թե անարվեստ» (4, 376): Առաջինի դեպքում ասվածի գուցե անուղղակի ապացույցն է այն, որ Չարենցի 1910-ական թվականների պոեզիայում գրեթե իսպառ բացակայում է **գիրք** բառն անգամ, եթե բացառություն անենք այդ շրջանում գրված և միայն 1957-ին տպագրված «Հրո երկիր» շարքի բանաստեղծություններին, ըստ էության, հրատարակիչների կամ տեքստաբանների կցած «գրքից» հավելումը: Այդ շրջանում Չարենցը գրականությանն ու հենց իրեն ու իր պոեզիային հղումներ, մեկնաբանումներ է կատարում «երգ», «երգեր», «երգերս», «տող», «տողեր», «տողերս» մասնավորություններով, երբեմն՝ հիշատակում ժանրաձևեր (ասենք՝ պոեմ): Սա, ըստ ամենայնի, ինքնագնահատականի մի ձև է նաև, որն արտահայտվում է բերվածների համաբանությամբ՝ «գիրք», «գրքեր», առավել ևս՝ «գրքերս» ձևերի կիրառումից խուսափելով: Այս առումով հատկանշական է, որ «Չարենց-նամե» պոեմում, որտեղ գիրք հասկացությունն առաջին անգամ Չարենցի պոեզիայում երևաց կոնկրետ վերնագրերի տեսքով ու բացառապես սեփական գրքերի վերնագրերի (ինքնակենսագրական այս պոեմի համատեքստում թերևս այլ կերպ լինել չէր էլ կարող)՝

*Օ, երգե՛ր իմ –*

*Առաջի՛ն,*

*Առաջի՛ն...*

«Երեք երգ»... (2, 160)

Կամ՝

*«Ծիածանը»...*

*Արև՛ն է այնտեղ –*

*Նայիրյան թախիժի միջից... (2, 163),*

Չարենցը հետևողականորեն խուսափում է դրանք գրքեր անվանելուց և բավարարվում է բնութագրումներով: Իսկ ահա «Դանթեական առասպել» պոեմի առանձին հրատարակության մասին գրում է հետևյալը.

*Ու «Գիրք» փոշոտ վիտրինում*

*Մի փոքրիկ բրոշյուր դրեց... (2, 161):*

Այստեղ նույնպես գիրք հասկացությունից ինքնաքննադատաբար խուսափելու միտում կա՝ **բրոշյուր**՝ թերևս ոչ լիարժեք գիրք, ձևի կիրառմամբ:

Գիրք հասկացության առաջին կոնկրետ, կամ բառացի հղումը Չարենցի պոեզիայում հանդիպում ենք «Էմալե պրոֆիլը ձեր» շարքում:

*Առել եմ գիրքը Ձեր  
Ու նայում եմ նրան:  
Ձգվում են բիլ զծեր  
Գրքից՝ հոգուս վրա... (1, 184)*

Արմենուհի Տիգրանյանին ուղղված այս բանաստեղծության մեջ Չարենցը մի կողմից ընդգծում է գրքի այն հատկանիշը, որը կյանքում պայմանավորում է **գրքայնություն** (բացասական իմաստով), կամ Սուրեն Աղաբաբյանի բնորոշմամբ՝ «...ստեղծում է էմալե գեղեցկության մի այնպիսի հրաշակերտ պրոֆիլ, որն ինչքան ավելի կոնկրետանում է, այնքան հեռանում է կենդանի գեղեցկությունից, այնքան ուժեղանում է անբավականությունը»[4]: Մյուս կողմից՝ այն հատկանիշը, որով գիրքը դառնում է դրա հեղինակի ներաշխարհը լավագույնս ճանաչելու միջոց: Այլ խոսքով՝ արժևորվում է ոչ միայն կամ ոչ այնքան գրականության կամ դրա արժեքայնության դիտանկյունից: Իսկ թե ինչու հենց գիրքը և ոչ թե ասենք՝ Չարենցի շատ սիրած ու կիրառած՝ երգը, ապա այն պատճառով, որ առանձին երգը մասնավոր հուզական-զգացական-հոգեբանական պահի արտացոլում է, իսկ գիրքը՝ մի շարք կամ բազմաթիվ երգերի պարագրկում, որ օգնում է ունենալ ամբողջական պատկեր.

*Եվ անսահմա՞ն, անծի՞ր  
Թրթիռներից երգի  
Հյուսվի պրոֆիլը Ձեր  
Եվ սրտամոք երգի... (1, 184)*

Այս առումով՝ եթե խորությամբ կամ ուշադրությամբ քննենք Չարենցի 1910-ական թվականների ժողովածուները, ապա կհամոզվենք, որ դրանք, լինելով գրքեր, այնուամենայնիվ, խաղարկում են Չարենցի հոգու այսպես կոչված՝ մի լարը: Այլ խոսքով՝ մեծ առումով դրանք, իրոք, երգեր են: Ուստի՝ «Տաղարան» ժողովածուն այդ համապատկերում դառնում է շրջադարձային Չարենցի ստեղծագործության մեջ այն իմաստով, որ նրանում թեմատիկ-զգացական մասնավորումները, Խորեն Սարգսյանի ձևակերպմամբ՝ վերաձևվեցին պատկերային-առարկայական շարժման՝ երազից դեպի գոգալ, գոգալից դեպի մարդ, մարդուց դեպի հայրենիք, հայրենիքից դեպի բովանդակ աշխարհ[5]: Այս տրամաբանությամբ՝ ժողովածուի «Տաղարան» վերնագիրն էլ պատահական չէր: Նախ՝ այն անուղղակիորեն ի ցույց է դնում ապրումների ու թեմաների բազմազանություն, մյուս կողմից՝ «Տաղարան» ասվածն ինքնին ամփոփող, միատեղող գիրք է ենթադրում՝ ժանրային տիրույթում քննվելուց առաջ կամ գատ:

Ահա այսպես՝ շատ զգուշորեն ու ենթատեքստային հուշումներով է Չարենցը մոտենում սեփական ժողովածուները գրքի ֆենոմենի տարածության մեջ ներառելուն: «Տաղարանում» երեք անգամ հանդիպում է գիրք բառը: Նախ՝ ԺԱ տաղում (երկու

անգամ)՝ «Հագար ու մե գիրք կարդացի – իսելացի գիրք չտեսա...» (1, 235), ապա՝ եզրափակիչ՝ Ի տաղում՝ «Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր...» (1, 246): Առաջին հայացքից հակասական վերաբերմունք ցուցանող այս կիրառումներն իրականում պայմանավորված են մի կողմից՝ գիրք հասկացության Չարենցի ընկալած բազմագործառնականությամբ (ֆունկցիոնալությամբ), մյուս կողմից՝ «Տաղարանի» հոգեվիճակային կամ Խորեն Սարգսյանի ասած՝ պատկերային-առարկայական շարժման տրամաբանությամբ: ԺԱ տաղը սիրած կնոջից մերժված, աշխարհից ու մարդկանցից հիասթափված անհատի հոգեվիճակի արտացոլում է, իսկ Ի տաղը՝ հանրահայտ «Ես իմ անուշ Հայաստանին»՝ «Տաղարանի» հոգեբանական բարձրակետը, հայրենիքի պատմության ու ճանապարհի ոգեշունչ խտացումն է՝ մշակութաբանական, այդ թվում՝ հայ գրքի ու գրականության համապարփակ արժևորումներով:

Չարենցի՝ գրականագիտության մեջ «ֆուտուրիստական» կամ «ձախ մոլորությունների» շրջան[6] ձևակերպված ստեղծագործական փուլը փոքր-ինչ առկախեց նրա պոեզիայի՝ գրքի ֆենոմենի ներկայացման ներստեղծաբանական զարգացումները: Թերևս այդ առումով ուշարժան է Երեքի դեկլարացիայի հետևյալ դրույթը. «Դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և **գրքերից դեպի կենդանի խոսքը**» (6, 554, ընդգծումն իմն է – Ա.Ն.): Սա գրքի ֆենոմենի մեկ այլ, այն է՝ քարացածության, դոգմատիզմի ընկալումն էր, որն, ի դեպ, հետագայում նույնպես դրսևորվեց, այս անգամ՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի այսպես կոչված՝ «ազգային նիհիլիզմի» ու միջնադարյան հայ գրականությանը չարենցյան վերաբերմունքի արձարծումներում:

Թե՛ Երեքի դեկլարացիան, թե՛ այդ շրջանում Չարենցի գրած տեսական հոդվածներն ու հրապարակային ելույթները («Ի՛նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը», «Երկու աշխարհի սահմանագծում» և այլն) վկայում են, որ Չարենցը ձգտում կամ փորձում էր սկսել սկզբից: Գուցե այդ տրամաբանությամբ է, որ Չարենցը գիրք հասկացության կիրառումներում կրկին վերադառնում է իր սկզբին՝ թողնելով «Տաղարանով» հաղթահարած ներքին տաբուն: Այսինքն՝ կրկին գիրք բառի իսպառ բացակայություն, «երգ», «երգեր», «երգերս», «տող», «տողեր», «տողերս»-ի առատություն, միայն վերնագրերի հիշատակում և այլն: Ընդ որում՝ եթե «Ռոմանս անսեր» պոեմում սեփական ժողովածուների վերնագրերի հիշատակումներ են՝

*Ճի՛շտ է.*

*շաղել եմ «Տաղեր»*

*«Ծիածան»*

*Բայց – թքել եմ արդեն դրանք դեն (ՄՉԵ, 289), -*

ապա «Կապկազ» թամաշայում, այնուհետև՝ «Կոմալմանախ» ժողովածուի «III ինտերնացիոնալ – P. K. II.» բանաստեղծության մեջ հիշատակվում են Դերենիկ

Դեմիրճյանի, Գերհարդ Հաուպտմանի, Կարլ Մարքսի գրքերի վերնագրերը, ընդ որում՝ ենթատեքստում նախորդները հակադրված են վերջինի հետ.

*Ինչերի ղ է էսօր հարկավոր*

*«Դատաստան»,*

*«Զանգ ջրասույզ»... (3, 61)*

Եվ՝

*Մեր կրոնը կոչվում է – «Կապիտալ» (3, 142):*

Այսպիսով, ստացվում է ուշագրավ մի պատկեր, ըստ որի՝ **գիրք հասկացությանը Չարենցի վերաբերմունքով ու մեկնաբանություն-կիրառությունների բնույթով կարելի է հետևել նույնիսկ նրա ներստեղծաբանական փուլերի ներքին զարգացումների օրինաչափությանը**: Այս առումով՝ չափազանց ուշագրավ է նաև այն փաստը, որ իր ստեղծագործության՝ 1920-ական թվականների միջանկյալ շրջանում (մինչ «Էպիքական լուսաբաց» ժողովածուն), Չարենցը միայն մեկ անգամ է օգտագործել գիրք բառը՝ «Էլեգիա՝ գրված Վենետիկում» ստեղծագործության մեջ, այն էլ՝ հերթապահ կիրառումի սկզբունքով, երբ դիրքորոշումը բացարձակ չեզոք է և չկա որևէ կարգի մեկնաբանություն կամ վերաբերմունք.

*Հյու ու համր նրա խոսքին*

*Ու շարժումին նրա մի մատի –*

*Ջրօրհներից օ, մինչև Ջատիկ –*

*Դառնում է շուրջը կյանքը «ազգի»:*

*Դառնում են շուրջը գրքեր, թերթեր,*

*Դպրոց, թատրոն ու եկեղեցի... (2, 256)*

Հենց այդ հերթապահ կիրառումով էլ Չարենցը մատնացույց է անում փաստը, թե այդ ժամանակահատվածն իր համար միջանկյալ ստեղծագործական շրջան է:

«Էպիքական լուսաբաց» ժողովածուում, որով նշանավորվեց Չարենցի ստեղծագործության նոր փուլը, նկատելի են էական զարգացումներ, կարելի է ասել՝ հենց ժողովածուի վերնագրի ոգով: Առաջին ուշարժան զարգացումը, որ նաև շրջափուլային նոր անցման ցուցիչ է, այն է, որ **երգ**-ին զուգահեռ շատ են **քնար**-ի կիրառությունները: **Երգ**-ի գործնական կիրառումը, այսինքն՝ երգելը, մեծ հաշվով, կարող է իրականացնել ցանկացած մարդ՝ անկախ իր ձայնային տվյալներից ու կատարողական վարպետությունից կամ նույնիսկ դրա բացակայությունից: Քնար-ի գործնական կիրառությունը, այս դեպքում՝ նվագելը, անպայման վարպետության որոշակի մակարդակ է խորհրդանշում: Այլ խոսքով՝ եթե երգ-ն ու քնար-ը համաբանում ենք ըստ այդ տրամաբանության, ստացվում է, որ «Էպիքական

լուսաբաց»-ում Չարենցը սկսում է կարևորել *բանաստեղծության գիտության* խնդիրը: «Ընթերցող պոետին» բանաստեղծության մեջ դա առավել քան պարզ է ակնարկված.

*Չարմանքո՛վ գուցե դու նայես իմ այս  
Գրքի էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ,  
Հեզնանքով գուցե ժպտաս ու ասես.  
Թե պոետը մեր այս ո՞ւր է հասել...  
Բայց հասել է նա մի ջինջ պարզության,  
Որ ձեռք է բերվում «դժվար վարժությամբ»... (4, 119)*

Այս առումով՝ պատահական չէ նաև, որ «Էպիքական լուսաբաց» ժողովածուն իբրև հղացային արարք միտված է ցույց տալու, թե ինչպես պետք է գրվի բանաստեղծությունը, իսկ դրան հաջորդած «Գիրք ճանապարհի»-ում արդեն գործ ունենք այդ տեսական-գեղագիտական հարցադրումների իրացման, այսինքն՝ արդեն գրված բանաստեղծության հետ:

Երգ-ի ու քնար-ի էութային տարբերությունների մասին Չարենց առաջին անգամ խոսում է Բակունցին ուղղված թղթում («Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից»).

*Կարդա՛ նրանց երգերը՝ աշխատանքին ձոնած,  
Կարդա՛ սրտով մաքուր,– և ինձ ասա՛ հիմա՛  
Աշխատե՛լ են նրանք երբևիցե...  
Գիտե՞ն նրանք արդյոք, որ խոսքը–թո՛ւզն է նույն,  
Որ պահանջում է ջանք ու քրտնաջան լարում,  
Մաքառման շունչ ջերմին, հոգնության տենդ ու թույն,  
Պահանջում է խոնջենք... (4, 35-36)*

Այսպիսի տարբերակումը նոր երանգներ է հաղորդում արդեն գրքի հանդեպ Չարենցի վերաբերմունքին: Եթե կարելի է այդպես արտահայտվել, ապա գրական ընթացքի պարագծում հատկապես՝ Չարենցի համար սկսում են տարբերակվել երգված գրքեր և քնարված գրքեր: Արդեն հիշատակված «Ընթերցող պոետին» բանաստեղծության մեջ Չարենցն այս կապակցությամբ գրում է.

*Մեզ համար արդեն ուղի է անցած  
Համաշեշտ երգի ո՞րքմը նվագուն... (4, 119)*

Այս տարբերակման էությունը հասկանալու համար՝ չմոռանանք ամենակարևորը, այն է՝ որքան էլ «Էպիքական լուսաբաց» ժողովածուի ստեղծաբանական հենքը դասական գրականությունն է, այնուամենայնիվ, այն նախևառաջ ուղղված է գրական կենդանի ընթացքի մաքրագործմանը: Չենթարկվել օրվա հեշտ պահանջումներին, ստեղծել ճանապարհի համար, ճանապարհի տեսլականով:

*...Լե՛նին, այո՛, –Լե՛նին:–Բայց ոչ միտինգային,  
Բայց ո՛չ թմբուկ թեթև, բայց ո՛չ պլակատ:  
Լե՛նին–այսօր արդեն ասել է–գագաթ,  
Ասել է–ներքի՛ն կառուցում քո նոր թեմայի... (4, 145-146)*

Սա անցողիկ երգի ու քնարված գրքի առարկայական հակադրություն է: Ուստի՝ «Ընթերցողիս» բանաստեղծության մեջ արդեն որոշակի տարբերություն կա՝ երգ կոչված մասնավոր դրսևորումի ու գրքի ամբողջականության մասին.

*Գրել եմ ես իմ գրքում  
Այնպիսի՛ տողեր,  
Որ չի գրի իր երգում  
Եվ ո՛չ մի պովետ: – (4, 118)*

«Էպիքական լուսաբացում» Չարենցն ընդգծում է գրքի ֆենոմենի մեկ այլ կարևոր հատկանիշ, այն է՝ գիրքը դառնում է այդպիսին, եթե կայանում է հաղորդակցումը ընթերցողի հետ: Այլ խոսքով՝ ընթերցողը գրքի վերջնական ձևավորման կարևորագույն նախապայմանն է: «Ընթերցողին», «Ընթերցող պոետին», «Ակսելին՝ «Մթնածորը» կարդալուց հետո», «Մակագրություն մի գրքի վրա» վերնագրային ձևակերպումներն ու դրանց բովանդակային պարագրկումները դրան են միտված.

*Չընդունե՛ս, ընկե՛ր, այս գիրքս այնպես,  
Ինչպես աղջիկն է նվեր ընդունում.–  
Սպասում է նա դրան անհամբեր,  
Իսկ ստանալիս–մի կողմ է դնում... (4, 116)*

Իհարկե, գիրք-ընթերցող կապը պահանջում է հարաբերումի որոշակի կերպ ու մակարդակ, հակառակ պարագային՝ արժեզրկվում է ն՛ այդ կապը, ն՛ կապի մասնավորությունները: Գրքի հետ հենց այնպես, հանուն կարդալու հարաբերվելու ֆենոմենն է ծաղրվում «Մի անպտուղ իմաստասերի» էպիգրամում:

*Քեզ հարց եմ տալիս, ո՞վ իմաստասեր,  
Որ բազմապիսի գրքեր ես կարդում.–  
Դու կարդացածդ գլխո՞ւմդ ես բարդում,  
Թե–դրանի՞ց է նստուկդ հաստացել... (4, 168)*

Գրքի գործառնականության քննված բոլոր այս մասնավորությունները գրական ընթացքի հանդեպ մտահոգության արտացոլումներ են, և դա է գուցե պատճառը, որ երբեմն Չարենցը չի խուսափել գրքի ֆենոմենի հասարակացումից՝ առարկայական օրինակներ մատնանշելու միտումով: Եվ սա, գրքի ֆենոմենի շրջափուլաստեղծ գործոնի առումով, հատկանշական է Չարենցի ստեղծագործության այս շրջանի



համար:

Գալով նախընթաց փուլերի որոշ տրամադրությունների զարգացմանը, պետք է ասել, որ «Էպիքական լուսաբաց»-ում Չարենցը թեպետ կրկին խուսափում է սեփական ստեղծագործությունների վերնագրերի հիշատակումից, բայց շատ կարևոր է, որ կիրառում է «իմ գիրքը», «գիրքս» ձևերը, որոնք, անկասկած, հատկապես առաջին շրջանում դիտարկվող ներքին տաբուի այս անգամ արդեն վերջնական հաղթահարումն են ցուցանում: Այլ հեղինակների գրքերի վերնագրերի կիրառման առումով նույնպես ակնհայտ զարգացում կա: Ամենահատկանշականն այն է, որ դրանք երկու անգամ են օգտագործվում Չարենցի ստեղծագործություններում և երկու դեպքում էլ վերնագրերի մեջ՝ «Ակսելին» «Մթնածորը» կարդալուց հետո» և «HOMO SAPIENS»: Ընդ որում՝ այս գրքերի ընտրությունը պատահական չէ, և ենթարկված է «Էպիքական լուսաբաց» ժողովածուի բովանդակային-ասելիքային հղացքին: Ակսել Բակունցի «Մթնածոր» ժողովածուն գրական կենդանի ընթացքի փաստ է, լեհ գրող Ստանիսլավ Պշիբիշևսկու «HOMO SAPIENS» վեպը՝ ժամանակով ստուգված, իբրև գիրք փորձառություն անցած գրական փաստ: Ուստի՝ Բակունցի դեպքում նրա գիրքը դիտարկվում է իբրև երգ, որ դեռ պետք է քնարվի ու դառնա գիրք («Աշխատի՛ր սակայն...», 4, 114), այնինչ՝ «HOMO SAPIENS»-ի պարագային գործ ունենք արդեն գրքի հետ՝ իր ֆենոմենալ բոլոր գործառույթներով («Նա կարդում էր անհագ-ն գնում էր, հանդուգն // Արդեն ինքն էլ այդ «վեհ» ճանապարհով...», 4, 80):

«Գիրք ճանապարհի» ժողովածուն ոչ միայն հայոց պատմության ամփոփումն ու մեկնաբանումն է և մինևույն ժամանակ՝ գալիքի ուղեցույցը, այլև ամփոփումն է Չարենցի ստեղծագործական ընթացքի ու կրկին գալիքի ուղեցույցը: Ուստի՝ նմանատիպ գործառույթներով այդ ժողովածուում հատկանշվում է նաև գրքի ֆենոմենը: Հենց «Գիրք ճանապարհին» արդեն իր վերնագրով ու կառուցվածքով՝ գրքի՝ հարատևող, ամփոփող՝ թե՛ անցյալի, թե՛ գալիքի իմաստով, ֆենոմենի կրողն է: «Էպիքական լուսաբացի» տեսական հանգանակներով Չարենցն ինքն իր համար, իր ինքնադատության ուղղորդող հասկացությունների համաձայն՝ հաջորդ իսկ քայլով նվաճեց մի մակարդակ, որն արդեն կարող էր վստահաբար գիրք անվանել: Այլ խոսքով՝ «Գիրք ճանապարհին» Չարենցի առաջին ու, ավաղ, միակ գիրքն է՝ սեփական կերպընկալմամբ:

«Գիրք ճանապարհիում», անշուշտ, նաև անցյալը վերլուծելու կոլորիտային տրամաբանությամբ՝ չարենցյան բառապաշար է ներմուծվում *մատյան* հասկացությունն իբրև գրքի համարժեք, թեպետ կան բովանդակային պարագրկումների երանգային տարբերակումներ: Մասնավորապես՝ մատյանն արտացոլում է գրքի պատմական փորձառությունը, դարերի ճանապարհը: Իսկ այն փաստը, որ որոշ դեպքերում Չարենցը *մատյան* որակումն է տալիս իր իսկ գրքին («Կարդալով մատյանն այս խորախորհուրդ...», 4, 398, «Դրել էս անմեռ մատյանում քո այս...», 4, 407), բխում է այն վստահությունից, որ այն, իրոք,

ճանապարհի գիրք է՝ ունակ ձեռք բերելու պատմական փորձառություն ու անցնելու դարերի ճանապարհ:

Հայոց «անանցյալ անցյալի» քննադատությանը, որքան էլ զարմանալի հնչի, Չարենցին մղում է հենց գրքի ֆենոմենը: Պատմությունն ընկալելով ու մեկնա-բանելով իբրև գիրք՝ ամփոփումի, պարագրկումի ու ավանդում-փոխանցումի տեսանկյունից (հիշենք Պատմահոր հայտնի ու այս պարագային՝ չարենցյան հայացքներին համաբանվող դժգոհությունը մեր նախնիների անիմաստասեր բարքի վերաբերյալ), Չարենցը մի կողմից՝ գրքի այդ հատկանիշն է ընդգծում, բայց մյուս կողմից էլ՝ վրդովվում է, որ այդ հրաշալի տարածությունը հանիրավի լցրել են անփառունակ հիշատակություններով.

*Մի ձեռք, որ գորություն է տալիս գրչիս—  
Մեր պատմության գրքից դարձնում է մի թերթ  
Եվ բացում է էջը նախավերջին,—  
Եվ հանդես են գալիս—անկերպարանք անդեմ—  
Երեկվա մեր տերերը չնչին... (4, 209)*

Ուստի ըստ Չարենցի՝ պատմությունը մաքրագործելու, անցյալի սխալներից ձերբազատվելու նախապայմաններից մեկն էլ գրքի գործառնականությունը՝ այն է՝ որպես պատմության մեջ հավերժանալու լավագույն գրավական, չշարաշահելն է: Ճանապարհի գիրքը պետք է ձերբազատված լինի այդտեսակ բոլոր գայթակղություններից.

*Եվ ո՛չ մի, ո՛չ մի մատյան  
Չի նշելու երբեք ձեր ցնորքը անհիմն  
Իր էջերում անհիմն ու անհատյալ... (4, 209)*

Գրքի ֆենոմենի տեսանկյունից բացառիկ է «Դեպի լյառը Մասիս» պոեմը, որը երևան է բերում չարենցյան նորանոր մեկնակետեր: Այստեղ գիրքը նախ հիշատակվում է այսպես ասած՝ ընդհանուր թղթերի կարգում.

*Օրագրեր, գրքեր, ձեռագրեր... (4, 214)*

Սակայն ամեն ինչ հստակվում է, երբ խոսքը դառնում է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպին: Այս պոեմում առաջին անգամ Չարենցի ստեղծագործության մեջ կիրառվում ու կարևորվում է «տպագրյալ գիր» հասկացությունը (4, 214): Աբովյանի՝ Չարենցի պատկերած վերջին գիշերվա կասկածն ու տագնապները նախևառաջ վերաբերում են նրան, որ «իր խոսքը կենդանի» հանձնվի «տպագրյալ գրին»: Վերջինն այս դեպքում պետք է հասկանալ գիրք իմաստով, և որով ցույց է տրվում մեկ այլ ֆենոմենալ հատկանիշ՝ Չարենց հույսը դնում է միայն տպագրյալ գրի՝ գրքի վրա, այլ դեպքում՝ նույնիսկ ամենահանճարեղ կենդանի խոսքը պատմության

հովովությունում դատապարտված է մոռացման կամ խեղաթյուրման: Այդ առումով՝ բնութագրական են նաև «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիայում գրքի ֆենոմենի արծարծումները: Այստեղ գրքի՝ իբրև ճշմարտության փոխանցման մասնավորությունն է արտացոլված: Քանի որ թատերգությունն անտիպ է, ձեռագիր, ապա ձեռնմխումներն այդ պարագային ավելի ու ավելի շատ կարող էին լինել: Բայց և ուշագրավ մի հանգամանք. «Դեպի լյառը Մասիս» պոեմի՝ Աբովյանի՝ մի վերջին անգամ «Վերքը» կարդալու ընթացքը յուրովի ժխտում է այդ մտայնությունը: Չմոռանանք, որ այս դեպքում գործ ունենք անտիպ, այլ խոսքով՝ «ոչ տպագրյալ» «Վերքի» հետ: Չարենցը, սակայն, այդ տետրակը գիրք է անվանում: Սա Աբովյանի երկին տրված բացառիկ գնահատական է և վստահաբար՝ Չարենցն այս բացառությունը այլ պարագայի չէր էլ անի, որ բխում է «Վերքի» ոճի ու ոգու խորագույն զգացողությունից:

Որքան էլ «Մահվան տեսիլ» պոեմում Չարենցի գնահատումները հայ ազգային-քաղաքական գործիչների վերաբերյալ կասկածոտ, մերժողական ու նաև՝ ծաղրական է, այնուամենայնիվ, այստեղ էլ գրքի ֆենոմենն ընդգծվում է իր որոշ դրական հատկանիշներով: Բաֆֆու կերպարն, օրինակ, նախնառաջ հատկանշվում է, անհատականանում է նրա «Կայծեր» վեպի գործառույթներով.

*Ակնոցներ ունի նա դրած, և ձեռքին բռնել է մի գիրք... (4, 231)*

Իսկ այն, որ՝

*Վեր թռավ հուզված նա տեղից, շարտեց գիրքը մի կողմ... (4, 232),*

ոչ թե գրքի հանդեպ արհամարհանքի ցուցիչ է, այլ գրքի պատճառած հուսախաբության արտահայտություն:

Գրքի ֆենոմենի քարացածության, դոգմատիզմի ընկալումը, որն ինչպես արդեն նշել ենք, առկա էր Երեքի դեկլարացիայի դրույթներում, էլ ավելի խիստ է դրսևորվում ու քննադատվում միջնադարյան հայ գրականության պարագծում՝ ազգային գաղափարախոսության ու հոգեբանության տեսակետից: «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմում միջնադարյան հեղինակների գրքերը բնորոշվում են իբրև «Սևակող գրքեր՝ մտքերով սին...» (4, 298), «Եվ ձեր դպրության գրքերը սուտ...» (4, 300), որոնց «Նորք» պոեմում հակադրվում են նորագույն շրջանի գրքերը՝ «Մեր գրած գրքերում արդար...» (4, 316):

Այն, որ Չարենցը «Գիրք ճանապարհին» համարելու էր իր «վերջին մատյանը», բնավ պատահական չէր. դրա մեջ մի կողմից՝ գուցե մարգարեական կանխատեսում կար, բայց ավելի շատ, իմ կարծիքով, «Գիրք ճանապարհիով» նվաճված մակարդակի առթած մեծամտությունն էր խոսում: Այնպես որ՝ Չարենցի 1934-37 թթ.

ստեղծագործական շրջանը ոչ միայն խառնիճադանջ օրերի, դարձարձիկ ժամանակների արտացոլումն էր, նաև՝ որոշակի մտավախությունը կրկին գիրք

ունենալու հավանական ձախողման: Ուստի՝ Չարենցի այդ շրջանի անօրինակ ու ապշեցուցիչ բազմազանությունը յուրաքանչյուր տեսակետից ոչ միայն անորոշ ապագայի զգացողություններ են, այլև՝ գրքի որոնումներ:

Եթե այս շրջանը դիտարկենք գրքի ֆենոմենի չարենցյան ընկալումների համատեքստում, ապա կտեսնենք, որ Չարենցը գիրք հասկացությունը շրջանառում է դրա արժեքի վերջնական գիտակցման և դրան մերձենալու հակասական զգացողություններով:

[1] **Սուրեն Աղաբաբյան**, *Եղիշե Չարենց, գիրք երկրորդ, Երևան, 1977, էջ 226* (ընդգծումը բնագրում – Ա. Ն.):

[2] **Ազատ Եղիազարյան**, *Չարենցը և «գրքերի աշխարհը», տե՛ս «Չարենցյան ընթերցումներ», գիրք 7, Երևան, 2002, էջ 77:*

[3] **Զորօրինակ՝ «Գիրք – տեղեկատվությունը ժամանակի ու տարածության մեջ վերարտադրելու և հաղորդելու համար նախատեսված պատմականորեն ամրակայված ձև: Սկզբում եղել է ձեռագիր, հետո՝ տպագիր: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարականի՝ գիրքը պետք է ունենա էջերի որոշակի քանակ՝ 3 մամուլ՝ 48 էջից ոչ պակաս: Գեղարվեստական խոսքի նյութականացման և տարածման հիմնական միջոց է»** (տե՛ս Մելս Սանթոյան, *Գրականագիտական բառարան, Երևան, 2007, էջ 51-52*):

[4] **Սուրեն Աղաբաբյան**, *Եղիշե Չարենց, գիրք առաջին, Երևան, 1973, էջ 280* (ընդգծումը՝ բնագրում – Ա. Ն.):

[5] *Տե՛ս Խորեն Սարգսյան, Տասնամյակների միջով, Երևան, 1966, էջ 185-192:*

[6] *Երկրորդ ձևակերպումն, իրոք, վիճարկելի է, ինչպես փաստառատ ու հիմնավոր վերլուծություններով դա մեկնաբանում է Գրիգոր Պըլտյանը (տե՛ս նրա «Հայկական ֆուտուրիզմ» մենագրությունը (Երևան, 2009)):*

*Նիկողոսյան Արքմենիկ, 2012թ.*

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՄՈՐՏԻՄԵՐ ԱԴԼԵՐ «ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԳՐՔԵՐ»

#### ՆԱԽԱԲԱՆ

- Դե, ի՞նչ, կարդացի՞ք գիրքը:
- Կարդացի, ձերդ գերազանցություն:
- Ինչի՞ մասին կարդացիք, սիրելի՛ս: Պատմեք:
- Մոռացել եմ, ձերդ գերազանցություն:
- Նշանակում է, դուք չեք կարդացել կամ անուշադիր եք եղել... Այդպես չի կարելի:

Ա.Պ. Չեխով

Эврика! Մենք չենք կարողանում ընթերցել: Թվում է, թե հարյուրամյա տարիների ընթացքում գիրքը գիտելիքի կարևոր գործիք է եղել մարդկության ձեռքին:

Հիշելով պատմությունը, թե ինչպես է այն տարածվել սեպագիր արձանագրությունների, կավե աղյուսների միջոցով, ինչպես է պայքարել իր գոյության համար, համոզվում ենք, թե որքան քիչ ենք գնահատում այն, ինչ ունենք:

Արդ ինդուստրիալ դարը նոր հնարավորություն ընձեռեց տեղեկատվության հայթայթման համար: Այժմ մեկը գրում է, մյուսը՝ ներբեռնում, հաջորդը արտատպում՝ ստանալով անկանոն գիտելիքներ: Նշանավոր ստեղծագործություններ ընթերցողն աստիճանաբար իր տեղը զիջում է ինֆորմացիա ձեռք բերող ընթերցողին, որը մտնելով որևէ տեքստ, առանց հապաղելու վերցնում է իրեն մեկնած սերմերը: Հայացքը սահեցնելով տեքստին՝ քաղելով մտքին ու հայացքներին համապատասխանող հատվածներ ու համարելով, գտել է ճշմարտությունը, անմիջապես դուրս գալիս: Ավա՛ղ, դա թափառող ճշմարտություն է: Այն, որպես տեսիլք շուտով հալչում է:

Այս գիրքը գրված է մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը և արդիական է այսօր, գուցե ավելի շատ, քան առաջ: Այսօր համացանցը ավելո՞ծեց հասարակությունը, և մենք տեսանք նորաձևության նոր կտրվածք: Հաճախ են խոսում էլեկտրոնային գրադարանի մասին, որը հարստացվում է թվային գրքերով: Բայց ի՞նչ են ներբեռնում: Ինչո՞ւ: Զգո՞ւմ են այդ գործողությունների ձևականությունը: Գիտե՞ն արդյոք, ովքեր են այդ գրքերը ստեղծել: Հասկանո՞ւմ են արդյոք այն մարդկանց, ովքեր իրենց գաղափարներն ուզում են մեզ փոխանցել, կամ գուցե անցյալն ու ներկան տեղափոխել ապագա:

Ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչի ապակե սրահը ինչ-որ ձևով դառնում է մարդու թշնամին: Որոնման պահանջները չի փոխարինի գրքի հետ լիարժեք շփմանը:

Գրքերը մեր անցյալն են, ներկան և ապագան: Գրականությունը, որը վեր է ժամանակից, ուղեցույց է, որն օգնում է ահնարինը գտնել բարդ աշխարհում: Որքան խորն ենք մենք իրենց ճանաչում, այնքան մարդկության հիշողության մեջ ավելի են ամրապնդվում Արիստոտելի, Պլատոնի, Սենեկայի մասին հիշողությունները: Ինչպես գրում է Լոկկը՝ թեև մենք արածողների կամ գուցե կենդանական ցեղից ենք, բավական չէ, մեր ուղեղը լցրել են բազմաթիվ գրքերով, որոնք, եթե մենք մանրակրկիտ չձամենք ու չմարսենք, մեզ ոչ մի օգուտ չեն տա:

Ինչպե՞ս ընթերցումը դարձնել իմաստալից, ստեղծագործական: Մեթոդաբանությունը մի ամբողջ գիտություն է ստեղծել ու շարունակում է մշակել հայրենական ու արտասահմանյան հետազոտություն: Հայտնի է Տոլստոյի, Կոֆեևայի, Պովարնինի, Ռուբակինի և շատ ուրիշ գիտնականների ու գրողների հսկայական ներդրումը ընթերցանության գիտության մեջ: Անվիճելի է, որ Ադլերի աշխատությունը իր ներդրումն ունի այս բնագավառում: Ընթերցանությունից պետք է հաճույք ստանալ:

Մյուս կողմից էլ ընկնելով ընթերցելու արվեստի գիրկը կորչում է գրքի ընկալումը: Պետք է վերապրել ընթերցած նյութը, որպեսզի հասնի հոգու ակունքներին:

Ընթերցանությունը հաղորդակցման միջոց է: Այն երկխոսություն է հաստատում ընթերցողի և հեղինակի միջև, և ինչպես Սոկրատն է ասել՝ ուղղորդում է ճշմարտությունը որոնելու: Իսկ ճշմարտությունը միշտ փախչում է. Այն հարկավոր է փնտրել ու հասնել նրան՝ ընդունելով նախնիների փորձը, ավելացնելով՝ սեփականը: Չհասկանալով գրածը հնարավոր չէ լիարժեք գնահատել ստեղծագործության խորությունը:

Ընթերցողի մոտ մշակվում է «վերլուծելու և համադրելու կուլտուրա»: Միայն այդ ժամանակ կարելի է սթափ գնահատել իրադարձությունը և արժևորել:

Աղիերը ընթերցանությունը համարում է ոչ թե հերթական զվարճանք, այլ անընդհատ, երբեմն դժվարին ուսուցում, որը մարզելով ուղեղը զարգացնում է տրամաբանությունը: Դա մի պրոցես է, որի ընթացքում մարդու ուղեղը սեփական ջանքերի շնորհիվ հաղթահարում է նոր բարձունքներ: Ընթերցողից պահանջվում է մեծ համբերատարություն, ուժեղ կամք, որի ընթացքում զարգանում է մկանային հիշողությունը: Այն որոշ չափով հիշեցնում է բարձունք հաղթահարելուց ստացած հաճույքը:

Հեղինակը խոստովանում է՝ հիմա եմ հասկանում, որ ոչ թե գիրքը պետք է կարդալ, այլ պետք է կարդալ նրա մասին:

Գրքի ընթերցումը պարտադրանք չպետք է լինի: Երբ խորասուզվում ես գրքի բովանդակության մեջ, այդ ժամանակ նոր հասկանում ենք, թե որքան գրքեր են անցել են մեր գիտակցության կողքով՝ առանց հետք թողնելու: Սեփական ունակությունները զարգացնելու ավելի արդյունավետ միջոց չկա, քան ինքնակրթությունը: Հարկավոր է սովորել միշտ նրանից, ով գերազանցում է քեզ, հասկանալ՝ ինչպես սովորել նրանից:

Սովորել կարդալ, որպեսզի այն օգտագործենք աշխարհընկալման համար, որպեսզի զգանք, մտածենք, վերապրենք, և ինչ-որ ժամանակ սկսենք ինքներս ապրել:

*Ռուսերենից թարգմանությունը՝ Երանուհի Մանթրոպյանի  
Մորտիմեր Աղլեր «Ինչպե՞ս կարդալ գրքեր»/ գրքի նախաբան  
2014թ.*

## ՄՈՐՏԻՄԵՐ ԱԴԼԵՐ

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1

Այս գիրքն այն ընթերցողների համար է, ովքեր չեն կարողանում կարդալ: Գիտեմ, այնքան էլ բարեկիրթ չի հնչում, Բայց ես ամեննին չեի ցանկանում Ձեզ վիրավորել: Իմ պնդումը գուցե հակասական թվա, չնայած ոչ մի հակասություն այստեղ չկա: Այդպիսի տպավորություն կարող է ստեղծվել «ընթերցանություն» բառի բազմիմաստության և մեկնաբանությունների պատճառով: Նա, ով կարդաց այս տողերը, անխոս, կարող է կարդալ այս բառի որոշակի իմաստով: Դուք երևի արդեն հասկացաք, ինչ նկատի ունեմ: Գիրքը ուղղված է նրանց, ովքեր «ընթերցանություն» բառի նշանակություններից միայն մեկով են կարողանում կարդալ: Գոյություն ունեն ընթերցանության բազմաթիվ տեսակներ և այդ կարողության տարբեր մակարդակներ: Այդ պատճառով, եթե ասենք, որ գիրքը նախատեսված է միայն ավելի լավ կամ նոր ձևով կարդալ ցանկացողների համար, ապա հակասություն չի լինի: Ու՞մ է ուղղված այս գիրքը: Որպես օրինակ երկու ծայրահեղություններ բերեմ: Մեզանից ոմանք՝ փոքրիկ երեխաները, մտավոր հետամնաց մարդիկ և այլ անմեղսունակ արարածներ ընդհանրապես չեն կարողանում կարդալ: Բայց կան նաև ընթերցելու արվեստը վիրտուոզ տիրապետողներ. նրանք բոլոր հնարավոր միջոցներով կարողանում են կարդալ: Հեղինակներից շատերի համար նրանք ամենացանկալի ընթերցողներն են: Բայց մեր գրքում խոսքը կարդալու արվեստի մասին է և այն մասին, թե ինչպես սովորենք ավելի լավ կարդալ: Այդ պատճառով այն դժվար թե հետաքրքրի նրանց, ովքեր արդեն մասնագիտացել են: Վերոնշյալ երկու բևեռների միջև մենք կգտնենք սովորական ընթերցողներին՝ մեզ, տառաճանաչ մարդկանց: Մենք արդեն գրագիտության ճանապարհին ենք: Մեզանից շատերը հասկանում են,



որ ընթերցելու վարպետներ չեն: Դրա մասին կարելի է տարբեր կերպ իմանալ, բայց մեր անկարողությունը մենք ավելի ուժեղ ենք զգում, երբ գրեթե ֆիզիկապես է դժվար դառնում կարդալ որևէ բան, երբ այլ մարդ կարդացել է այդ նույն տեքստը և հասկանալ տվել՝ ինչքան շատ բան ենք բաց թողել կամ սխալ հասկացել դրանում: Եթե նման փորձ չեք ունեցել, եթե երբեք ընթերցելիս դժվարություններ կամ հիասթափություն չեք զգացել այն բանի համար, որ արդյունքը չի համապատասխանում վատնած ջանքերին, ապա չգիտեմ՝ ինչպես Ձեզ գրավեմ: Այնուամենայնիվ մեզանից շատերն են ընթերցանության ժամանակ այս կամ այն դժվարությունների հանդիպել՝ չհասկանալով՝ ինչի հետ գործ ունեն կամ ինչպես դրանք հաղթահարեն: Ենթադրում եմ՝ բանն այն է, որ շատերն ընթերցանությունը չեն համարում բարդ գործունեություն: Բայց կարդալու գործընացը, ինչպես յուրաքանչյուր այլ արվեստ, բաղկացած է տարբեր փուլերից, որոնցից յուրաքանչյուրում հնարավոր է կատարելագործել և հղկել կարողությունները: Մենք նույնիսկ չենք ենթադրում, որ գոյություն ունի ընթերցանության արվեստ՝ որպես այդպիսին: Մեզ ավելի հաճախ թվում է, թե կարդալու կարողությունը պարզ և բնական է, ինչպես տեսնել և խոսել կարողանալը: Իսկ այդպիսի կարողությունները ոչ ոք արվեստ չի կոչում:

Անցած ամառ, երբ աշխատում էի այս գրքի վրա, ինձ մի երիտասարդ հյուր եկավ: Նա իմացել էր՝ ինչի մասին եմ գրում, և խնդրեց ինձ բացատրել՝ ինչպես ավելի լավ կարդալ: Ընդ որում, իմ գրուցակիցը ակնկալում էր մի քանի նախադասությամբ պատասխան ստանալ և լուրջ հույսեր ունեւոր, որ ինչ-որ ոչ բարդ բաղադրատոմս իրեն անհապաղ կհասցնի հաջողության: Ես փորձեցի բացատրել, որ ամեն ինչ այդքան հեշտ չէ: Ընթերցանության տարբեր օրենքներ ուսումնասիրելու ու դրանց կիրառությունը ցուցադրելու համար ինձանից մի քանի տասնյակ էջեր պահանջվեցին: Ես պատմեցի, որ թենիս խաղալ սովորողների համար դասագրքի պես մի բան եմ գրում: Սովորաբար այդպիսի ձեռնարկներում քննարկվում են տարբեր հարվածներ իրականացնելու տեխնիկան, դրանց կիրառման տարբերակները և հաջող խաղի ընդհանուր ռազմավարության մշակումը: Կարդալու արվեստը հարկավոր է ներկայացնել նման կերպով:

Ամեն փուլի համար գոյություն ունեն օրենքներ, որոնց պետք է հետևել յուրաքանչյուր գիրք ընթերցելիս:

Երիտասարդը շփոթվեց: Նա կասկածում էր, որ չի կարողանում ճիշտ կարդալ, բայց չէր պատկերացնում՝ ինչքան շատ բան է հարկավոր ուսումնասիրել այդ իրավիճակը շտկելու համար: Իմ գրուցակիցը երաժիշտ էր, այդ պատճառով ես իմ հերթին հետաքրքրվեցի՝ արդյոք բոլոր նրանք, ովքեր ձայներ լսելու կարողություն ունեն, կարողանում են սիմֆոնիա լսել: Նրա պատասխանը կանխատեսելի էր. իհարկե՝ ոչ: Ես խոստովանեցի, որ ինքս էլ չեմ կարողանում ճիշտ լսել երաժշտությունը և խնդրեցի, որ բացատրի՝ ինչպես դա անել երաժշտի տեսանկյունից: Իհարկե, նա կարող էր բացատրել, բայց ոչ երկու բառով: Սիմֆոնիա լսելը հեշտ չէ: Բավական չէ միայն ներկա գտնվելը, կարևոր է ուշադրություն դարձնել նրբերանգների վրա, տարբերել դրանք և իրար մեջ համակարգել: Կարճ պատմել այն ամենի մասին, ինչ

ինձ հետաքրքրում է, երիտասարդը չկարողացավ: Ավելին, անհրաժեշտ էր, որ ես բավական երկար ժամանակ երաժշտություն լսելի, որպեսզի դառնայի փորձառու գնահատող և հասուն ունկնդիր:

Այժմ իմ գրուցակիցն ինձ ավելի լավ էր հասկանում, քանի որ նույնը վերաբերում է նաև ընթերցանությանը: Ես կարող եմ սովորել երաժշտություն լսել, իսկ նա՝ կարդալ նույնատիպ պայմաններում: Կարդալ կարողանալը շատ նման է ցանկացած այլ արվեստի կամ հմտության: Հարկավոր է սովորել և կիրառել որոշ կանոններ:

Անհրաժեշտ սովորություններն ու հմտությունները ձեռք են բերվում բացառապես փորձով: Անհաղթահարելի դժվարություններ չկան, միայն սովորելու ցանկություն և համբերություն է պետք:

Չգիտեմ՝ իմ պատասխանն ամբողջությամբ բավարարեց երիտասարդին, թե՛ ոչ, քանի որ այդ հարցին իր մոտեցման մեջ ես մի կարևոր խնդիր նկատեցի. նա ոչ ամբողջովին էր գիտակցում, թե ինչ է ընթերցանությունը: Համարելով, որ կարդալ կարող է յուրաքանչյուր ոք, քանի որ դա դեռ տարրական դպրոցում է ուսուցանվում, նա դժվար թե կարողանա հասկանալ, որ ընթերցանությունը քիչ է տարբերվում երաժշտություն լսելուց, թեև իս խաղալուց և բարդ գործունեության այլ ձևերից, որտեղ կիրառվում են զգայարաններն ու մտածողությունը:

Վախենամ՝ այս խնդիրը մեզանից շատերին է վերաբերում, այդ պատճառով գրքի առաջին մասում ես մտադիր եմ ընթերցանությունը դիտարկել որպես

գործունեություն: Բայց գիտակցելով, թե ինչ է այն իրենից ներկայացնում, դուք (ինչպես այդ երիտասարդը) պատրաստ չեք լինի անհրաժեշտ ուսուցմանը:

Իհարկե, ես ենթադրում եմ, որ ցանկանում եք սովորել: Բայց չեմ կարող ձեզանից լավ սովորեցնել ձեզ: Ոչ ոք չի ստիպի ձեզ ավելին սովորել, քան դուք ցանկանում եք կամ անհրաժեշտ եք համարում: Մարդիկ հաճախ ասում են, որ կկարդային հաճույքով, եթե իմանային՝ ինչպես դա անեն: Իրականում նրանք կարող են սովորել, միայն պետք է փորձել: Եվ նրանք կփորձեն, եթե իրոք ցանկանում են:

## 2

Պետք է խոստովանեմ, որ ինքս կարդալ չգիտեի, մինչև քոլեջն ավարտելը: Դա պատահաբար բացահայտվեց, երբ փորձեցի այլոց կարդալ սովորեցնել: Կարծում եմ, շատ ծնողներ են նման բացահայտում արել, երբ իրենց երեխաներին էին կարդալ սովորեցնում: Պարադոքսալ է, բայց այդ գործընթացի արդյունքում ծնողներն ավելի շատ բան են իմանում ընթերցանության մասին, քան երեխաները: Պատճառները պարզ են. նրանք ակտիվ դիրքում են, այլապես անհնար կլինեք սովորեցնելը:

Վերադառնանք իմ պատմությանը: Եթե հավատանք ուսումնական քարտուղարի գրառումներին, այդ ընթացքում ես Կոլումբիայում հաջողակ ուսանողներից էի: Մենք

լավ գնահատականներ էինք ստանում: Բավական էր մի քանի հնարք սովորել, և ամեն ինչ սահուն էր ընթանում: Եթե այն ժամանակ մեկն ասեր, թե մենք քիչ բան գիտենք կամ վատ ենք կարդում, մենք լուրջ ցնցում կապրեինք: Մեզնից ոչ ոք չէր կասկածում, որ բավարար չափով լավ է լսում դասախոսությունները և կարդում է ուսմանն անհրաժեշտ գրքերը, որ կարողանա քննատոմսերի հարցերին գերազանցի պատասխանել: Հենց սա էինք համարում մեր ընդունակությունների հաստատումը: Մեզանից ոմանք գրանցվել էին դասընթացի, որն ազդելու էր մեր ինքնագնահատականի բարձրացման վրա: Այն անցկացնում էր Ջոն Էրսքինը: Դասընթացը տևում էր երկու տարի, կոչվում էր „General Honors” (Գերազանցիկների համար ընդհանուր դասընթաց) ու ուղղված էր բարձր ու ցածր կուրսեցի ընտրյալ ուսանողներին: Այնտեղ բացառապես հայտնի գրքեր էինք կարդում՝ սկսած հունական դասականներից, հին հռոմեական և միջնադարյան գրականության գլուխգործոցներից, մինչև ժամանակակից հեղինակներ, ինչպիսիք են Ուիլյամ Գեյնսը, Էյնշտեյնը, Ֆրեյդը: Ընթերցանության համար գրքեր ընտրում էինք տարբեր ոլորտներից՝ պատմություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, հոգեբանություն, պոեզիա, արձակ... Շաբաթը մեկ անց էինք կացնում ոչ ֆորմալ սեմինարի նման մի բան, որտեղ կարդացածը քննարկում էինք դասավանդողների հետ: Դասընթացն ինձ վրա կրկնակի ազդեցություն թողեց: Մի կողմից ինձ թվում էր՝ ոսկի երակ եմ գտել: Իսկական նյութ և դրա վրա իսկական աշխատանք: Դրանք ակադեմիական դասագրքերն ու կոնսպեկտները չէին, ինչի համար միայն մարզված հիշողություն էր պետք: Ցավոք, ես ոչ թե պարզապես որոշեցի, թե ոսկի եմ գտել, այլ ինձ դրեցի հանքատերի տեղ: Ինձ «հանրահայտ» գրքեր էին շրջապատում: Ես կարողանում էի կարդալ: Ամբողջ աշխարհն իմ գրպանում էր: Եթե ավարտելուց հետո բիզնեսով, բժշկությամբ կամ իրավաբանությամբ զբաղվեի, մի օր կմտածեի, թե կարողանում եմ կարդալ ու մյուսներից կարդացած եմ, բայց քնից շուտ արթնացա: Քոլեջում ձևավորված ամեն մի պատրանքին ի պատասխան կյանքը պատրաստում է իր դաժան դասը: Բժշկին կամ իրավաբանին նման բացահայտման համար գործունեության մի քանի տարին հերիքում է: Բիզնեսի կամ լրագրության աշխարհը իրեն ֆինանսիստ կամ գրչի վարպետ համարող պատանուն նման պատրանքից ազատում է դիպլոմն ստանալուց անմիջապես հետո: Ես համալսարանն ավարտեցի՝ համոզված լինելով, որ ստացել եմ հիանալի կրթություն և գերազանց կարողանում եմ կարդալ: Նման մոլորությունից ինձ բուժեց դասավանդումը: Պատիժը ճշգրտորեն համապատասխան էր հանցանքին: Ավարտելուց մեկ տարի անց ես պիտի վարեի գերազանցիկների հենց նույն կուրսը, որտեղ ես իմ ժամանակին ինքնահավանությունս էի զարգացնում: Բոլոր այն գրքերը, որոնց մասին ինձ վիճակված էր պատմել, կարդացել էի ուսանողական տարիներին: Ես երիտասարդ էի ու ինքնավստահ, հետևաբար որոշեցի շաբաթը մեկ վերընթերցել դրանք հիշողությունը թարմացնելու համար: Մեծագույն զարմանքով բացահայտեցի, որ ասես առաջին անգամ եմ կարդում այն գրքերը, որոնք ես հետևողականորեն ու համառորեն «յուրացնում էի» ուսման տարիներին: Գիտակցումը ավելի ուշ եկավ ու դարձավ հայտնություն. ես ոչ միայն քիչ բան էի հիշում այդ գրքերից, այլ նաև վատ էի

ընթերցել: Որպեսզի թաքցնեի սոցիալությունս ու անիրագրելությունս, ես այնպես էի գործում, ինչպես ցանկացած երիտասարդ դասավանդող, ով վախենում էր առաջին աշխատանքից ու սովորողներից: Ես ակտիվորեն դիմում էի հավելյալ աղբյուրների՝ հանրագիտարանների, հոդվածների, գրքերի մասին գրքերի՝ հույս ունենալով դրանց միջոցով սովորողներից ավելի կրթված երևալու: Աշխատելով ինչ-որ գրքի վրա՝ ես մտածում էի, որ նրանք անպայման կհասկանան, որ իմ հարցերն ու դատողությունները հիմնված են շատ խորը ու մտածված ընթերցանության վրա: Բարեբախտաբար, ինձ բացահայտեցին: Հակառակ դեպքում ես այդպես էլ կբավարարվեի դասավանդման խաբկանքով, ինչպես ավելի վաղ ուսման խաբկանքով էի բավարարվում: Հաջողությամբ հիմարացնելով ուրիշներին՝ ես շուտով կզբաղվեի ինքնախաբեությամբ: Ճակատագրի առաջին ընծան եղավ կուրսի իմ գործընկերը՝ քանաստեղծ Մարկ Վան Դորենը: Նա քննարկումներ էր վարում պոեզիայի մասին, իսկ ես՝ պատմության, գիտության ու փիլիսոփայության մասին: Մարկը մի քանի տարով մեծ էր ինձանից և զգալի չափով ավելի լավ էր կարողանում ընթերցել: Դրա հետ մեկտեղ հավանաբար նա ավելի ազնիվ էր ինձանից: Ստիպված էի համեմատել նրա ուսուցման ոճը իմի հետ ու անմխիթարական հետևություններ անել. խաբել ինձ ես չէի կարող: Հասկանալու համար ես կարդում էի ոչ թե գիրքը, այլ նրա մասին: Ես իմ ունկնդրին այնպիսի հարցեր էի տալիս, որ կարող էր տալ ցանկացած մեկը, ով տեղյակ չէր գրքից: Դրա հետ մեկտեղ ես նման էի այն մարդուն, որը տոննաներով հավելյալ նյութեր է փորփրել, որոնք նախատեսված են կարդալ չկարողացող կամ չուզող մարդկանց համար: Մարկի հարցերը, հակառակը, ծնվում էին գրքի բովանդակությունից: Թվում էր՝ նրա ու հեղինակի մեջ արդեն վստահելի հարաբերություններ են առաջացել: Նրա համար յուրաքանչյուր գիրքը մի ողջ աշխարհ էր՝ անծայրածիր տարածություն հետազոտության համար: Ու արդարացի պատիժ էր իջնում այն ուսանողի գլխին, որը պատասխանում էր հարցերին այնպես, կարծես այդ աշխարհում ճանապարհորդելու փոխարեն շտապ ուղեցույցն էր թերթել: Տարբերությունը չափազանց ակնհայտ ու անտանելի էր ինձ համար: Այն վայրկյան անգամ չէր թողնում ինձ մոռանալ, որ ես չեմ կարողանում ընթերցել: Ճակատագրի մյուս ընծան դարձավ սովորողների իմ առաջին կուրսը: Նրանք անմիջապես առաջ նետվեցին՝ գերազանցելու իրենց դասավանդողին, ու սովորեցին հանրագիտարաններ, հոդվածներ ու դասականների վերաբերյալ նախաբաններ ընթերցել ինձանից ոչ պակաս: Նրանցից մեկը, որը հետագայում քննադատ դարձավ, առավել մեծ եռանդ էր ցուցաբերում: Անհատնում հիացմունքով նա դիմում էր հավելյալ նյութերի քննարկումների՝ դրանով մյուս սովորողներին ու ինձ հենց գրքի մասին խոսելու անհրաժեշտությունը մատնանշելով: Ընդ որում, ես կարծում եմ, որ այդ խմբի ուսանողները, ապագա քննադատին էլ վերցրած, ինձանից լավ չէին կարդում: Իհարկե մեզանից ոչ մեկը, բացառությամբ Վան Դորենի, իսկապես չէր կարդում: Դասավանդողի դերում լինելուց մեկ տարի անց ես ազատվեցի իմ՝ կարդացած լինելու պատրանքից: Այդ ժամանակվանից ես ուսանողներին վեց տարի շարունակ սովորեցնում էի կարդալ Կոլումբիական համալսարանում Վան Դորենի հետ և հետո նաև տասը տարի՝ Չիկագոյի համալսարանում, նախագահ Ռոբերտ

Հաթչինստնի հետ նույն շարքում: Համարում եմ, որ այդ տարիների ընթացքում ես աստիճանաբար ավելի լավ սովորեցի կարդալ, դադարեցի ինքնախաբեությամբ զբաղվելուց ու ինձ մասնագետ կարծելուց: Ինչո՞ւ: Կարդալով տարեցտարի միևնույն գրքերը՝ ես ամեն անգամ անկեղծորեն զարմանում էի. գիրքն ինձ կատարելապես նոր էր թվում, կարծես ես այն առաջին անգամ էի բացում: Վերընթերցելով հերթական գիրքը՝ ես ինքս ինձ ասում էի, որ հիմա արդեն կատարելապես յուրացրել եմ ամեն ինչ, բայց ամեն հերթական ընթերցումից հետո ես գտնում էի նախորդ անգամ սխալ հասկացած մասեր: Կարծում եմ, որ այդպիսի մի քանի կրկնությունից հետո նույնիսկ հետամնաց մարդը կհասկանա, որ չի կարողանում կարդալ ինչպես հարկն է: Իհարկե գործը անելով է վերջանում, բայց ընթերցանության հմտության մեջ, ինչպես ցանկացած այլ հմտության մեջ, ավելի շատ պրակտիկա է անհրաժեշտ, քան ի սկզբանե թվում էր:

### 3

Ես կիսվում եմ երկու ցանկությունների արանքում: Անկասկած, ես ուզում եմ, որ դուք ինչքան հնարավոր է արագ ընթերցել սովորեք, բայց դրա հետ մեկտեղ չեմ համարձակվում ձեզ խաբել՝ արագ ու հեշտ արդյունք խոստանալով: Համոզված եմ, որ դուք ինքներդ էլ չեք ցանկանում խաբված լինել: Ընթերցանության ուսուցումը, ինչպես ցանկացած այլ հմտության ձեռքբերում, որոշակի դժվարություններ է ենթադրում, որոնց հաղթահարումը ջանք ու ժամանակ է պահանջում: Կարծում եմ՝ ով որ որևէ գործունեություն է սկսում, պատրաստ է դրան ու գիտակցում է, որ ոչինչ չի տրվում առանց ջանքի: Մանկասայլակից դուրս գալու, մի ողջ կարողություն վաստակելու, երջանիկ ընտանիք կազմելու կամ գտնելու համար իրական իմաստությունդ ժամանակ ու ավյուն է անհրաժեշտ: Մի՞թե տրամաբանական չէ, որ կարդալու կարողությունն ու արժանի գրքերի ընտրությունը նույնպիսի ջանքեր են պահանջում:

Իհարկե ամեն ինչ մի քիչ ավելի արագ կլիներ, եթե մենք ուսուցումը դեռ դպրոցից սկսեինք: Ցավոք, սովորաբար հակառակն է տեղի ունենում՝ դպրոցում մենք կասեցնում ենք շարժը: Մանրամասն դպրոցների թերությունների մասին ես կարտահայտվեմ հետո: Հիմա միայն փաստն եմ արձանագրում, որը բոլորին է վերաբերում, քանզի զգալի կերպով հենց դպրոցն է մեզ դարձնում ընթերցել և դրանից օգուտ ու հաճույք քաղել չկարողացող մարդիկ:

Ուսում ստանալու պրոցեսը չի դադարում ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո, ինչպես նաև յուրաքանչյուրիս կրթության պատասխանատվությունը չի կարելի լիովին դնել դպրոցական համակարգի վրա: Յուրաքանչյուրը կարող է ու պետք է ինքը որոշի՝ բավարարում է իրեն ստացած կամ ստանալիք կրթությունը: Եթե ոչ, ապա շտկել դրությունը թե՛ ոչ, յուրաքանչյուրի անձնական ընտրությունն է: Քանի ուսումնական հաստատությունները մնում են այնպիսին, ինչպիսին այսօր են, ևս մի դիպյումը հազիվ թե օգնի: Լուծման տարբերակը

(երևի թե միակը մեզանից շատերի համար) բարձրացնելն է ընթերցանության որակը, որպեսզի այդպիսով արդյունավետ սովորենք գրքերով:

Հենց այդ որոշման մասին է այս գրքում խոսվելու: Այն հասցեագրված է մեծերին, ովքեր սկսում են հասկանալ, թե ինչքան քիչ գիտելիք են ստացել դպրոցում ու քոլեջում: Այս գիրքը պետք կգա այն մարդկանց, ում բախտը ավելի քիչ է բերել, քանզի միայն հիմա զարմանքով իմացան, որ ինչ- որ բանից զրկված են եղել: Գիրքը կարող է օգտակար լինել դպրոցների ու քոլեջների սովորողներին, որոնք պարբերաբար հարց են տալիս, թե ինչպես և ինչով լրացնեն սեփական կրթությունը: Եվ վերջապես գիրքը պետք կգա նույնիսկ դասավանդողներին, որոնք երբեմն զգում են, որ իրենց սովորողներին բավականաչափ գիտելիք չեն տալիս, բայց չգիտեն ինչպես շտկեն դրությունը:

Խոսելով սովորական ընթերցողների այսքան լայն լսարանի մասին, ես հաշվի եմ առնում նրանց մակարդակների և ունակությունների բոլոր տարբերությունները, կրթության ու փորձի և, իհարկե, հետաքրքրությունների ու մոտիվացիաների աղբյուրների միջև տարբերությունները: Բայց առաջնային կարևորությունը այս հարցում ընդհանուր նպատակն ու դրա արժեքավորությունը հասկանալն է: Մենք կարող ենք զբաղվել գործունեությամբ, որն ընդհանրապես կապ չունի ընթերցանության հետ, բայց այնուամենայնիվ զգալ, որ կյանքը ավելի տարատեսակ կլինի, եթե առօրյայի մի մասը նվիրենք ինքնազարգացմանը, օրինակ՝ գրքերի օգնությամբ: Բացի դրանից՝ երբեմն աշխատանքը մասնագիտական գրականության ընթերցում է պահանջում. բժիշկը միշտ պիտի տեղյակ լինի բժշկական նորություններից, իրավաբանը պարտավոր է դատական գործեր կարդալ, գործարարը պիտի ուսումնասիրի ֆինանսական հաշվետվությունները, ապահովագրական քաղաքականությունը, պայմանագրերը և այլն: Կարևոր չէ, կարդում ենք աշխատանքի, թե ինքնազարգացման համար, պարզ է մի բան. դա կարելի է անել կամ որակով, կամ՝ ոչ այնքան:

Մենք կարող ենք քոլեջում սովորել, օրինակի համար, լինել աստիճան ստանալու թեկնածու և դրա հետ մեկտեղ գիտակցել, որ ավտոմատ կերպով մեր գլուխը գիտելիք են խցկում, ոչ թե բառի լայն իմաստով զարգացնում են: Ուսանողների մեծ մասը մինչև բակալավրի դիպլոմ ստանալու պահը չորս տարի այսպես թե այնպես տարբեր առարկաներ է ուսումնասիրել, որից հետո քննություն է հանձնել: Այդ գործընթացի հաջողությունը կախված է եղել նույնիսկ ոչ այդ առարկայից, այլ դասավանդողի անձից: Եթե ուսանողը քաղել է նյութի հիմնական մասը դասախոսություններից և դասագրքերից՝ լինելով, դրա հետ մեկտեղ, դասավանդողի սիրելին, ապա նա բավականին հեշտ քննությունը կհանձնի: Բայց, դրա հետ մեկտեղ, բաց է թողել զարգանալու հնարավորությունը:

Իհարկե, մենք կարող ենք դպրոցում, քոլեջում կամ համալսարանում դասավանդել: Հուսով եմ, որ դրանով հանդերձ մենք զոնե ինքներս մեզ կխոստովանենք, որ ընթերցանության մասնագետներ չենք: Մենք հրաշալի հասկանում ենք, որ որակյալ ընթերցանության մեջ շատ հեռու չենք անցել մեր ուսանողներից: Յուրաքանչյուր մասնագիտության մեջ որոշակի հնարքներ կան, որոնք օգնում են հանրության վրա

տպավորություն գործելուն: Ուսուցչի հնարքը գիտելիքը և փորձը առաջին պլանում դնելն է: Դա այնքան էլ խորամանկություն չէ, որովհետև սովորաբար մենք այնուամենայնիվ գիտենք ու կարող ենք մի քիչ ավելին, քան մեր ուսանողները: Բայց չարժի ինքներս ընկնենք այդ թակարդը: Եթե մենք չենք հասկանում, որ ուսանողը չունի որակյալ ընթերցանության հմտություն, դա խորամանկությունից ավելի վատ է, որովհետև այս դեպքում մենք որպես մանկավարժ մեր ուղիղ պարտականությունները չենք կատարում: Իսկ կարդալու սեփական ունակության նկատմամբ մոլորությունը ընդհանրապես վերածվում է ինքնախաբեության:

Լավագույն բժիշկները կարողանում են գրավել հիվանդի վստահությունը՝ բացահայտ խոստովանելով իրենց սահմանափակումների մասին: Մենք ամենալավ ուսուցիչ ենք համարում նրան, ով ամենաքիչ պահանջները ունի: Եթե ուսանողները փակուղում են հայտնվել դժվար խնդրի լուծման մեջ, ապա դասավանդողը, ով չի թաքցնի իր դժվարությունները, կօգնի նրանց ավելի շատ, քան մանկավարժը, որը բարձրացել է պատվանդանի վրա: Եթե մենք ազնվորեն խոստովանեինք, որ դժվարություններ ունենք ընթերցանության մեջ, և քիչ թաքցնեինք, թե ինչքան դժվար է մեզ համար ընթերցելը, ապա մենք կկարողանայինք շահագրգռել ուսանողներին հենց գիտելիք ստանալու ընթացքով, քննություն տալու փաստի փոխարեն:

Կարծում եմ՝ մինչ այս պահը ընթերցել չիմացող մարդիկ արդեն հասկացան, որ ես ինքս էլ նրանցից այնքան էլ առաջ չեմ: Ես հստակ հասկանում եմ՝ ինչ չգիտեմ ու, հնարավոր է, թե ինչու չգիտեմ: Իմ հիմնական առավելությունը հենց դա է: Դա է նաև իմ հիմնական նվաճումը այսքան տարի դասավանդելու ընթացքում: Անկասկած, եթե ես մի բան ավելի լավ եմ կարողանում անել, քան ուրիշները, հաճույքով պատրաստ եմ օգնելու շրջապատիս՝ հանուն նպատակի, որը արդարացնում է այսչափ լուրջ ջանքերը:

Երբեմն անսպասելի պարզվում է՝ ոչ այդքան շնորհալի ուսանողը ընդունակ է որակով ընթերցել գիրքը: Մասնագետներն ընթերցում են սովորաբար ոչ պակաս մակերեսային, քան մենք, բայց նրանք հաճախ այդ առումով շատ լուրջ աշխատանք են կատարում, եթե տեքստը ուղղակի կապված է նրանց մասնագիտության հետ և հատկապես, եթե դրանից է կախված նրանց հեղինակությունը: Իրավաբանը ամենայն հավանականությամբ բժախնդրորեն կվերլուծի իր պրակտիկայի համար բոլոր հրատապ դատական գործերը: Բժիշկը նույն կերպ ուշադիր կկարդա ցանկացած կլինիկական ուսումնասիրության մասին, եթե դրանում իր համար կարևոր ախտանիշների մասին տեղեկություն կա: Այս օրենքը գործում է նաև գործունեության այլ ոլորտներում: Նույնիսկ բիզնեսը ստանում է գիտական նրբերանգ, երբ գործարարները ստիպված են լինում ֆինանսական հաշվետվություններ կամ պայմանագրեր կարդալ: Ճիշտ է, ես լսել եմ, որ շատ գործարարներ չեն կարողանում ինչպես հարկն է նման փաստաթղթեր կարդալ, նույնիսկ եթե սեղանին է դրված նրանց սեփական ֆինանսական բարեկեցությունը:

Ընդհանուր առմամբ կանանց ու տղամարդկանց շրջանում նույնանման հմտությունները վերլուծելու փորձից, անկախ նրանց գործունեության բնույթից, ես հիշում եմ միայն մի իրադրություն, երբ մարդիկ ընթերցանության մեջ գերազանցում

են իրենք իրենց: Ստանալով սիրային գրություն՝ սիրահարները կարդում են տողերի արանքում ու դրանց տակ եղածը, ուսումնասիրում են մանրագույն մասնիկները և տեքստն ամբողջությամբ, նրբորեն զգում են համատեքստը, երկիմաստությունը, ակնարկներն ու թաքնված իմաստը: Նրանք որսում են բառերի գույնը, արտահայտությունների բույրն ու նախադասությունների քաշը: Երբեմն նրանք նույնիսկ ուշադրություն են դարձնում կետադրության վրա: Եվ նրանք դեռ անընդհատ վերընթերցում են այդպիսի նամակները ամեն անգամ առաջին անգամվա պես: Բոլոր այս օրինակները, հատկապես վերջինը, օգնում են պատկերացում կազմելու ընթերցանության գործընթացի իմ անձնական նկատառումների մասին: Եվ այնուամենայնիվ, դա դեռ բավական չէ: Որպեսզի ավելի խորը հասկանանք դրա էությունը, հարկավոր է ավելի հստակ տարբերել ընթերցանության տեսակներն ու մակարդակները: Գիրքը ավելի գրագետ ընթերցելու համար (իսկ ես հատկապես այդպես եմ ուզում ձեզ ընթերցել սովորեցնել) պետք է ընկալել նման տարբերությունների էությունը: Այդ մասին մենք կխոսենք հաջորդ գլխում: Հիմա կարևոր է հասկանալ, որ այս գիրքը ոչ թե ընդհանրապես ընթերցանության մասին է, այլ այն ընթերցանության մասին, որը մարդիկ սովորաբար չեն կարողանում, եթե իհարկե սիրահարված չեն:

*Ռուսերենից թարգմանությունը՝ Մարի Գաբանյանի  
Մորտիմեր Ադլեր «Ինչպե՞ս կարդալ գրքեր» գրքից*

## ՄՈՐՏԻՄԵՐ ԱՂԼԵՐ

### «ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԴԱԼ ԳՐՔԵՐ»

Նախորդ գլուխներում ես հայտնել եմ սեփական կարծիքս դպրոցական համակարգի մասին, որը կարելի է հերյուրանք համարել, եթե այն չլիներ բացարձակ արդարացի և օբյեկտիվ: Իմ կարծիքը դա խիստ դատապարտումն է մանկավարժների, որոնք չարաշահել են հասարակության վստահությունը, չնայած այս գլուխը կարող է ընթերցանության ուսուցանման մասին հիմնական թեմայից հեռու թվալ, ես պետք է



բացատրեմ իրավիճակը, որում հայտնվել ենք մենք և մեր երեխաները: Մեզ դարձնում են կրթված, բայց անգրագետ: Եթե դպրոցները բարեխղճորեն կատարեին իրենց խնդիրը այս գրքի կարիքը ընդհանրապես չէր զգացվի: Մինչ այժմ ես հաճախ հիշատակում էի իմ սեփական անուրախ փորձի մասին քոլեջներում և համալսարաններում դասավանդելու վերաբերյալ: Սակայն խնդրում եմ ձեզ հարյուր տոկոսով ճիշտ չընդունել իմ խոսքերը Ամերիկայի կրթության ողբալի վիճակի մասին: Այս կապակցությամբ կարելի է դիմել բազում մյուս վկաների հատկապես նրանց, ովքեր խոսում են միայն իրենց սեփական փորձի մասին: Ես նկատի ունեմ գիտական տվյալները մասնագետների հաշվետվությունները քննական թեստերի և ստուգողական աշխատանքների արդյունքների մասին:

Որքանով հիշում եմ իմ ժամանակ շատ բողոքներ կային այն մասին, որ ուսումնական հաստատություններում երեխաներին գրել ու կարդալ վատ են սովորեցնում: Սովորեալ դա վերաբերվում էր ավագ դպրոցին ու քոլեջին: Հիմնական դպրոցից ոչ ոք մեծ ձեռքբերումներ չէր էլ սպասում: Բայց 4 կամ 8 տարի սովորելուց հետո հասարակությունը բոլոր հիմքերն ուներ աշակերտների պատրաստվածության պատշաճ մակարդակ ակնկալելու տվյալ գործունեության տեսակներում:

Անգլերենի դասավանդումը մնում է ավագ դպրոցի դոմինանտ ծրագիր, իսկ անգլերենի սկզբնական կուրսը մինչև վերջերս պարտադիր առարկա էր բոլոր քոլեջներում: Նրա հիմնական խնդիրը մայրենի գրավոր խոսքի զարգացումն էր և պերճախոս կամ գոնե հասկանալի ձևով արտահայտվելու կարողությունը:

Բողոքները գալիս էին ամեն տեղից: Գործարարները՝ ակնհայտորեն բարձր պահանջներ չունենալով իրենց աշխատակազմից վրդովվում էին երիտասարդների անկարողությունից, որոնք նոր էին վերջացրել ուսումը: Նրանց վրդովմունքը կիսում ու վերցնում էին տասնյակ թերթեր բողոքելով մնացյալի հետ մեկտեղ թերթի խմբագիրների տառապանքներից, որոնք ստիպված էին լրիվ ուղղել երիտասարդ լրագրողների՝ երեկվա շրջանավարտների նյութերը: Անգլերեն լեզվի ուսուցիչները քոլեջներում ստիպված էին գրոյից սկսել իրենց ուսանողների հետ յուրացնելու այն ծրագիրը, որոնք սովորեցնում էին դպրոցի բարձր դասարաններում: Այդ ուսանողների քննական աշխատանքները ուրիշ առարկաներում ակնառու ներկայացնում էին անհավատալի աղավաղված ու անկապ անգլերեն լեզու:

Յուրաքանչյուրը, որը դասավանդում էր ասպիրանտուրայում, կամ իրավաբանական ֆակուլտետում, գիտի, որ բակալավրի դիպլոմը՝ քոլեջի լավագույն շրջանավարտ լինելը ոչինչ չի ասում իր գրավոր և բանավոր խոսքի մակարդակի մասին: Գիտությունների դոկտորի թեկնածուներից շատերին ստիպված են լինում սովորեցնել թեկնածուական գրել: Ես նկատի ունեմ, իհարկե, ոչ նրանց տվյալ առարկայի իմացությունը, այլ նրանց հասարակ անգլերեն լեզվի նվազագույն

Իմացությունը: Իրավաբանական ֆակուլտետի իմ գործընկերները հաճախ չեն կարողանում պարզել ուսանողի իրավաբանական գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ կապակցված արտահայտվելու վերջիններիս անկարողության պատճառով:

Ես անդրադարձա միայն գրավոր ու բանավոր խոսքին, այլ ոչ ընթերցանությանը: Մինչև վերջերս դեռ ոչ ոք ուշադրություն չէր դարձրել ավելի լուրջ ու տարածված ընթերցանության խնդրի վրա, բացի իմ կողմից հիշատակված իրավաբանության դասավանդողներից: Այն ժամանակվանից, երբ ծրագրում ընդգրկվեց դատական գործերի ուսումնասիրությունը, նրանք գիտակցեցին, որ իրենց աշխատանքային օրվա մեծ մասը անցնում է ուսանողներին այդ գործերը կարդալ սովորեցնելու վրա: : Բայց դասավանդողները կարծում էին, որ դա իրենց պարտականությունն էր, որովհետև դատական գործերի ընթերցանությունը առանձնակի բարդ գործընթաց էր: Նրանք չէին հասկանում, որ շրջանավարտը, որը կարողանում է լավ կարդալ քուլեջն ավարտելուց հետո, դատական նյութերի ավելի նեղ ընթերցանության կարողությունը ավելի հեշտ կյուրացնի:

Ես արդեն խոսել եմ պատճառներից մեկի մասին, որը հասարակության աչքերում ընթերցանությունը դարձնում են պակաս կարևոր կարողություն բանավոր և գրավոր խոսքի համեմատ: Վերջիններս մարդկանց մեծ մասի կողմից դիտարկվում են որպես առավել ակտիվ գործողություն: Քանզի մենք նույնացնում ենք վարպետությունը ակտիվության հետ, թերությունները գրելու և խոսելու մեջ կապում ենք տեխնիկայի պակասի, իսկ ընթերցանության ցածր մակարդակը՝ անձնական թերությունների հետ, առավել հաճախ՝ աշխատասիրության պակասի հետ: Չնայած վիճակը աստիճանաբար ուղղվում է: Ավելի մեծ ուշադրություն է դարձվում ընթերցանության խնդրին: Այնպես չէ, որ դասավանդողները հասկացել են, թե ինչպես վարվել, բայց նրանք վերջապես գիտակցեցին կարևոր մի բան. դպրոցում լավ չեն սովորեցնում ոչ միայն լավ գրել ու խոսել, այլ նաև ընթերցել:

Ակնհայտ է, որ այս կարողությունները փոխկապակցված են: Բոլոր նրանք ենթադրում են կողմերի շփման ընթացքում ընդունված ու ընկալված լեզվի օգտագործում: Զարմանալի չէ, որ թերացումները գործունեության այդ տեսակների մեջ նույնպես առընչություն ունեն: Առանց հատուկ գիտական հետազոտության կարող եմ ասել, որ մարդը, որը չի տիրապետում գրավոր խոսքին, չի կարող լավ կարդալ: Ասեմ ավելին, որ գրավոր բացատրվելու անկարողությունը մասամբ բխում է վատ ընթերցելուց:

Այո, կարդալը դժվար է, բայց գրելն ու խոսելը այնուամենայնիվ ավելի դժվար է: Այդ դեպքում կարևոր է իմանալ, ինչպես են ընդունվում տարբեր հաղորդագրությունները և կարողանալ տիրապետել միջոցներին, որոնք անհրաժեշտ արդյունք են տալիս:

Քանի որ սովորելու և սովորեցնելու արվեստները սերտորեն կապված են, գրող կամ խոսող դասավանդողը պետք է պատկերացնի ուսուցանելու ողջ առաջիկա գործընթացը: Ամենաքիչը նա պետք է կարողանա կարդալ իր գրածը, կամ լսել իր ասածը այնպես, կարծես սովորում է իր ուսանողների հետ հավասար: Եթե դասավանդողները չեն կարողանում սովորել, ուրեմն դատապարտված են անհաջողության:

-2-

Ես չեմ պահանջում համաձայնվել իմ չփաստարկված պնդումների հետ կամ կուրորեն ընդունել խաղի պայմանները: Տվյալ խնդրի գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ է դիմել փորձագետների:

Մեր դպրոցների ուսուցման արդյունքը չափորոշվում է թեստային հաստատված ու համաձայնեցված համակարգի միջոցով, որը կանխորոշում է առաջադիմության ու գիտելիքների ստանդարտ ոլորտների ցուցանիշները, ինչպես նաև հիմնական հմտությունների մակարդակը՝ ընթերցանությունը, հանրահաշիվն ու գիրը: Թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ ավագ դպրոցների շրջանավարտները չեն տիրապետում գործնական հմտություններին և դրա հետ մեկտեղ ցույց են տալիս կատաստրոֆիկ անգրագիտություն: Մենք ինչքան կարելի է արագ պետք է ուշադրություն դարձնենք կարդալու ոլորտում հմտությունների ակնհայտ արատների վրա, չնայած գրելու և կարդալու տիրապետման ստուգումների արդյունքները ևս մեկ անգամ ապացուցում են, որ դպրոցի շրջանավարտները «լռում» են ցանկացած տիպի հաղորդակցության գործունեության մեջ:

Եվ արդեն ծիծաղելի չէ: Չափազանց ողբալի է, որ տասներկու տարվա ուսուցումից հետո, շրջանավարտներին դեռևս պակասում են, չեն բավականացնում հիմնական գիտելիքները, բայց առավել ցավալի է, որ նրանք հնարավորություն չեն ունենա ուղղելու ստեղծված իրավիճակը: Եթե նրանք կարողանային ընթերցել՝ չխոսելով լավ գրելու և խոսելու մասին, կկարողանային մեծ հասակում ինքնուրույն սովորել:

Ուշադրություն դարձրեք, որ թեստերը խնդիր են բացահայտում նույնիսկ ընթերցելու ամենադյուրին մեթոդներում՝ ընթերցանություն տեղեկատվություն ստանալու համար: Մեծամասամբ այդ թեստերը ընդհանրապես չեն գնահատում կարդալու ունակությունը ընկալելու համար: Վախենում եմ ենթադրել, թե ինչպիսին կլինեին արդյունքները այդ դեպքում: Գիրքը գրելուց մեկ տարի առաջ, պրոֆեսոր Ջեյմս Մարսելլը Կոլումբիական մանկավարժական քոլեջի, մի հոդված գրեց «The Atlantic Monthly»-ում «Դպրոցների անկարողությունը» վերնագրով: Նրա պնդումները հիմնված էին «հազար հետազոտության» վրա, որը ներառում էր «ուսումնական համակարգի զարգացման երեսուն տարվա մանրակրկիտ ուսումնասիրության

մանրամասն արդյունքները»: Այդ արդյունքների զգալի մասը վերաբերվում է Պենսիլվանիայի դպրոցների աշխատանքի վերջին հետազոտություններին, որոնք կատարվել են «Կերնեզի ֆոնդի» կողմից: Թույլ տվեք մեջբերել նրա բառերը.

«Ինչ վերաբերվում է անգլերենին: Այստեղ ևս բախվում ենք ձախողման ու անկարողության հետ: Արդյունավե՞տ է արդյոք մայրենի լեզվի ուսուցումը դպրոցում: Եվ այո, և ոչ: Մինչև հինգերորդ- վեցերորդ դասարանները ընթերցանությունը ընդհանուր առմամբ լավ է ուսուցանվում ու ընկալվում: Մինչ այդ պահը կարելի է հետևել բավականին կայուն զարգացում, բայց հետո կորը ձգվում է, դառնալով հորիզոնական: Դա բոլորովին չի նշանակում, որ մինչև յոթերորդ դասարանը երեխան հասնում է բնության կողմից նրա մեջ ներդրված կարողությունների իր բարձրակետին: Արդեն մեկ անգամ չէ, որ ապացուցվել է, որ համապատասխան պատրաստվածության դեպքում և՛ մեծերը, և՛ պատանիները կարող են հասնել ահռելի ցուցանիշների: Ստացված արդյունքը չի նշանակում, որ վեցերորդիների մեծ մասը բավականին լավ են կարողանում կարդալ գործնական նպատակներով: Սովորողները ավագ դպրոցում թույլ առաջադիմություն են ցուցաբերում տպագիր տեքստի բովանդակության ընկալման տարրական անկարողության պատճառով: Անկասկած նրանք կարող են կատարելագործել ընթերցելու հմտությունները, նրանց դա չափազանց անհրաժեշտ է, բայց ոչ ոք չի զբաղվում այդ խնդրի լուծմամբ»:

Ավագ դպրոցի շարքային շրջանավարտը արդեն բավականին շատ գիրք է կարդացել: Եթե նա գնա քոլեջ սովորելու, ապա ավելի շատ կկարդա: Դրանով հանդերձ նա ավելի շուտ թույլ ու անպատրաստ ընթերցող կդառնա: (Ուշադրություն դարձրեք, որ այս ամենը վերաբերվում է միջին ուսանողին, այլ ոչ թե մարդուն, որը անցել է հատուկ «վերականգնում»): Նա կարող է հաճույքով սովորական մասսայական գրականություն կարդալ: Բայց ցույց տվեք նրան լուրջ հետազոտություն, էկոնոմիկական հիմնավորում կամ անալիտիկ հաշվարկ, որը քննադատական հետազոտություն է պահանջում՝ կշիռովի: Ապացուցվել է, որ միջին վիճակագրական բարձր դասարանցին չի կարող առանձնացնել կարդացածի գլխավոր միտքը կամ երկխոսության մեջ իմաստային շեշտադրումներ տեղադրել: Ըստ էության նա դպրոցը ավարտելիս կմնա վեցերորդու մակարդակին:

Ավելացնեմ, որ քոլեջից հետո իրադրությունը այնքան էլ չի փոխվում: Անհնար է քոլեջն ավարտել, չկարողանալով կարգին կարդալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հնարավոր է, որ առանց այդ ունակության հնարավոր չէ նույնիսկ այնտեղ ընդունվել: Բայց եթե հիշենք ընթերցանության տեսակների տարբերության մասին և թեսթերի կողմնորոշման՝ ուղղված բացահայտելու և գնահատելու գիտելիքների առավել պարզ մակարդակը, ապա բավականին դժվար է սփոփվել նրանով, որ քոլեջի ուսանողները վեցերորդիներից ավելի լավ են կարդում:

Ասպերանտուրաների և մասնագիտական ուսումնական հաստատությունների մասին տեղեկություններն ապացուցում են, որ ընկալելու նպատակով ընթերցանությունը այնտեղ մնում է վեցերորդ դասարանի մակարդակի վրա:

Ավելի մոայլ է արտահայտվել պրոֆեսոր Մարսելը գրքերի որակի մասին, որոնց ընթերցանության նկատմամբ դպրոցում կարողանում են հետաքրքրություն առաջացնել.

«Քոլեջի ուսանողները՝ նույնիսկ շրջանավարտները, կարդում են, բայց շատ քիչ: Հիմնականում դրանք լրագրեր են ու հանրամատչելի գրականություն՝ բավականին ցածր մակարդակի: Իրենց ընտրությունը սովորողները կատարում են գովազդի ազդեցությամբ, կամ պատահական երաշխավորանքով, «լսել եմ ինչ որ մեկից» սկզբունքով: ուսումնական հաստատություններում ակնհայտորեն չեն դաստիարակում ընթերցանության նկատմամբ բժախնդի որ բազմակողմանի ընթերցողների: Ինչպես ասում էր մի ուսումնասիրող՝ չկա թեկուզ չնչին նշան այն բանի, որ «դպրոցները զարգացնում են ազատ ժամանակ կարդալու կայուն հետաքրքրություն»:

Մի քիչ ժամանակավրեպ է խոսել այն մասին, որ սովորողները և շրջանավարտները կկարդան մեծագույն գրքեր, եթե նրանք չեն կարդում նույնիսկ ամեն տարի թողարկվող լավ արձակ:

Հետո Մարսելյայի հաշվետվության մեջ խոսվում է գրավոր խոսքի մասին: Միջին վիճակագրական ուսանողը չի կարողանում «պարզ, հստակ ու կապակցված մայրենի լեզվով» արտահայտվել, «շատերը ավագ դպրոցում ի վիճակաի չեն պատասխանել, թե ինչ է նախադասությունը», սովորական ուսանողի բառապաշարը շատ աղքատ է: Այն շատ մեծ փոփոխության չի ենթարկվում ուսման գործընթացում ավագ դպրոցից մինչև քոլեջի ավագ կուրսը: Մովորելով տասներկու տարի, շրջանավարտների մեծ մասի գրավոր խոսքի հմտությունը երեխայավարի անվստահ է: Չորս տարի որոշ առաջխաղացում է դիտվում: Այս փաստը անդրադառնում է նաև ընթերցանության վրա: Ուսանողը, որը չի կարողանում «արտահայտել, գտնել ու ճշգրտել մտքի երանգները», հազիվ թե կարողանա գտնել դրանք ինչ որ մեկի տեքստում և ընկալման նրբության մեջ մնում է վեցերորդ դասարանի մակարդակի վրա:

Բերեմ ուրիշ օրինակներ: Նյու Յորք նահանգի խնամակալների խորհուրդը վերջերս անցկացրեց իր ուսումնական հաստատություններում հատուկ հետազոտություն: Հանձնաժողովը Կոլումբիայից պրոֆեսոր Լյուիթեր Գյուլիկի գլխավորությամբ կազմեց հաշվետվություն կատարված աշխատանքի արդյունքներով, որի հետ ինձ հաջողվեց ծանոթանալ: Ավագ դպրոցների վիճակին նվիրված հատորներից մեկում ես

հայտնաբերեցի մի բաժին՝ «ուսուցանման հմտությունների տիրապետում» անունով: Մեջբերում եմ.

«Մեծ քանակությամբ դպրոցականներ, նույնիսկ շրջանավարտների շրջանում, ուսուցման տարրական միջոցների պակաս է զգացվում: Ավագ դպրոցի սովորողներին հետազոտության ընթացքում տրվել է մի թեստ, ստուգելու համար հասարակ անգլերեն լեզվով կարդալու և հասկանալու ընդունակությունը... Սովորողները պետք է կարդային հատվածներ հասարակ գիտական հոդվածներից, պատմական փաստաթղթերից, տնտեսագիտական խնդիրներից և նմանատիպ այլ նյութերից: Սկզբում տեքստը նախատեսված էր ութերորդ դասարանցիների համար»:

Պարզվեց, որ ավագ դպրոցի միջին վիճակագրական շրջանավարտը ընդունակ է անցնել ութերորդ դասարանցիների համար նախատեսված թեստը: Իհարկե դա չի կարելի մեծ ձեռքբերում համարել: Դրանից բացի բացահայտվել է, որ «Նյու Յորք նահանգի սարսափազդու քանակությամբ սովորողներ՝ ավարտելով հիմնական դպրոցը, սկսում են ուսումը ավագում, չհասնելով պահանջվող կրթական մակարդակի մինիմալ աստիճանին»: Ո՞վ կվիճարկի այն կարծիքը, որ «բոլորին անհրաժեշտ հմտությունները, ինչպիսիք են՝ ընթերցանությունն ու գիրը, յուրաքանչյուրը պիտի զարգացնի թեկուզ մինչև նվազագույն մակարդակը»: Ակնհայտ է, որ պրոֆեսոր Մարսելլը բավականին մեղմ է արտահայտվում, երբ խոսում է «դպրոցական ուսուցման ձախողման մասին»:

Ուսումնասիրությունը շոշափեց նաև դպրոցական ուսուցումից դուրս ինքնուսուցման թեմային: Հանձնաժողովը արդարացիորեն կարծում էր, որ դրա համար պետք է ստուգվի սովորողների դասից դուրս ընթերցանության ունակությունը: Արդյունքում պարզվեց, որ «դասերի ավարտից հետո աղջիկների և տղաների մեծ մասը բացարձակապես կարդում են զվարճության համար, որպես կանոն լրագրեր, միջին կամ ցածր մակարդակի մասսայական գրականություն և ամենօրյա թերթեր»:

Ընթերցանության տեսականին դպրոցում և նրա տարածքից դուրս ցավալիորեն նեղ է, շատ պարզունակ է ու աղքատ իր պարունակության տեսակետից: Լուրջ գրականության մասին խոսք անգամ լինել չի կարող: Դպրոցականները անգամ տեղյակ չեն լավագույն վեպերից, որոնք լույս են տեսել իրենց ուսման ընթացքում: Առավելագույնը, ինչ կարող են իմանալ, դա բեստսելլերների վերնագրերն են: Ավելին՝ ավարտելով դպրոցը, նրանք ընդհանրապես չեն ձգտում կարդալ: Հարցվածների քառասուն տոկոսը կարդացել է որևէ բան է կարդացել հարցման պահից երկու շաբաթ առաջ: Միայն տասից մեկն է այդ ժամանակաընթացքում կարդացել գեղարվեստական գրականություն: Հիմնականում նրանք լրագրեր են կարդում: Եվ նույնիսկ այդ դեպքում ընթերցանության մակարդակը ցածր է մնում. «Հարյուր

երիտասարդներից առավելագույնը երկուսն են կարդում այնպիսի լրագրեր, ինչպիսիք են «Herper's», «Scribner's» կամ «The Atlantic Monthly»:

Ինչո՞վ է պայմանավորված այս աղաղակող անգրագիտությունը: Հաշվետվության տողերը պարզում են խնդրի էությունը. «Այդ տղաների ու աղջիկների ընթերցելու սովորության վրա անմիջականորեն ազդել է այն փաստը, որ նրանք այդպես էլ չեն սովորել հասկանալով կարդալ»: Ոմանք՝ հավանաբար կարծում են, որ արդեն ստացել են լիարժեք կրթություն և կարդալ այլևս պետք չէ»: Բայց նրանց մեծ մասը ուղղակի չեն կարողանում ընթերցել ու հետևաբար հաճույք չեն ստանում դրանից: Հմտության տիրապետումը անհրաժեշտ պայման է դրա կիրառման ու բուն պրոցեսից հաճույք ստանալու: Այս ամենի լույսի ներքո մենք իմացանք մեր երեխաների հասկանալու և նույնիսկ տեղեկատվություն ստանալու համար կարդալ չիմանալու մասին, արդյո՞ք արժե զարմանալ ընթերցանության նկատմամբ արհամարհանքի վրա: Զարմանալի չէ, որ նրանք առանց այն էլ հազվադեպ ընթերցանության համար ընտրում են տհաճորեն ցածրորակ մակարդակի գրականություն:

Ծանր հետևանքներն ակնհայտ են. «Այդպիսի իրավիճակը տիպիկ է մեծ քանակությամբ դպրոցականների համար, \_ ասվում է հաշվետվության մեջ, \_ թույլ հույս է թողնում միայն այն, որ ինքնուրույն ընթերցանությունը կօգնի ավագ դպրոցի շրջանավարտներին հետագա կրթության մեջ»: Այն ամենը, ինչ հայտնի է մեզ քուլեջի ուսուցման մասին հիմք չի տալիս ենթադրելու, որ նրա շրջանավարտները զգալի չափով առաջ են անցել: Նրանք ընդամենը մի փոքր ավելի լավ են պատրաստվել ընթերցանության համար, քանի որ չորս տարվա ուսուցման ընթացքում հազիվ թե կարելի էր հիմնավորապես զարգացնել համապատասխան հմտություններ:

Ինչպես արդեն ասացի, այդ թեստերը բավականին հեշտ էին: Բայց իմ առաջադրած չափանիշները այնքան էլ բարձր չէ: Արդյո՞ք ես շատ բան եմ պահանջում, ակնկալելով, որ ուսանողը ի վիճակի կլինի գիրք կարդալու, այլ ոչ թե նրանից մի հատված և կկարողանա դրանից հետո ոչ միայն վերապատմել կարդացածը, այլ ցույց տալ նյութի ընկալման խորությունը: Արդյո՞ք դա շատ է՝ հուսալ, որ կրթական հաստատությունում ուսանողին կսովորեցնեն ոչ միայն վերապատմել, այլ նաև քննադատել, այսինքն տարբերել ողջամիտ միտքը սխալից, կարողանալ ապացուցել սեփական դիրքորոշումը և չշտապել ենթադրությունների մեջ համոզվածության բացակայության դեպքում: Կասկածում եմ, որ այս պահանջները շատ են ավագ դպրոցի կամ քուլեջի համար: Բայց եթե թեստերը նախատեսվեն այդպիսի խնդիրները, իսկ դիպլոմ ստանալու պայմանը դառնար բավարար արդյունքը, հարյուրավոր սովորողներից ոչ մեկը, որոնք տարեկան հուլիսին լքում են իրենց ուսումնական հաստատությունների պատերը, չէր հազնի փնջիկով գլխարկն ու կնգուղը:

Հնարավոր է, դուք չհամաձայնեք, ասելով որ տվյալ փաստերը տեղային երևույթներ են և տվյալ խնդիրը բնորոշ է բացառապես նյու Յորքի և Պենսիլվանիայի համար: Հնարավոր է, որ ասեք, որ թեստերի արդյունքում ետ մնացող ավագ դասարանի սովորողի դերը չափազանցված է: Բայց դա այդպես չէ: Փաստերը արտացոլում են ողջ երկրի իրավիճակը: Իսկ Պենսիլվանիայի ու Նյու Յորքի ուսումնական հաստատությունների մակարդակը միջինից բարձր է գնահատվում: Դրանից բացի այդ տեղեկությունները հաշվետվություն են պարունակում ավագ դպրոցի ինչպես թույլ, այնպես էլ ուժեղ սովորողների մասին:

Կարող եմ նաև լրացուցիչ նկարագրել վերը նշվածը: 1939թվականի հուլիսին Չիկագոյի համալսարանը անցկացրեց քառօրյա համաժողով ընթերցանությանը վերաբերյալ այն դասավանդողների համար, որոնք ամառային նիստերի էին հաճախում: Նիստերից մեկի ժամանակ պրոֆեսոր Դիդերիխը կրթության նախարարությունից, հրապարակեց թեստերի արդյունքները, որոնք անցկացվել էին ավագ դպրոցի սովորողների շրջանում, որոնք ունեն ամենաբարձր գնահատականները և հետևաբար եկել էին այստեղ երկրի բոլոր անկյուններից կրթաթոշակ ստանալու հույսով: Մնացյալից բացի բոլոր թեկնածուները անցել էին նաև ընթերցանությանը վերաբերվող թեստ: Ինչպես հայտարարել է պրոֆեսոր Դիդերիխը, պարզվել է, որ «օժտված» ուսանողների մեծ մասը պարզապես ընդունակ չէ կարդացածը ընկալելու:

Ավելին, նրա խոսքով. «սովորողները չեն ստանում անմիջական օգնություն հասկանալու լսածն ու կարդացածը ու պարզելու ասվածի կամ գրվածի իմաստը»: Խնդիրը չի սահմանափակվում ավագ դպրոցով: Այն նույնքան տիպային է Ամերիկայի ու նույնիսկ Անգլիայի քոլեջների համար՝ հատկապես եթե հիշենք Քեմբրիջի համալսարանի շրջանում մայրենի լեզվի տիրապետման մակարդակի մասին:

Չիկագոյի համաժողովը տևեց չորս օր: Առավոտյան, ցերեկային և երեկոյան նիստերին կարդացվում էին մեծ քանակությամբ փաստաթղթեր ընթերցանության խնդրի վերաբերյալ: Բայց հարցը դեռ մնում էր բաց: Ինչու՞ ուսանողներին ոչ ոք չի օգնում: Չի կարելի ասել, որ պրոֆեսիոնալ դասավանդողները տեղյակ չէին ստեղծված իրավիճակից: Հնարավոր է, որ նրանք չգիտեն ի՞նչ անել: Կամ էլ չեն գիտակցում, ինչքան ժամանակ ու ջանք է պետք գործադրել, սովորեցնելու համար ուսանողներին լավ ընթերցել, գրել ու խոսել: Բոլորին հայտնի է, թե ուսումնական ծրագիրը ինչքան է լցունված ոչ անհրաժեշտ առարկաներով:

Այստեղ տեղին կլինի մի դեպք հիշել, որը տեղի ունեցավ ինձ հետ մի քանի տարի առաջ: Ես և պարոն Հիտչենսը միասին որոշեցինք համալսարանին կից փորձարարական ավագ դպրոցի սովորողների հետ մեծագույն գրքեր կարդալ: Դա նորարարություն էր համրվում, իսկ ոմանք էլ այն խենթ ձեռնարկում անվանեցին: Այդ



գրքերից շատերը նույնիսկ առաջին կուրսեցիներն ու քոլեջի բարձր կուրսեցիները չէին տեսել, որովհետև դրանք թողնվում էին որպես «աղանդեր» համալսարանի շրջանավարտների համար: Իսկ մենք պատրաստվում էին այդ գրքերը կարդալ աշակերտների հետ: Փորձարկման առաջին տարվա վերջին ես որոշեցի կիսվել իմ ուրախությամբ դպրոցի տնօրենի հետ: Ես հայտնեցի նրան, որ աշակերտները մեծածավալ գրքերը կարդում են ակնհայտ հետաքրքրությամբ՝ դատելով այն հարցերից, որ տալիս էին նրանք: Սուր և աշխույժ քննարկումները դասարանում տեսանելի կերպով ցույց են տալիս, որ մեր սովորողները մտածողության մակարդակով առաջ են ընկել ավագ կուրսեցիներից, որոնք հոգնել են անդադար լեկցիաներից, կոնսպեկտներից ու քննություններից: Հիմա մեր փորձարարական խումբը ի վիճակի է մրցել բարձր կուրսի ուսանողներին ու քոլեջի շրջանավարտների հետ: Բայց հենց սկզբում նկատելի էր, որ նրանք ընդհանրապես գիրք ընթերցել չգիտեն: Նրանց հետ շաբաթը մի քանի ժամ պարապելով մենք, ցավոք, հնարավորություն չունեինք քննարկել կարդացած գրքերը և միաժամանակ ընթերցանություն ուսուցանել: Ցավոք, այդ երեխաների բնածին կարողությունները ոչ ոք չի զարգացրել, չնայած կրթության գործընթացում դրանք մեծ նշանակություն ունեն:

«Ձեզ մոտ ինչպե՞ս է ընթանում ընթերցանության ուսուցումը»,\_ հարցրի ես դպրոցի տնօրենին, որը, ինչպես պարզվեց, ինքն էլ էր վաղուց մտածում այդ մասին: Նա կասկածում էր, որ ուսանողները այնքան էլ լավ չեն կարդում, բայց այդ հմտության ուսուցման համար ծրագրում ժամանակ չէր մնում: Տնօրենը թվարկեց ամենակարևոր միջոցները, որոնք այդ ուղղությամբ արդեն ձեռնարկվել են դպրոցի կողմից: Ես ինձ զսպեցի ու չասացի, որ եթե ուսանողները կարողանային կարդալ, ապա պետք չէին լինի այն բազմաթիվ կուրսերն ու բոլոր այդ առարկաները գրքերի վերաբերյալ: Տնօրենը շարունակում էր համոզել ինձ. «Ցանկացած դեպքում, եթե նույնիսկ ազատ ժամեր լինեին, ընթերցանության մեջ մենք չենք հասնի մեծ հաջողությունների, քանի մանկավարժական հոգեբանությունը չի վերջացրել իր հետազոտություններն այս ոլորտում»:

Ես մտահոգված էի: Ելնելով ընթերցանության իմ սեփական պատկերացումներից, ես չէի կարողանում պատկերացնել, թե այդ ինչ հետազոտություններ են կարող սովորողին ընթերցանության սովորեցնել, կամ դասավանդողին ընթերցանություն դասավանդել ուսանողին: Ես բավականին ծանոթ էի այս թեմայի մասին գիտական գրականության հետ: «Ընթերցանության հոգեբանությանը» նվիրված էին հազարավոր ինձ հայտնի հետազոտություններ ու բազմաթիվ հաշվետվություններ: Այնտեղ, որպես կանոն, խոսվում էր այքերի շարժման մասին, կախված տառատեսակից, էջի ձևաչափից, լույսի անկման անկյունից, կամ այլ մանրուքներից: Դիտարկվում էին օպտիկայի և սենսորային զգայունության տարբեր կողմերը: Նկարագրվում էին

բազմատեսակ թեստեր ու չափումներ, որոնք թույլ էին տալիս ստանդարտավորել արդյունքները ուսուցման տարբեր մակարդակներում: Ներկայացվում էին ընթերցանության զգայական կողմի լաբորատոր ու կլինիկական հետազոտությունների արդյունքները: Հոգեբանները կիսվում էին հայտնագործություններով, որոնց համաձայն որոշ երեխաներ նյարդայնանում ու զայրանում էին կարդալիս, իսկ մյուսները՝ հատկապես մաթեմատիկայի դասերի ժամանակ: Դրա հետ ես լիովին համաձայն եմ՝ էմոցիոնալ պրոբլեմները երբեմն բերում են վատ կարդալուն, կամ էլ դրա ուղիղ պատճառն են հանդիսանում: Լավագույն դեպքում վերը նշվածը ունի գործնական օգտագործման երկու ձև: Ի շնորհիվ դպրոցական վարչության թեստերի, ուսանողներին ավելի հեշտ է դասակարգել ըստ մակարդակների ու պարզել այս կամ այն գործընթացի արդյունավետությունը: Զգայարանների ու զգայական օրգանների ուսումնասիրությունը՝ հատկապես աչքի, որպես տեսողական օրգանի, օգնեց ստեղծել թերապեվտիկ ծրագիր, որը այսօր ընդգրկված է «բուժիչ ընթերցանության» մեջ: Բայց այս գործերից ոչ մեկը առնչություն չունի երեխաների ու դեռահասների նոր տեղեկատվություն ստանալու նպատակով ընթերցանության պրոբլեմի հետ: Ես չեմ ուզում ասել, որ ուսումնասիրությունները անօգուտ ու անկարևոր են: Ավելին, ես համոզված եմ, որ «բուժիչ ընթերցանությունը» շատ երեխաների է փրկել իսկապես լուրջ խնդիրներից: Բայց, ցավոք, ես ստիպված եմ արձանագրել, որ այն նույնչափ է վերաբերվում ընթերցողների դաստիարակությանը, ինչպես մկանային կոորդինացիայի զարգացումը գրողի դաստիարակության հետ, որը պիտի աչքերը օգտագործի վեպը գրելու ընթացքում: Որպեսզի պարզ դառնա միտքս, օրինակ բերեմ. Դիցուք դուք ուզում եք թենիս խաղալ սովորել: Դուք գնում եք մարզիչի մոտ ու ասում, որ ուզում եք դասեր վերցնել: Նա ուսումնասիրում է ձեզ ոտքից գլուխ, մի որոշ ժամանակ կորտում հետևում է ձեզ, այնուհետև անսպասելի ուղղամտությամբ հայտարարում, որ չի կարող ձեզ սովորեցնել: Պատճառը՝ Դուք մեծ խալ ունեք ոտքի մեծ մատի վրա, իսկ ոտքի տակ՝ գորտնուկ: Ընդհանուր առմամբ դուք վատ կեցվածք ունեք ու ուսերի շարժումները կաշկնդված են: Դուք ակնոցների կարիք ունեք, դուք ցնցվում եք, երբ գնդակին եք հանդիպում ու զայրանում, երբ բաց եք թողնում նրան: Դիմեք մատնահարդարին ու օստեոպատին: Գնացեք մերսողի մոտ, որ մկանները թուլացնեք: Ավելի ուշադիր ու հանգիստ դարձեք հոգեբանի օգնությամբ, կամ առանց նրա: Այս ամենը անելուց հետո, \_ ասում է մարզիչը, \_ եկեքինձ մոտ, ես ձեզ կսովորեցնեմ թենիս խաղալ: Այսպիսի խոսքերը կարող են շփոթեցնել: Բայց դրանք բավականին խելամիտ են հնչում: Իմաստ չունի ձեզ թենիս խաղալ սովորեցնել, մինչև դուք չվերացնեք բոլոր օբյեկտիվ խոչնդոտները: Նույնպես են վարվում մանկավարժ-հոգեբանները: Ժամանակին նրանք առանձնացրել են խնդիրները, որոնք խանգարում են մարդուն կարդալ սովորելուն, ավելի ստույգ, քան մարզիչը և մշակել են թերապիայի բազմապիսի տեսակներ «բուժիչ ընթերցանության» համար: Սակայն

այդպիսի թերապիայի ավարտից հետո դուք դեռ էլի կարիք կունենաք թենիս խաղալու կամ ընթերցել սովորելու: Բժիշկը, որը հեռացրել է գորտնուկը, ակնոցի բաղադրատոմս կգրի, կուղղի կեցվածքն ու կհանի էմոցիոնալ լարվածությունը, չէր կարող ձեզ թենիս խաղացող դարձնել: Նա կնպաստի մի մարդու ստեղծմանը, որը կկարողանա թենիս խաղալ սովորել: Հոգեբանները նույն կերպ են վարվում: Նրանք պարզում են ընթերցանության խնդիրն ու դեղատոմս գրում, դրա հետ մեկտեղ չհասկանալով, թե նչպես ձեզանից լավ ընթերցող սարքել: Հիմնականում բոլոր մանկավարժական ուսումնասիրությունները մի նպատակի են նախորդում՝ կարդալ սովորելուն: Նրանք բացահայտում ու հեռացնում են խոչնդոտները: Նրանք նպաստում են սահմանափակումներից ձերբազատվելուն, բայց թույլ չեն տալիս անկարողությունը հաղթահարել: Լավագույն դեպքում մարդը, որը այս կամ այն շեղումն ունի, նրանց միջոցով «ավելի նորմալ» և ուսման նկատմամբ ավելի ընկալունակ կդառնա: Բայց նույնիսկ «նորմալ» մարդը գիտելիք ստանալու կարիք ունի: Նա օժտված է ուսման տաղանդով, բայց չի ծնվում պատրաստի ունակությամբ: Այն պետք է հայտնաբերել ու զարգացնել: Շեղումների բուժումը օգնում է հաղթահարել բնածին հետամնացությունը կամ վաղեմի վնասվածքների հետևանքները: Բայց այդքանով նրա պոտենցիալը պարզապես սպառվում է, նույնիսկ եթե ձեռնարկված ջանքերի գործընթացի ժամանակ հաջողվում է բոլորին հավասարապես ուսման նկատմամբ ընդունակ դարձնել: Այդ պահից պետք է ակտիվ աշխատել հմտության զարգացման ուղղությամբ: Մի խոսքով ընթերցանության արվեստի իրական ուսուցումը սկսվում է արդեն մանկավարժական հոգեբանների իրավասությունից դուրս: Ավելի ստույգ՝ պետք է սկսվի: Բայց փորձը ցույց է տալիս, որ դա տեղի չի ունենում: Ինչպես ասել եմ, դա երկու պատճառ ունի: Առաջինը՝ ուսման ծրագիրը ընդհանուր առմամբ, կրտսեր դպրոցից մինչև քոլեջ, խցանված է մեծ քանակությամբ աշխատատար առարկաներով, որոնք խանգարում են հիմնական հմտությունների վրա կենտրոնանալուն: Երկրորդը՝ դասավանդողների մեծ մասը չի կարողանում կարդալ սովորեցնել: Եվ ընդհանրապես հանրահաշիվը, ընթերցանությունն ու գիրը ժամանակակից ծրագրում ներկայացված են սկզբնավորվող վիճակում: Նրանց կրտսեր դպրոցի առարկա են համարում, փոխանակ դրա ուսուցումը ընդարձակելու ողջ ուսման ժամանակաընթացքում: Արդյունքում բակալավրը գրելու և կարդալու արվեստի մեջ չի գերազանցում վեցերորդ դասարանցուն:

— 4 —

Այժմ ես կցանկանայի ավելի մանրամասն դիտարկել վերը նշված երկու պատճառները: Ինչ վերաբերվում է առաջինին, ապա խնդիրը թաքնված է ոչ թե դպրոցական ծրագրում գրելու, հանրահաշիվի և ընթերցանության առկայության մեջ, այլ այն բանում, թե ինչ աստիճանի են նրանում առկա դրանք և ինչ աստիճանի դրանք

պետք է զարգացնել: Ցանկացած մանկավարժ, նույնիսկ ամենառադիկալ նորարարը, կհամաձայնի, որ երեխաներին անհրաժեշտ են հիմնական հմտությունները՝ կարդալու և գրելու կարողությունը: Մակայն մինչ այժմ չկա մի կարծիք կրթված մարդու բացարձակ մինիմումի ու ժամանակի վերաբերյալ, որը անհրաժեշտ է սովորողին հասնելու իր նվազագույն մակարդակին:

Նախորդ տարի ինձ հրավիրեցին ռադիոկայան, մասնակցելու «Քաղաքային հանդիպում» հաղորդման ձայնագրմանը: Զրույցի թեման ուսուցման համակարգի վիճակն էր ժողովրդավարական միջավայրում: Ինձանից բացի այդ հաղորդմանը մասնակցում էր պրոֆեսոր Գյուլիկը Կոլումբիական համալսարանից և կրթության պետական հանձնաժողովի նախագահ պարոն Ջոն Ստուդերեկերը: Մենք ցուցաբերեցինք նախանձելի միասնություն. ընթերցանությունը, հանրահաշիվն ու գիրը անհրաժեշտ են ժողովրդավարական պետության բոլոր քաղաքացիներին: Մակայն համաձայնությունը նրանց միջև մակերեսային էր: Առաջինը՝ կարդալու, գրելու և հանրահաշիվի արվեստի մասին խոսելիս ես նկատի ունեի բակալավրի մակարդակը, իսկ իմ կուլեգաները՝ կրտսեր դպրոցի տարրական մակարդակը: Երկրորդ՝ նրանք խոսում էին գրել, կարդալու մասին, որպես ամբողջ այն բազմաթիվ նպատակների մի մասի, որին պիտի ծառայի ժողովրդավարական երկրի կրթությունը: Ես չէի հերքում, որ գրելն ու կարդալը միայն մի մասն են և ոչ ամբողջը, բայց չէի համաձայնվում իմ զրուցակիցների ձևակերպած նպատակների առաջնության հետ: Եթե հնարավոր լիներ թվարկել որակյալ կրթության հիմունքները, ես կասեի, որ շփման հմտությունները, որոնք մարդկանց կիրթ են դարձնում, մեր առաջնային պարտականությունն է ժողովրդավարական հասարակության պայմաններում, որը ուղղակիորեն կախված է կիրթ էլեկտորատից: Այսպիսին է իրավիճակը ընդհանուր առմամբ: Առաջինը պետք է լուծվեն ամենակարևոր խնդիրները: Հետո՝ համոզվելով, որ դրանք լուծված են, կարելի է ժամանակ և էներգիա ծախսել պակաս նշանակալի բաների վրա: Այնուամենայնիվ ոչ այնքան ժամանակակից դպրոցներում ու քոլեջներում գործերը այլ կերպ են դասավորվում: Ոչ այնքան կարևոր հարցերին տրվում է չափազանց մեծ նշանակություն: Առանձին քոլեջներում, որոնք երբեմն քիչ բանով են ավել դպրոցներից, հասարակ, երկրորդական առարկաները երբեմն կազմում են ծրագրի ողջ միջուկը: Այն, ինչը ի սկզբանե ֆակուլտատիվ էր համարվում, առաջին պլան է դուրս գալիս, իսկ ծրագրի հիմնական տարրերը մի կողմ են դրվում, ինչպես հնոտին՝ խորդանոց: Գործընթացի արդյունքում, որը սկսվեց առարկաների ինքնուրույն ընտրության համակարգի ներդրմամբ ու ավարտվեց պեդոգենտրիզմի ավելցուկով, սովորողների մտավոր զարգացմանն ուղղված հիմնական առարկաները մի կողմ էին դրվել կամ լրիվ դուրս մղվել: Սուտ հանդուրժողականության պոթոկումով պեդոգենտրիստները շփոթում են կարգապահությունը զինպատրաստության(мышца) հետ ու մոռանում, որ իրական

ազատությունը հնարավոր չէ, եթե միտքը ծանրաբեռնված է կարգապահություն պահպանելու հոգսերով: Երբեք չեմ հոգնի մեջբերելով Ջոն Դյուիի խոսքերը. «Երբ կարգապահությունը հասկացում է մտավոր իմաստով, այն նույնացվում է ազատության հետ՝ բառիս իրական իմաստով... Իրական ազատությունը՝ կարճ ասած, խելամիտ է. այն հիմնված է դաստիարակված մտքի ուժի մեջ»: Այսպիսով կարգապահության ենթակա գիտակցությունը թույլ է տալիս քննադատաբար ընթերցել ու գրել, ինչպես նաև հաջողությամբ կատարել ցանկացած հայտնագոծություն: Եվ այսպես տեսնում ենք, որ մտորելու արվեստը իսկական ուսման արվեստի է վերածվում ինչ որ մեկի օգնությամբ, կամ ինքնուրույն: Կրկնվեմ, ես չեմ պնդում, որ կրթությունը սպառվում է գրքով գրել, կարդալու կարողությամբ: Պակաս կարևոր չէ գրագետ ուսումնասիրություն կատարելու կարողությունը: Դրանից բացի պետք է տիրապետել քննարկվող առարկայի վերաբերյալ փաստացի գիտելիքների: Այդ կապակցությամբ ես ուսուցման համար նախատեսված ժամանակում խնդիրները լուծելուն խոչնդոտող պատճառ չեմ տեսնում: Բայց ընտրության անհրաժեշտության դեպքում, իհարկե, հարկ է ջանքերը կենտրոնացնել հիմնական հմտությունների վրա և խորահմտության հանձնել ցանկացած ուրիշ տիպի երկրորդական նշանակություն: Նա, ով կատարում է այլ ընտրություն, կրթությունը փաստերի ժողովածու է համարում, որոնք մարդը ստանում է դպրոցում և աշխատում է կրել ողջ կյանքի ընթացքում, չնայած այդ բեռը ժամանակի ընթացքում դառնում է ավելի ծանր ու պակաս պետքական: Իմ կարծիքով կրթության ամենախելամիտ մոտեցումը կայանում է նրանում, որ առաջնային դերը տվյալ գործընթացում հատկացվում է կարգապահությանը: Դրանով հանդերձ դպրոցում երեխան ոչ այնքան սովորում է, ինչքան իրացնում է ուսման մեթոդը, այսինքն բոլոր հասանելի միջոցներով ինքնուրույն սովորելու հմտությունը: Ուսումնական հաստատությունները արդյունավետ են միայն այն դեպքում, եթե հնարավորություն են տալիս ուսումը շարունակել ողջ կյանքի ընթացքում: Կարդալու հմտությունը ու հետազոտության մեթոդիկան նորի հայտնագործման և ուսուցման հիմնական գործիքներն են: Հենց այդ պատճառով դրանք կրթության խելամիտ համակարգի հիմնական նպատակը պետք է լինեն: Ես լիովին համաձայն եմ պարոն Կարլայլի հետ, որը պնդում է, որ «համալսարանը, կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատություն կարող են իրականացնել մեզ համար այն, ինչից սկսվում է կրտսեր դպրոցը՝ սովորեցնել կարդալ»: Ես համաձայն եմ նաև Կորնելլայից պրոֆեսոր Տեննիի հետ, որ ցանկացած ուսումնական հաստատություն, որը ուսանողներին կարդալ է ստովորեցնում, նրանց ձեռքն է տալիս «ցանկացած բարձրագույն կրթության հիմնական գործիքը: Այդպիսով ուսանողը ցանկության դեպքում կարող է ինքնուրույն սովորել»: Դպրոցները, որոնք իրենց սովորողներին կարդալ են սովորեցնում, կարող են նրանց միանգամից ուսանող դարձնել, որոնք այդպիսին կմնան միշտ ու ամենուր և՛ դպրոցում, և՛ նրա պատերից դուրս: Թույլ տվեք ձեր ուշադրությունը ներկայացնել

մի տարածված սխալի վրա, որ կատարվում է շատ մարդկանց կողմից ընթերցանության ընթացքում, հատկապես դասավանդողների կողմից: Օրինակ գրողն ասում է, որ որոշ բառեր ունեն առաջնային նշանակություն, կամ ավելի կարևոր են, քան մյուսները: Վաստ ընթերցողը դրանից ենթադրություն է անում, որ բացի այդ բառերից, որ նշել է գրողը, կարևոր ոչինչ չկա: Ես պրեզիդենտ Հաթչինսի «Բարձրագույն կրթությունը Ամերիկայում» աշխատանքի վերացենգավորումներ եմ կարդացել, որոնց հեղինակները ակնհայտորեն դեկավարվել են կամ սխալ կարծիքով, կամ չար մտադրությամբ: Նրանք պնդում են, որ Հաթչինսը անվանելով կրթվածությունը հումանիտար և ընդհանուր կրթության անհրաժեշտ կազմությունը, չեզոքացնում է դրանով մնացած ամեն ինչ: Պնդումը, որ գրագիտությունը առաջնային կարևորություն ունի դեռ չի նշանակում մնացած նպատակների նսեմացում մինչև երկրորդական նշանակություն: Նույն կերպ էլ իմ խոսքերը կարող են սխալ մեկնաբանել դասավանդողները կամ կրթության մասնագետները: Հնարավոր է նրանք ավելի հեռուն գնան ու մեղադրեն ինձ «մարդկային ամբողջության» հերքման մեջ, քանզի ես չեմ դիտարկել զգայական դաստիարակության և բարոյականության ուղիների կազմավորումն ու դերը կրթության մեջ: Սակայն չդիտարկելով այս կամ այն բանը, պարտադիր չէ, որ ես այն հերքեմ: Այս գիրքը նվիրված է ընթերցանությանը, այլ ոչ թե ամեն ինչին: Այսպիսով ենթատեքստից կարելի է հետևել, որ մեզ առաջին հերթին հետաքրքրում է ինտելեկտուալ կրթությունը, այլ ոչ թե կրթությունն ընդհանրապես: Եթե ռադիոհաղորդման ձայնագրության ժամանակ ինձ հարցնեին. «Ի՞նչն էք համարում ուսանողի համար առավել կարևոր. Ընթերցանությունը, գի՞րքը, հանրահաշի՞վը, թե՞ ֆարոյական հատկանիշները»: Ես կպատասխանեի այսպես. «Դժվար է ընտրել ինտելեկտուալ և բարոյական հատկությունների միջև, բայց եթե ընտրելու կարիք լիներ, ես իմ ձայնը կտայի բարոյականությանը, որովհետև խելքը առանց բարոյականության կարելի է շահագործել, ինչպես և այն դեպքում, եթե մարդը գիտելիք և հմտություն է ստացել, բայց չի հասկանում իր նպատակները»: Գիտելիքներն ու մտավոր կարողությունները ամենագլխավորը չեն կյանքում: Ավելի կարևոր է ճիշտ կողմնորոշվել սեփական նախապատվության մեջ: Ընդհանուր առմամբ կրթությունը պետք է շոշափի ոչ միայն մտավոր զարգացումը: Ես համոզված եմ, որ գիտակցության համար ամենակարևորը հմտություններն են, որոնց միջոցով կարելի կլինի այն ավելի կազմակերպված դարձնել:

— 5 —

Անցնենք գրել, կարդալու հարցում դպրոցների անկարողության երկրորդ պատճառին: Առաջինը կայանում էր նրանում, որ դպրոցները թերագնահատում են խնդիրների կարևորությունն ու հետևաբար չեն հասկանում, որ նրա լուծման համար առաջին հերթին շատ ժամանակ ու ջանք է պահանջվում: Երկրորդ պատճառը ես տեսնում եմ նրանում, որ մշակույթը համարյա կորսված է: Ես խոսում եմ

հումանիտար մշակույթի մասին, որը առաջ անվանում էին քերականություն, տրամաբանություն ու հռետորություն: Հատկապես կարդալու, խոսելու և լսելու կարողության տիրապետման համար էին հնում բակլավրի ու մագիստրի կոչում տալիս: Ցանկացած մեկը, ով գիտեր քերականության, տրամաբանության ու հռետորության օրենքները, գիտեր, որ դրանք են դեկավարում մեր գործողությունները մարդկանց հետ շփման գործընթացում: Բառերի ու տերմինների, նախադասությունների ու նախդիրների կանոնները ունեն հստակ քերականական ու տրամաբանական նախադրյալներ: Ապացուցումների ու հիմնավորումների կանոնները անկասկած տրամաբանական են: Հեղինակի շեշտադրումների մեկնաբանությունների մեթոդը ուղիղ կապ ունի հռետորության հետ: Ես ուզում եմ ասել, որ հումանիտար մշակույթի կորուստը մեծ մասամբ բացատրում է մեր ընթերցելու, ինչպես նաև ուսանողներին դրա ուսուցման անկարողությունը:

Խոսելով մշակույթի կորուստի մասին, ես նկատի չունեմ քերականության, տրամաբանության ու հռետորության լրիվ անհայտացումը: Համալսարաններում դեռ կան մասնագետներ, որոնք համապատասխան օժանդակության դեպքում անց են կացնում իսկական գիտական հետազոտական աշխատանքներ այդ ասպարեզում: Երևի լսել եք «նոր» առարկայի մասին, որը կոչվում է սեմանտիկա: Իհարկե այդ առարկան նոր չէ, այն գոյություն ուներ դեռ Պլատոնի, Արիստոտելի ժամանակներում: Սեմանտիկան դա ընդամենը բառերի քերականության ու տրամաբանության տեսանկյունից օգտագործման սկզբունքների գիտական ուսումնասիրության նոր անվանումն է: Քերականության հնադարյան ու միջնադարյան մասնագետները, ինչպես նաև տասնութերորդ դարի գրողները, ինչպիսիք են Ջոն Լոքը, կարող էին ժամանակակից «սեմանտիկներին» սովորեցնել նրանց դեռ անհայտ մի շարք սկզբունքներ, որոնց այդ «նորահայտները» ստիպված չէին լինի հայտնագործել, դրա համար պետք էր ընդամենը մի քանի անհրաժեշտ գիրք կարդալ: Հատկանշական է, որ հենց այդ ժամանակ միջին դպրոցի ծրագրից համարյա անհետացած քերականությունը, տրամաբանությունը ուսումնասիրում են ոչ մեծ քանակությամբ քոլեջներ, իսկ ասպիրանտուրաները վերածնում են այդ առարկաները, հավակնելով օրիգինալության: Իհարկե սեմանտիկայի մասնագետները քիչ ջանք չեն գործադրում քերականության ու տրամաբանության վերածնունդի համար, բայց ես մնում եմ իմ կարծիքին այդ մշակույթի վերացման վերաբերյալ: Ահռելի տարբերություն կա թեորիական գիտության և հմտության պրակտիկ կիրառման մեջ: Ո՞վ կհամաձայնի, որ իրեն կերակրի մի խոհարար, որի միակ տաղանդը խոհարարական գրքից մեջբերումներ անելն է: Շատ հին զավեշտ կա այն մասին, որ ամենաանտրամաբանական մարդիկ որոշ տրամաբաններն են: Երբ ասում եմ, որ հումանիտար մշակույթը ժամանակակից կրթության ու մշակույթի մեջ

իջել է ավելի ցած, նկատի ունենալ պրակտիկ քերականությունն ու տրամաբանությունը, այլ ոչ թե մտահայեցական ծանոթությունը այդ գիտությունների հետ:

Արդեն վաղուց հայտնի է, որ նրոպական մշակույթի այն ժամանակաընթացքում, երբ մարդիկ ավելի վատ էին կարդում ու գրում, մեծ աղմուկ էին բարձրացնում այն մասին, որ իրենցից առաջ գրված ամեն բան հնարավոր չէ կարդալ: Այդպես է տեղի ունենում նաև հիմա: Խեղճ սեմանտիկներ, նրանք չգիտեն, որ մատնում են իրենց ոտքից գլուխ՝ կազմելով անհասկանալի գրքերի ցուցակները: Երևում է սեմանտիկան նրանց այնքան էլ չի օգնում, էթե նրանք ավարտելով նրա բոլոր ծեսերը, առաջվա պես անկարող են մի քանի տեքստ կարդալու:

— 6 —

Այն փաստը, որ հումանիտար մշակույթը լայնորեն չի դասավանդվում դպրոցներում ու նրանց սահմաններից դուրս, ակնհայտ է արդյունքներից. ուսանողները չեն կարողանում գրել, կարդալ, իսկ դասավանդողները չգիտեն ինչով օգնել նրանց: Բայց սկզբնապատճառը բարդ ու խճճված է: Որպեսզի բացատրեմ, թե ինչպես հասանք կրթության այժմյան իրավիճակին, ստիպված եմ մանրամասն ուսումնասիրել ժամանակակից պատմությունը, սկսած տասչորսերորդ դարից: Ես կսահամանափակվեմ երկու մակերեսային բացատրություններով: Առաջին: Գիտությունը՝ գլխավոր ձեռքբերումն է մեր ժամանակների: Մենք փառաբանում ենք բոլոր հարմարությունները ու հարմարավետության միջոցները, մենք գնահատում ենք բնության նկատմամբ այն իշխանությունը, որը նրանք տալիս են մեզ: Գիտական մեթոդով հմայված՝ մենք գիտության էլիքսիր ենք համարում նրան: Ասեմ միայն, որ որոշ դեպքերում և որոշակի մշակութային պայմաններում կրթության համակարգին բնորոշ է հիմնվել մտածելակերպի և ուսման գիտական մեթոդի վրա՝ լրիվ հերքելով մնացյալը: Այսպիսով մենք արհամարեցինք մյուսներից սովորելը հոգուտ այլընտրանքային մեթոդի՝ ինքնուրույն հայտնագործության: Եվ այսպես բոլոր հումանիտար հմտությունները, որոնք անհրաժեշտ են առաջին մեթոդով սովորելու համար, օրինակ կարդալու հմտությունը, մոռացվեցին, բայց սկսեց ծաղկում ապրել անկախ հայտնագործության հմտությունը:

Երկրորդ բացատրությունը ծագում է առաջինից: Գիտության դարում, երբ անընդհատ հայտնագործություններ են տեղի ունենում, մեր իմացության ուղեբեռը անընդհատ համալրելով, մենք հակվում ենք այն մտքին, որ անցյալից ոչինչ չունենք սովորելու: Մեծագույն գրքերը գրադարանի դարակներում հետաքրքիր են որպես հնություն: Թող նրանցով զբաղվեն նրանք, որոնք գրում են մշակույթի պատմության մասին: Մեզ հուզում են հասարակության նպատակները, շրջակա միջավայրը, դրա համար մենք կամ պետք է կամ ինքներս գիտնական դառնանք, կամ էլ անընդհատ կարդանք թերթերում վերջի գիտական համաժողովների ու հայտնագործությունների մասին:



Ինչու՞ ծանրաբեռները մեզ՝ կարդալով մեծագույն գործերը այժմ հանգուցյալ գիտնականների: Նրանք մեզ ոչինչ չեն սովորեցնի: Նման վերաբերմունքը վայրկյանապես տարածվում է ն՝ փիլիսոփայության, ն՝ բարոյագիտության, ն՝ քաղաքական ու տնտեսական ուսմունքների, մեծագույն պատմական աշխատանքների, գրված մինչ «վերջին ուսումնասիրությունների դարաշրջանը» և նույնիսկ գրական քննադատության վրա: Պարադոքսը նրանում է, որ մենք այդպիսով հերքում ենք անցյալը, նույնիսկ այն ուղորտներում, որտեղ չի օգտագործվում փորձարարական մեթոդը, որովհետև դրանց վիճակի վրա չէր կարելի ազդել ու փոփոխել փորձարարության արդյունքներով: Ցանկացած սերունդ կարող է մարդկությանը տալ ընդամենը մի քանի մեծագույն գիրք, և այդ պատճառով նրանց մեծ մասը անպայման վերաբերվում են անցյալին: Դադարելով կարդալ անցյալի այդ գործերը, մենք շուտով կդադարենք կարդալ ժամանակակից արժեքավոր գործերը, բավարարվելով «երկրորդ ձեռքի» վերապատումներով:

Արդյունքում մենք դադարում են կարդալ սովորելուց:

Հնարավոր չէ բարելավել թենիս խաղալու հմտությունը՝ ունենալով հակառակորդ, որին հեշտ է հաղթել: Այդպես էլ հնարավոր չէ զարգացնել կարդալու հմտությունը, գերադասությունը տալով այն գրքերին, որոնք լուրջ ջանքեր և պաշարներ չեն պահանջում: Մեծագույն գրքերը դադարել են գիտության աղբյուրի ավանդական դեր խաղալուց, արդյունքում մենք աստիճանաբար կորցնում ենք ուսանողներին կարդալ սովորեցնելու հնարավորությունը: Չարգացնել նրանց ընդունակությունները ժամանակակից ամենօրյա ցածրորակ գրականության հիմքի վրա անհնարին է: Չի կարելի ուսանողին ընթերցել սովորեցնել, եթե նրանցից հմտության ամենօրյա հետևողական բարձր մակարդակի «պարապմունք» չենք պահանջելու:

Այդ արատավոր շրջանի երկրորդ յուրահատկությունը պակաս նենգ չէ: Պարզվում է իմաստ չունի ուսանողների հետ մեծագույն գրքեր ընթերցելը, եթե նրանք դեռ դպրոցում ընթերցանությանը չեն վարժվել, որի հետևանքով չեն շարունակելու աշխատանքը իրենց վրա հետագա ուսման ընթացքում: Դրանում է կայանում, եթե հիշում եք, իմ Կոլումբիայում անցկացրած կուրսերի հիմնական խնդիրը: Ես կասկածում եմ, որ այդ խնդիրը մինչ օրս գոյություն ունի մյուս կուրսերում: Չի կարելի ուսանողների հետ գիրք քննարկել ու միաժամանակ ընթերցանություն սովորեցնել միայն մեկ կուրսի շրջանակներում: Դա դառնում է բացարձակ ակնհայտ, երբ առջևդ տեսնում ես մի ուսանողի, որը կրտսեր ու միջին դպրոցներում չի ստացել ընթերցելու հմտության թեկուզ միևնույն զարգացում, իսկ քուլեջի մյուս կուրսերը հիմա էլ հասկանալով դա, ընթերցանության կարողություն չեն պահանջում: Դա լրիվ չափով վերաբերվում է նաև մեր Չիկագոյի փորձին, որի մասին արդեն հիշատակել եմ: Պարոն Հիթչենսի հետ արդեն տաս տարի շարունակ կարդում ենք մեծագույն գրքեր:

Մեզ համարյա չի հաջողվել հասնել մեր նպատակին՝ ուսանողներին հումանիտար կրթություն տալ: Ես հումանիտար գիտությունների բակալավրի կոչմանը արժանի ուսանող եմ համարում միայն նրան, ով ունակ է կարդալ մեծագույն գրքեր և կարդացել է թեկուզ դրանցից մի քանիսը պետք եղած մակարդակի վրա: Եթե այսպիսին է չափանիշը՝ մենք հազվադեպ ենք հաջողության հասել: Բիարկե խնդիրը հնարավոր է, երևի նաև մեր մեջ էր, բայց ես հակված եմ մտածելու, որ համարյա անհնարին է հաղթահարել իներցիան ու պատրաստության պակասը առանձին վերցված կուրսում: Կրթության ռեֆորմը պետք է սկսել կրտսեր դպրոցից և դրանից հետո արմատապես վերանայել քոլեջի կրթական համակարգը, եթե ուզում ենք, որպեսզի մինչ բակալավրի դիպլոմի շնորհման պահը, ուսանողը լրիվ չափով տիրապետի ընթերցանության կարողությանը և որակյալ գրականության ճաշակ ունենա: Ես գիտեմ միայն մի քոլեջ այս երկրում, որը ջանում է հումանիտարներ դաստիարակել բառիս իրական իմաստով: Դա Աննապոլիսի Մենթ-Ջոն քոլեջն է Մերիլենդ նահանգում: Այնտեղ գիտակցում են, որ ուսանողների ուսման չորս տարվա ընթացքում պետք է սովորեն կարդալ, գրել, մտածել ու լաբորատոր հետազոտություններ վարել, միաժամանակ հետազոտելով մեծագույն գրքերը: Բիարկե Մենթ-Ջոնի քոլեջում կան թերություններ, որոնք պիտի հաղթահարվեն, բայց, ինչը ամենագլխավորն է, ուսանողների համար այստեղ հետաքրքիր է, դրա համար նրանք պատրաստ են խնդիրներ լուծել, որոց կատարումը ոչ մի ուրշ քոլեջներում չեն պահանջում: Դրա հետ մեկտեղ ուսանողները ազատությունից զրկված չեն, կամ էլ իրավապես ընկճված չեն զգում այն բանի համար, որ չեն կարող ինքնուրույն ընտրել առարկաները: Քոլեջը ինքն է նշանակում այն կուրսերը, որոնք առավել օգտակար կլինեն կրթության տեսանկյունից: Ուսանողները համաձայնվում են այդ ընտրության հետ, բայց, ինչպես Ամերիկայի մյուս քոլեջներ, դպրոցից հետո Մենթ-Ջոնի քոլեջ են գալիս բացարձակ անպատրաստ: Ցավով եմ արձանագրում ևս մի խնդրի առկայությունը, որը կայանում է ամերիկյան հասարակության անկարողության մեջ, և՛ ծնողների, և՛ դասավանդողների, գնահատել Մենթ-Ջոն քոլեջի իրական ներդրումը կրթության մեջ: Ոչ այնքան վաղուց նախագահ Բաստերը իր ամանամյա հաշվետվության ժամանակ պերճախոս ձևով խոսեց ինտելեկտուալ առարկաների առաջնային կարևորության մասին և ուսանողների շրջանում գրելու և կարդալու մակարդակի բարձրացման ուղղությամբ աշխատելու մտադրության մասին: Հետո նա ամփոփեց իր խոհերը ավանդական ուսուցման մասին միայն մեկ պարբերության մեջ: Միայն գիտնական-հումանիտարն է ի վիճակի հասկանալ, ինչքան քիչ բառեր ու մտքեր են ժամանակակից աշխարհում թեկուզ մեկ նորույթ պարունակում: Հույների ու հռոմեացիների ահռելի հաղթանակը՝ հումանիտար խստակյացությունը միջնադարյան մտածողների, կայանում էր մարդկային բնության համարյա բոլոր խնդրի ըմբռնման, մեր մտադրությունների շմեցուցիչ ամբողջականությամբ ու խորաթափանցությամբ վերծանելու մեջ: Ցավոք, այդ զարմանալի ունակությունները,

որոնք պիտի առաջնորդեին քաղաքակիրթ մարդկանց կյանքը, հայտնի են միայն շատ քչերին, մինչդեռ մեզնից մեծ մասը միանման են ընդունում ինչպես հին ակնհայտ սուտը, այնպես էլ հին ստուգված ճշմարտությունը՝ դրանք երկուսն էլ գրավիչ են իրենց նորությունով: Եթե այդ մարդիկ դեռ դպրոցում ու քոլեջներում սովորեին կարդալ գրքեր, որոնք կազմում են մարդկային մշակութային ժառանգությունը, նրանք կարող էին ավելի երջանիկ լինել: Ինչու՞ է այդպես լինում: Դրան շատ պատճառներ կան: Բայց վերջինը դրանցից բոլորին հայտնի հետաքրքրությունն է իներցիայով: Բացասական դեր է խաղում այն, որ քոլեջի դասավանդողների մեծ մասը գերադասում են զարգանալ նեղ մասնագիտացված ոլորտում, արհամարհելով հումանիտար կրթությունը ընդհանուր առմամբ: Գոյություն ունի նաև ուրիշ պատճառ, որը կայանում է ընդհանուր ընթերցանության նկատմամբ անտարբերության, նրա էության ըմբռնման պակասի մեջ:

— 7 —

Իմ նկարագրած իրավիճակը դասավորվել է ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլ նրա սահմաններից դուրս: Հասարակությունը վճարում է կրթության համար, նա պետք է բավարարված լինի նրա արդյունքով: Կա միայն երկու բացատրություն, ինչու՞ մինչ այժմ չեն սկսվել մասսայական բողոքները՝ կամ դա հասարակությանը չի հուզում, կամ էլ նա չի հասկանում ինչը այնպես չի ընթանում: Առաջինին հավատա չի գալիս: Ուրեմն պատճառը երկրորդի մեջ է: Կրթության համակարգն ու մշակույթը, որտեղ նա գոյություն ունի, աջակցում են միմյանց: Դա էլ իր ձևով արատավոր շրջան է: Կարծում եմ այն կարելի է ճեղքել մեծերի հետ մեթոդական աշխատանքի միջոցով, բացատրելով նրանց դպրոցի խնդիրները, որտեղ հիմա գնում են նրանց երեխաները: Ես ավելի շուտ կգերադասեի հաղթահարել հասարակության արհամարանքը, քան դիմել կրթության ոլորտի որոշ կոլեգաներին: Այն, որ հասարակությունը արհամարանքով է վերաբերվում ընթերցանությանը, հարցեր չի առաջացնում: Գրքի հրատարակիչները դա նույնպես գիտեն: Բայց միգուցե ձեզ հետաքրքիր կլինեն լսել, թե ինչ են նրանք ասում ձեր՝ լայն հանրության, իրենց նպատակային լսարանի մասին: Այսպիսով թույլ տվեք մեջբերել քաղվածքներ մի հրատարակչի դիմումից իր գործընկերներին: Այն հրապարակված էր մասնագիտական շաբաթաթերթում: Սկզբում այդ հրատարակիչը ասում է, որ. «քոլեջների շրջանավարտները, որոնք ընթերցել չեն կարողանում, դա ամերիկյան կրթության մեթոդի դատապարտումն են և երկրի հրատարակչությունների և գրախանութների չընդհատվող փորձությունը»: Քոլեջների դասավանդողների մեծ մասը ընթերցել չգիտեն, բայց շատ են նրանք, որոնց անտարբերությունը ընթերցանության նկատմամբ կարելի է դասել մասագիտական հիվանդության շարքին»: Նա ճիշտ էր հասկացել խնդրի էությունը. «Ուսանողներին սովորեցնում են դասավանդողները, որոնք իրենք են տուժել նույնանման կրթական

անգրագիտությունից: Հիմա նրանք բացեիքաց, կամ անգիտակցաբար հակակրանք, կամ հետաքրքրության բացակայություն ունեն ընթերցանության նկատմամբ... Այդ պատճառով մենք ամեն տարի տեսնում ենք միևնույն պատկերը՝ քոլեջի դարպասներից դուրս է գալիս չհասունացած բակլավիրը, որը փոխանակ կանգնելու հետագա ինքնակատարելագործման ճանապարհին ու ողջ կյանքում սովորելու և ընթերցելու, փախչում է ուսումից, ինչպես ժանտախտից»: Հետո նա կոչ է անում հրատարակչություններին ու գրախանութներին ներդրում անել ազգին ներգրավելու ընթերցանության մեջ. «Եթե այս երկրի հինգ միլիոն շրջանավարտները տաս տոկոս իրենց ժամանակից ծախսեն ընթերցանության վրա, դա ահռելի արդյունք կտա: Եթե մարդիկ ընդհանրապես հաճախ փոխեին իրենց ուղեղի սննդակարգը, կամ վերալիցքավորեին իրենց մտավոր մարտկոցները այնքան հաճախակի, ինչքան այսօր գնում են խաղային քարտերը մաշվածների փոխարեն, մեր երկիրը կարող էր ինչ որ կերպ վերակենդանանալ... Հիմա մեզ ոչ մի կերպ կարդացող երկիր չես անվանի: Մենք հուսահատ կառչում ենք լրագրերից և, կարծես թմրադեղերով, ներարկվում ենք ցածրորակ ֆիլմերով... Երբեմն մարդիկ հիանում են պայծառ բեստսելլերներով, ինչպիսիք են «Պատմության ակնարկ», «Փիլիսոփայության պատմությունը», «Մտքի արվեստը» կամ «Վան Լուսի կենսագրությունը», գրքերով, որոնք վաճառվում են հարյուր հազարավոր նմուշներով և երբեմն գրավում միլիոնանոց լսարան: Կարող եմ ասել. «Դա բավական չէ՝»: Ես անկեղծորեն ծափահարում եմ Ուոլտեր Պիտկինին, որը խորհուրդ է տալիս իր շրջանավարտներին. «Մի վաճառեք գրքերը ու պահպանեք ձեր դիպլոմները: Եթե հարկ լինի, վաճառեք դիպլոմները, եթե որևէ մեկը այն գնի, բայց ձեզ պահեք գրքերը»: «Միլիոնավոր մարդիկ, որոնք կարողանում են կարդալ ու դրա հետ մեկտեղ լրագրեր ու թերթեր են կարդում, երբեք գիրք չեն կարդա»: Նա նկատում է, որ նրանց կարելի է հետաքրքրել գրքերի ընթերցանությամբ, եթե դրանք ավելի նմանվեին լրագրերի հոդվածներին, այսինքն ավելի կարճ լինեին, ավելի հասարակ և ընդհանուր առմամբ հարմար լինեին վազքի մեջ կարդալու: Նման մի պլան, «Հանրային գրադարան» անվանումով հայտարարված էր որպես «լուրջ գրքերի ընթերցանության ծավալների ընդարձակման գիտական մեթոդ» և, ըստ իս, վարկաբեկել է իր նպատակը: Չի կարելի մարդկանց կանչել դեպի վեհ բարձրություններ՝ իջնելով նրանց մակարդակին: Նրանք ձեզ կպահեն այնտեղ, որովհետև ձեզ ավելի հեշտ է այնտեղ մնալը, քան նրանց՝ վեր բարձրանալը: Չի կարելի գրքերը դարձնել պակաս նման գրքի, իսկ մարդկանց՝ ընթերցողին առավել նման: «Հասարակական գրադարանի» պլանը նույնքան անօգուտ է, որքան Հարվարդի ողբը մասնավոր դպրոցների գերիշխանության վերաբերյալ: Վերջիններս մինչ այժմ չեն հասկանում, որ նրանց միակ ելքն է Հարվարդում կրթության մակարդակը ավելի բարձրացնել, քան այդ դպրոցների սովորողներինն է: Հրատարակիչներին հուզում է ոչ այնքան մեծագույն գրքերի ընթերցումը, որքան նոր ստեղծագործություններինը, որոնք կարելի է հրատարակել, ընթերցողի առկայության դեպքում: Բայց նրանք

գիտեն, կամ պետք է իմանան, որ այս կարգի երկու գրականությունն էլ փոխկապակցված են: Հայտնագործելու համար կարդալու կարողությունն ու ցանկությունը այն է, առանց որի հնարավոր չէ լուրջ ընթերցանությունը: Հնարավոր է, այդպիսի հերթականությունը աշխատում է և հակառակ ուղղությամբ: Ընթերցողը կարող է անցնել ժամանակակից լավ գրքերից մեծագույն գրքերի ընթերցանությանը ու հակառակը: Ես համոզված եմ, որ մարդը, ընթանալով մի ուղղությամբ, անպայման կանցնի երկրորդին: Կարծում եմ, որ դեպքերի նման զարգացումը ավելի հավանական կդառնա, եթե նա կարդա գոնե մի մեծագույն գիրք ու հաճույք ստանա հեղինակի վարպետությունից:

— 8 —

Այսպիսին է իմ դառը պատումը: Ամեն կողմից քիչ չեն լավել ատամների կրճտոցներ, երբ խոսք է գնացել ազգի ճակատագրի մասին: Եթե ձեզ դուր չեն գալիս իմ խոսքերը կարող եք ողբալ «նոր իրադրության» վրա: Կամ էլ դուք այն հոռետեսն եք, որ կասի, թե «մի՞շտ է այդպես եղել»: Բայց ես չեմ համաձայնի այդ պնդման հետ: Եվրոպական պատմության մեջ եղել են ժամանակներ, երբ ընթերցանության մակրոակը զգալի չափով ավել էր այժմյանից: Օրինակ. լավ հայտնի է Միջնադարի վերջին ժամանակահատվածը, երբ մարդիկ կարողացել են ավելի լավ հասկանալ տեքստը, քան այժմյան ամենաուժեղ ընթերցողները: Իհարկե այն ժամանակ գրագետ մարդիկ ավելի քիչ էին, նրանք ավելի քիչ գրքեր ունեին ու մարդիկ ավելի շատ էին կախված գրքերից՝ որպես գիտելիքի միակ աղբյուր: Սակայն նրանք կարողանում էին ընկալել գիրքը, որոնց գնահատում էին, իսկ մենք այսօր զրկված ենք այդ տաղանդից: Հնարավոր է, մենք չենք հարգում ոչ մի գիրք այնպես, ինչպես Աստվածաշունչը, Ղուրանն ու Տալմուտը, Արիստոտելի տեքստերը, Պլատոնի երկխոսությունները կամ Հուստինյանոսի «Ինստիտուցիաները»: Ինչպիսիք էլ որ եղել են այդ մարդիկ, բայց հենց նրանք են բարձրացրել ընթերցանության արվեստը իրենց ժամանակի մեծագույն մակարդակի վրա: Մենք վաղուց պետք է հաղթահարենք հիմար նախապաշարումները Միջնադարի վերաբերյալ ու դիմենք Ավետարանի տեքստի բացահայտմանը, Հուստինյանոսի գործերի քննարկմանն ու Արիստոտելի գործերի մեկնաբանությանը, որպես ընթերցանության կատարյալ նմուշների: Բացատրություններն ու մեկնաբանությունները իրենցից երբեք սեղմ վերապատում չեն ներկայացնում: Դրանք մեծագույն տեքստերի վերլուծական ու մեկնաբանորեն ընթերցումն է: Պետք է խոստովանեմ, որ ես էլ շատ նոր բան իմացա գրականության մասին, ուսումնասիրելով միջնադարյան մեկնաբանությունները: Կանոնները, որոնց մասին ես կպատմեմ, կազմավորվել են իմ կողմից, երբ հասկացել եմ, թե ինչպես էին միջնադարյան ուսուսիչները կարդում իրենց սովորողների հետ միասին: Ի տարբերություն տասներկուերորդ և տասներեքերորդ դարերի, ժամանակակից դարաշրջանը ձգտում է դեպի տասվեցերորդ, տասյոթերորդ խավար ժամանակները:

Այդ ժամանակներում գրադարանները կամ վառում էին, կամ էլ փակում: պակասում էին գրքերն ու ընթերցողները: Այսօր մեր հայեցողության տակ են ավելի շատ գրքեր ու գրադարաններ, քան երբևէ մարդկության պատմության մեջ: Որոշակի իմաստով կարդալ իմացող մարդիկ նույնպես շատ են: Բայց իրական իմաստ ունի ընթերցանությունը իրական իմաստով: Հաշվելով ընկալելու համար կարդալու քանակը, կարելի է համարձակ փակել գրադարանները, կանգնեցնել տպագրական հաստոցները: Բայց մենք ապրում ենք ժողովրդավարական ժամանակաշրջանում, կասեք դուք: Մեր հասարակության սկզբունքները մարդասիրական են, թող քաղաքացիների մեծ մասը կարդա՝ թեկուզ ոչ շատ, քան թե փոքր մասը՝ լավ կարդա: Դրանում, անկասկած ճշմարտության մասնիկ կա: Ժողովրդավարական պրոցեսում իրական մասնակցությունը գրագիտության որոշակի մակարդակ է պահանջում: Ժամանակավորապես թողնենք ուշ Միջնադարյան ժամանակաշրջանը ու համեմատություն անցկացնենք այսօրվա և տասնութերորդ դարի միջև, որը դարձավ իր բնույթով լուսավորության դար ու համապատասխան չափանիշներ առաջադրեց: Հասարակության ժողովրդավարացումը դեռ այն ժամանակ սկսվեց: Այդ շարժման առաջատարները, ԱՄՆ-ում և նրա սահմաններից դուրս գերազանց հումանիտար կրթություն ունեին, որը չես ստանա ոչ մի ժամանակակից քոլեջում: Մարդիկ, որոնք գրել ու հաստատել էին Սահմանադրությունը, գրել ու կարդալ գիտեին: Այսօր պետությունը միջոցներ է ձեռք առել մասսայական կրթության ավելի ինտենսիվ տարածման ուղղությամբ, քան տասնութերորդ դարում էր: Բայց կրթությունը ոչ մի կերպ չի կարող կորցնել իր մարդասիրական բաղկացուցիչ մասը: Եթե մենք ուզում ենք պաշտպանվել ցանկացած արտաքի սպառնալիքից, անհրաժեշտ է յուրաքանչյուր մակարդակի վրա ու հասարակության բոլոր անդամների համար վերականգնել հենց այն հումանիտար կրթության ավանդույթը, որը կարգապահության միջով տանում է դեպի ազատություն, որը ժամանակին թույլ տվեց ժողովրդավարությանը մեր երկրում հաղթանակ տանել: Բավական է կարդալ Ջոն Ադամսի ու Թոմաս Ջեֆերսոնի աշխատանքները, Համիլտոնի, Մեդիսոնի ու Ջեյի, որպեսզի հասկանանք, որ նրանք կարողանում էին մեզանից ու մեր այժմյան առաջնորդներից լավ գրել ու կարդալ: Ի դեպ, գաղութային քոլեջների ուսումնասիրությունները թույլ են տալիս ավելի լավ պարզել պատճառները: Այնտեղ պահպանվել են ավանդույթները, որոնք համոզում են մեզ, որ երբևէ մեր երկրում էլ է հումանիտար կրթություն գոյություն ունեցել: Ժողովրդավարությունը դեռ այն ժամանակներում այնքան չէր տարածվել մինչև համաժողովրդական կրթությունը: Այսօր դեռ արդարացի է այն պնդումը, որ հասարակության մի մասը մասնագիտական պատրաստվածության կարիք ունի, իսկ մյուսը՝ հումանիտար կրթության: Նույնիսկ ամենաժողովրդավարական պետությունում պիտի գոյություն ունենան առաջնորդներ և, համակարգի հուսալիությունը ցանկացած ժամանակներում կախված է նրանց անձի մասշտաբից ու հանդուրժողականության աստիճանից: Եթե մենք չենք ուզում առաջնորդներ

ունենալ, որոնք պարծենում են իրենց զգայական մտածողությամբ, անհրաժեշտ է մարդկանց մեջ կարգապահությամբ ազատագրված գիտակցաբար մտածելու ունակություն մշակել: Եվս մի բան: Հանդուրժողական մտածողությամբ գործիչների շրջանում քիչ չեն խոսակցությունները ֆաշիզմի, դոգմատիզմի վտանգի ու խիստ կանոնակարգի վերադարձի մասին: Ես արդեն ասել եմ, որ նրանց մեծ մասը շփոթում են կարգապահությունը պրոսական մուշտրայի ու շարային քայլի հետ: Շփոթում են իշխանությունը, որը իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան գիտակցության ձայնը, ինքնակալության ու բռնապետության հետ: Բայց նրանց ամենատխուր սխալը վերաբերվում է դոգմատիզմին: Այդ մարդիկ, ինչպես շատ ուրիշները չեն հասկանում, թե ինչ են նշանակում ուսուցչին լսելը և ենթարկվելը: Ուսուցչին լսելու կարողությունը ուսման հնարավորություն է տալիս: Հետևաբար ուսուցչին հնազանդվելը դա լրիվ հակադրությունն է պասսիվության ու դյուրահավատության: Ուսանողները, որոնք ընդունակ չեն այդպիսի հնազանդությանը, սովորաբար քնած են պարապմունքների ժամանակ ու ամենից շատ են հակված ներշնչմանը: Նրանք կարդալով ու լսելով սովորել չեն կարողանում, դրա համար զրկված են ակտիվ ընկալելու այն, ինչ նրանց տեղեկացվում է: Արդյունքում նրանք ոչինչ չեն ստանում, կամ էլ ստանում են այն, ինչը ներմուծում են առանց կասկածի տակ դնելու:

Կրթական պրոցեսի սկզբում մենք արհամարհում ենք ընթերցանությունը, հանրահաշիվն ու գիրը, իսկ ավելի ուշ՝ հումանիտար գիտությունը: Այդպիսի ժամանակակից կրթությունը ընդհանուր առմամբ չի կարելի հումանիտար համարել: Դա ավելի շուտ ներշնչում է, քան կարգապահություն և ուսում: Մեր ուսանողներին անընդհատ մեծ քանակությամբ «ծամծմված» տեղեկատվություն ու նախապաշարումներ ենք ներշնչում: Նրանց «կերակրում ենք» ու զրկում կամքից հուրախություն դեմագոգների: Նրանց մոտ խիստ ցածր է սուտ հեղինակություններին դիմադրելու կարողությունը, որոնք պարագիտանում են իրենց կարծիքը շրջապատին պարտադրելով: Չունենալով «հումանիտար իմունիտետ», նրանք հաճույքով օր օրի կուլ են տալու տեղի թերթերի քողարկված քարոզությունը: Նույնիսկ եթե պարտադրված դոգմաները խելամիտ են ու ժողովրդավարական, մեր այժմյան զանցառությունը, պոտենցիալ վտանգ է պարունակում, քանի որ ուսումնական հաստատությունները իրենց սովորողների մեջ չեն զարգացնում անկախ մտածողության ունակություն՝ արհամարելով կարգապահությունը: Քոլեջի շրջանավարտները չափազանց խոցելի են մնում ու չեն կարողանում դիմակայել ավելի ուժեղ ճարտասանների ներշնչումից, տեղի տալով իրենց ցածր պոռթկումներին հետևելու հակմանը:

Լավ ճարտասանը դասարանում ուսանողին, որը չի սովորել ինքնուրույն խորհել, հարգել բանականությունը՝ որպես ճշմարտության միակ չափանիշ, դուրս գալ տեղի

Ժարգոնի սահմաններից ու ստանդարտ պիտակներից, չի փրկի ամբիոնի կամ մամուլի գալիք ճարտասանի հետ բախումից:

Մեր փրկությունը կայանում է «Ընդհանուր աղոթքների գրքի» պատվիրաններում. «Կարդացեք, կարևորը առանձնացրեք, սովորեք ու աճեք հոգեպես»:

Թարգմանությունը՝ Լիանա Տեր-Պողոսյանի

## ՄՈՐՏԻՄԵՐ ԱԴԼԵՐ

### ԲԱԶՄԱԹԻՎ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

– 1 –

Գիրքը վարժ կարդալու համար անհրաժեշտ է ընթերցել մի քանի անգամ: Ամենաքիչը երեք անգամ, եթե գիրքն ունի հատուկ ուշադրության կարիք: Թող ձեզ չվախեցնեն այս պահանջները, լավ ընթերցողը կարող է միաժամանակ գիրքը կարդալ երեք անգամ: Դա չի նշանակում պարտադիր «երեք անգամ իրար հետևից»: Ճշգրիտ երեք անգամ ասելով ես ի նկատի ունեի, որ գոյություն ունի գիրք կարդալու երեք եղանակ, որոնք պետք է անպայման կիրառել, եթե ուզում ես իսկապես գիրքն ընթերցել: Օգտակվես կարդալու հնարավոր քանակը կախված է ,թե՛ տվյալ գրքից, թե՛ մասամբ ձեր մտքի ճկունությունից և ջանասիրությունից: Կրկնում եմ, երեք եղանակով կարդալ միայն անհրաժեշտ կլինի սկզբում, երբ դեռ անփորձ եք: Մինչև փորձ ձեռք չբերեք , գործողությունների միասնական սխեմա մշակել դժվար կլինի, դժվար կլինի բազմաթիվ քայլերի միավորումը կատարել գործողությունների առանձնացված սխեմայով: Սկզբնական շրջանում դժվար կլինի միավորել գործունեության տարբեր հայեցակետները, ինչպես փազլի տարբեր հատվածները մեկ ամբողջության մեջ: Նրանցից յուրաքանչյուրը պահանջում է բացառիկ ուշադրություն և ջանք: Երկարատև պրակտիկան կտա ազատություն և այդ հայեցակետները կիրառելու հմտություն: Հետզհետե դուք կսովորեք առանց որևէ ջանքի միավորել այդ մեթոդները որպես մեկ ամբողջություն:

Իրականում, ես ոչ մի նոր բան չասացի ընթերցանության նորարար սկզբունքների յուրացման վերաբերյալ: Ես ուզում եմ, որ դուք գիտակցեք, որ ընթերցել սովորելը հեշտ չէ, քան սովորել տպելու գրամեքենայի վրա կամ սովորել թենիս խաղալ: Եթե դուք հիշեք, թե ինչպես եք համբերատարությամբ սովորել ինչ որ մի նոր բանի, ապա



կլինեք ներողամիտ ձեր ուսուցչի նկատմամբ ,որն վերջապես կթվարկի կարդալու կանոնների երկար ցուցակը:

Հոգեբան –հետազոտողները արդեն վաղուց ամբողջ ուսուցման պրոցեսը տեղավորել են «ըստ դարակների»: Հնարավոր հմտությունների բազմաթիվ լաբորատոր հետազոտությունների արդյունքում նրանց նկարած առաջադիմության գրաֆիկները , պատկերում են տալիս մի մակարդակից մյուսին անցման տեմպերը: Այստեղ ես, ձեր ուշադրությունը կհրավիրեի երկու յուրահատկության վրա:

Առաջինը-այսպես կոչված «πлатο»- «սարահարթ» գրաֆիկի մասն է: Մի քանի օրերի ընթացքում արդյունքները մշակելու ընթացքում Մորգեի այբուբենի ուսուցման և արագ տպելու հմտությունները արագ կերպով աճում են ,իսկ արված սխալների թիվը նվազում է, փաստում է գրաֆիկը: Հետո անսպասելիորեն թեք գիծը հավասարվում է: Մի քանի օր շարունակ սովորողների խմբաքանակը մի թիզ անգամ չի կարողանում առաջադիմել:Եռանդագին աշխատանքը չի ապահովում որևէ նշանակալի տեղաշարժ ո՛չ արագության և ո՛չ էլ ճշգրտության մեջ:

Տարածված այն կանոնը ՝ թե կատարելությունը ձեռք է բերվում վարժություններով,չի աշխատում: Հետո հանկարծ սովորողները թողնում են «πлатο»- «սարահարթ»-ը և նորից հաջողությունների են հասնում,գրաֆիկը սկսում է աճել: Այդպես շարունակվում է մինչև հասնի հաջորդ «πлатο»- «սարահարթ»-ը միայն պակաս շոշափելի դինամիկայով:

«Πлатο»-«սարահարթը» ի հայտ է գալիս միայն այն առաջադիմության գրաֆիկներում,որտեղ ցույց է տրվում դժվար հմտության ձեռք բերման և զարգացման բարդ գործընթացը: Ըստ էության որքան բարդ է գործունեության յուրացումը,այնքան հաճախ են հանդես գալիս այդպիսի ճգնաժամային պարբերություններ: Սակայն հոգեբանները հայտնաբերել են,որ ուսուցումը այդ պարբերություններում շարունակվում է,բայց դա տեղի է ունենում թաքնված կերպով և գործնականում չի արտահայտվում: Հասկանալով այն փաստը ,որ գիտելիքի յուրացման «բարձրագույն բաղադրիչները» ձևավորվում են հենց այդ պահերին, հանդես է գալիս մի երկրորդ հայեցակետ, ինչի մասին նշվում էր վերևում:

Առանձին տառերի մուտքագրելը յուրացնելով և կատարելագործելով սովորողները ավելացնում են մուտքագրման արագությունը և ճշգրտությունը: Բայց անհրաժեշտ է ձեռք բերել կայուն սովորություն մուտքագրելու ամբողջությամբ վանկեր և բառեր: Հետագայում՝ հմտության բաղադրիչի ձեռք բերման ճանապարհին ,ցածրից դեպի բարձր մակարդակի անցման այս էտապում թվում է , թե սովորողը ոչ մի կերպ չի կարողանում շարժվել առաջ,քանի որ նա հաջողության հասնելու համար պետք է ձեռք բերի որոշակի քանակությամբ «բառային միավորների» մուտքագրման

հմտության մակարդակ: Բավարար քանակությամբ այդպիսի միավորներ յուրացնելով, սովորողը մի մեծ քայլ է անում դեպի վեր հասնելով ավելի բարդ էտապի: Այն ինչ սկզբում իրենից ներկայացնում էր առանձին գործողությունների բազմություն՝ յուրաքանչյուր տառի մուտքագրում, ի վերջո մեկ բարդ գործողության արդյունքում ստացվում է նախադասության կապակցում:

Իդեալական հմտությունը ձևավորվում է միայն այն ժամանակ, երբ սովորողները հասնում են իրենց գործունեության բարձրագույն՝ կառուցվածքային միավորին: Ուսուցման սկզբում թվում է հմտությունները չափից ավելի շատ են և դժվար է դրանք միավորել, բայց հետագայում պարզվում է մեկ հմտության միջոցով ներդաշնակ համագոյակցում են բոլոր իրարից անջատ թվացող գործողությունները:

Իմ կարծիքով փորձնական արդյունքները ապացուցում են այն, ինչ մեզանից շատերին հայտնի է սեփական փորձից: Ճիշտ է, դրա հետ միասին շատերը չեն հասկանում, որ «πλato»-«սարահարթ» փուլում տեղի է ունենում թաքնված ուսուցում: Եթե դու սովորում ես թենիս խաղալ, ապա դու պետք է կարողանաս գնդակով փոխանցում կատարել, փոխանցումն ընդունել մրցակցից, խաղալ ցանցի մոտ, կենտրոնում, դաշտի ծայրերում: Այդ բոլոր կարողությունները ներկայացնում են միասնական հմտություն: Բայց, սկզբում նրանցից յուրաքանչյուրի մշակման համար անհրաժեշտ է յուրովի տեխնիկա: Անհրաժեշտ է հաջորդաբար անցնել պարզ մասերից դեպի բարդ ամբողջին, որտեղ առանձին կարողությունները միավորվում են և դառնում համակարգված հմտություն: Դուք պետք է սովորեք մի գործողությունից անցնել մյուսին արագ, ավտոմատ կերպով առանց շեղվելու խաղի ռազմավարությունից: Դա վերաբերվում է նաև ավտոմեքենա վարելուն: Սկզբում դուք սովորում եք պտտել ղեկը, կառավարել փոխանցման տուփը, սեղմել արգելակը: Դուք աստիճանաբար յուրացնում եք այս բոլոր գործողությունները և դրանք մեքենան վարելու պրոցեսում դառնում են փոխկապակցված: Դուք գիտակցում եք, որ կարող եք մեքենան վարել, եթե կարողանաք այդ գործողությունները կատարել առանց երկար մտածելու:

Դժվար հմտություններ ձեռք բերելու փորձ ունեցողը, լավ գիտե, որ ուսուցման սկզբում նշված կանոնների ցանկից վախենալու կարիք չկա: Նա հասկանում է, որ կարիք չկա վախենալու գործողությունների բազմաթիվ քանակից, որոնք անհրաժեշտ են յուրացնել առանձին-առանձին, քանի որ հետո դրանք կարող է միավորել:

Գիտակցումը, որ «πλato»-սարահարթ փուլում ուսուցումը կատարվում է թաքնված ձևով, օգնում է հաղթահարել հիասթափությունը: Ավելի բարդ հմտությունները ի վերջո ձևավորվում են, եթե նույնիսկ դրանց կատարումը ոչ այնքան էֆեկտիվ է թվում: Կանոնների քանակը ցույց է տալիս ձևավորվող հմտության բարդությունը, այլ ոչ թե որ հմտությունները քանակը: Ավտոմատ կատարման փուլում առանձին

գործողությունները միավորվում են մեկ ընդհանուր գործողության մեջ: Եթե դրանք կատարվում են շատ թե քիչ ավտոմատ կերպով, նշանակում է հմտությունը ձևավորված է: Այժմ դուք կարող եք թենիսով խաղում տանել հաղթանակ կամ ինքնուրույն մեքենայով գնալ քաղաքից դուրս: Դա շատ կարևոր էլակետ է: Սկզբում սովորողները ուշադրություն են դարձնում առանձին գործողությունների կատարման որակին: Երբ ամեն ինչ ստացվում , համակարգվում է , կարող ենք անցնել բուն նպատակին ` ձեռք բերված հմտության:

– 2 –

Այն ինչ ճիշտ է թենիսի կամ մեքենայի վարելու համար, վերաբերվում է ընթերցանությանը, ընդ որում ոչ միայն կրտսեր դպրոցին ` նախնական ուսուցման փուլին, այլ ընթերցանությանը ` իմաստի լիովին ըմբռման, բարձրագույն մակարդակին: Ով հասկանում է , որ ընթերցանությունը բարդ գործունեության ձև է, ինձ հետ կհամաձայնվի: Ես հատուկ ասում եմ այդ մասին, որպեսզի դուք իմ պահանջները ուղղված ընթերցանությանը չհամարեք ուռճացված կամ անտանելի, այլ գործունեության ձևերի հետ համակարգված:

Ժամանակի ընթացքում դուք վարպետորեն կտիրապետեք յուրաքանչյուր հմտությանը և կդադարեք իրարից անջատ ընդունել կանոնները և դրանց հետևող գործողությունները: Դուք աշխատանքը կկատարեք ամբողջությամբ, առանց կասկածելու , որ բոլոր բաղադրիչները գումարվելու են մեկը մյուսին: Դուք արդեն չեք մտածի ձեր կարդալու ընդունակությունների մասին և ամբողջությամբ կընկղմվեք գրքի ընթերցանության մեջ:

Ուսուցման այս փուլում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշակի կանոնների վրա, որոնք բաժանվում են երեք հիմնական խմբերի:

Խմբերից յուրաքանչյուրը համապատասխանում է գրքեր կարդալու եղանակներից մեկին: Կփորձեմ բացատրել , թե ինչու է անհրաժեշտ երեք ընթերցում:

Առաջին հերթին դուք պետք է յուրացնեք այն ինչը ձեզ ներկայացվում է որպես գիտելիք:

Հետո պետք է որոշել ընդունելի է ձեզ համար այդ գիտելիքը: Այլ խոսքերով, առաջին խնդիրը կայանում է նրանում, որպեսզի հասկանաք գիրքը, իսկ երկրորդը ` որ նրան մոտենաք քննադատորեն: Հետագայում դուք բազմիցս կհասկանաք, որ դրանք ըստ էության տարբերվում են:

Իմացության պրոցեսը նույնպես կարելի է բաժանել մասերի: Գիրքն հասկանալու համար պետք է ընդունել այն մի կառուցվածքային ամբողջություն, իսկ հետո լեզվական և իմաստային միավորների համակարգով օժտված մի օբյեկտ:

Այսպես , գոյություն ունի ընթերցանության երեք տարբեր եղանակ:

I. եղանակ - Կառուցվածքային կամ վերլուծական: Այս դեպքում ընթերցողը շարժվում է

ամբողջից դեպի մասնավորին:

եղանակ — интерпретационный-վերաներկայացման կամ սինթետիկ:Այստեղ ընթերցողը շարժվում է մասնավորից դեպի ամբողջին:

III. եղանակ — քննադատական կամ գնահատող: Կարդացողը գնահատում է հեղինակին և որոշում համաձայն է ինքը նրա տեսակետին:

Այս երեք եղանակներից ամեն մեկը ենթադրում է մի քանի գործողությունների կատարում,իսկ դա նշանակում է հաշվի առնել մի քանի կանոններ:

Դուք արդեն ծանոթ եք երկրորդ եղանակով ընթերցման երեք կանոններին:

1)Գտնել և ներկայացնել ամենակարևոր խոսքերը գրքում

2) Գտնել և ներկայացնել ամենակարևոր նախադասությունները գրքում

3)Համարժեք ձևով գտնել ամենակարևոր դրվագները,որոնք գրքի հիմնական դրույթները են պարունակում

4)Չորրորդ և վերջին կանոնը,որի մասի դեռ ես չեմ ասել,դա այդպես է հնչում-ձեզ հարկավոր է իմանալ: Ի՞նչ խնդիրներ է դրել իր առջև հեղինակը այս գրքում ,և ո՞ր խնդիրները նրան չի հաջողվել լուծել:

Այս կամ այն տեքստը առաջին եղանակով կարդալու համար դուք պետք է իմանաք

1) Ի՞նչ բնագավառի գիրք եք կարդում,այսինքն գրքի ուսումնասիրման հիմնական առարկան: Հետո պետք է գիտակցել

2) Ո՞րն է գրքի հիմնական իմաստը

3) Ի՞նչ իմաստային կամ կառուցվածքային մասերի է նա բաժանվում և

4)Ի՞նչ հիմնական խնդիրներ է հեղինակը փորձում լուծել

Այս եղանակը իր մեջ պարունակում է չորս գործողություն և չորս կանոն:

Ուշադրություն դարձրեք, որ առաջին ընթերցման ժամանակ ամբողջական տեքստից այն ընդգծված հատվածները , որոնք դուք վերլուծել էիք կարող են նաև չհամընկնել այդ նույն հատվածների վերլուծության հետ երկրորդ անգամ ընթերցելուց հետո:

Առաջին դեպքում նրանք դառնում են գործոնների համակարգ, որոնք բնութագրում են հեղինակի վերաբերմունքը դեպի գրքում քննարկվող խնդիրին կամ առարկային:

Երկրորդ –դառնում են տերմիններ՝ գաղափարներով և силлогизм-ներով -այսինքն հեղինակի պնդումները և արգումենտները հաստատող տերմիններով:

Կարդալու երրորդ եղանակը նույնպես նախատեսում է որոշակի քայլեր: Գոյություն ունի մի քանի ընդհանուր կանոններ ,որոնք ձևավորում են քննադատական

կարծիքներ և դրանց հետ կապված չորս գործողություններ: Ընթերցման երրորդ եղանակը բացատրում է ,թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել: Այս գլխում ես վերանայում եմ բոլոր կանոնները ընդհանրապես, իսկ մյուս գլուխներում ես կգրադվեմ դրանց դետալային վերլուծությամբ: Եթե դուք ուզում եք տեսնել միանգամից բոլոր կանոնները, ապա պետք է անցնել տասնչորսերորդ գլխի սկզբին: Մի քիչ ուշ դուք ավելի խորությամբ կհասկանաք ամբողջ պրոցեսի էությունը, իսկ հիմա ես ուզում եմ ցույց տալ, թե ինչպես են համադրվում իրար հետ ընթերցանության տարբեր ձևերը, առանձնապես առաջին երկուսը, որտեղ խոսքը գնում է մասնակիի և ամբողջի մասին:

Իմանալով ամբողջությամբ գրքի իմաստը և ինչպես է գիրքը կառուցված, միշտ ավելի հեշտ է առանձնացնել հիմնական տերմիններն ու պնդումները: Եթե դուք կարողացել եք հասկանալ առանցքային դրույթները և հեղինակի արգումենտները, ձեզ համար հեշտ կլինի հասկանալ հեղինակի խոսքերի իմաստն ու հիմնական կառուցվածքային միավորները:

Առաջին եղանակով կարդալու դեպքում սկզբում պետք է որոշել այն խնդիրը կամ խնդիրները, որոնք փորձում է հեղինակը լուծել: Երկրորդ եղանակի վերջին քայլում պետք է հասկանալ հեղինակը արդյո՞ք լուծել է իր առջև դրված խնդիրները և հատկապես ո՞ր հարցերին է հեղինակը պատասխաններ տվել: Դուք տեսնում եք որ այս եղանակները փոխկապակցված են և վերջնական փուլում միավորվում են: Հմուտ ընթերցանության զարգացման համընթաց դուք կտվորեք կարդալ միաժամանակ երկու եղանակներով: Որքան լավ դա ձեր մոտ ստացվի ,այդքան ավելի շատ մի եղանակը կհամագործակցի մյուսի հետ: Բայց երրորդ եղանակը երբեք չի կարող ուղեկցել մյուս երկուսին: Նույնիսկ ամենահմուտ ընթերցողը պետք է առաջին երկու եղանակները առանձնացնի երրորդից: Հեղինակի դիրքորոշման հասկացումը միշտ պետք է նախորդի տեքստի քննադատությանը կամ գնահատմանը:

Ես հանդիպել եմ ոչ քիչ «ընթերցողներ», որոնք սկսել են երրորդ եղանակից, երբեմն ընդհանրապես անտեսում են առաջին և երկրորդ եղանակները: Նրանք իրենց ձեռք են վերցնում գիրքը և շուտով արդեն համոզված պատմում են ,այնտեղ ինչը այն չէ: Սեփական անձի նշակալիությունը զգացողությունը նրանց կուրացրել է, այդ իսկ պատճառով գիրքը իրենց զինանոցում դառնում է մի առիթ ,սեփական անձով հիանալու: Հազիվ թե այդ մարդկանց կարելի է անվանել ընթերցող: Ավելի ճիշտ է նրանց թվել այն մարդկանց թվին, ովքեր գրքի շուրջ խոսակցությունը օգտագործում են որպես առիթ ինքնահաստատման և մենախոսության համար: Այդպիսի մարդկանց հետ իմաստ չունի խոսել, լսել նրանց նույնպես իմաստ չունի:

Ընթերցման առաջին երկու եղանակները կարող են համատեղվել, քանի որ ուղված են գրքի ըմբռմանը: Երրորդը առանձնանում է նրանով, որ առաջարկում է

քննադատություն այդ ըմբռնումից հետո: Այսպիսով երկու եղանակների միավորումը ընթերցողին տալիս են հնարավորություն ուղղորդել և անջատել դրանք ցանկացած պահին, որը շատ կարևոր է: Ձեր ընթերցման եղանակը դուք կարող եք ստուգել ,ամբողջ պրոցեսը բաժանելով մասերի: Հնարավոր է ձեզ անհրաժեշտ է վերանայել այն քայլ առ քայլ, չնայած այդ ժամանակ այն կընդունվի որպես միասնական ամբողջություն, քանի որ ընթերցման գործընթացը կդառնա սովորական զբաղմունք: Դրա հետ կապված պետք է հիշել ,որ տարբեր կանոններ ընդմիջտ մնում են ինքնավար, նույնիսկ այն ժամանակ երբ ձեր գիտակցության մեջ նրանց սահմանները ջնջվում են, կազմելով միասնական մի բարդ հմտություն: Եթե դուք չեք կարող դիմել այդ կանոններին առանձին –առանձին, դա կարող է խանգարել ընթերցման գործընթացին ամբողջությամբ: Այսպես անգլերենի լեզվի դասավանդողը ստուգելով ուսանողի աշխատանքը բացատրելով իր նշումները, միշտ ցույց է տալիս ուսանողի կողմից այս կամ այլ կոնկրետ կանոնի խախտումը: Ուսանողը այս դեպքում միշտ պետք է հիշի բոլոր կանոնները, բայց միաժամանակ դասավանդողը չի ուզում ,որ որ ուսանողը ամեն մի քայլում համեմատի ամբողջ կանոնների ցուցակը: Նա ուզում է որ լավ, ճիշտ գրելու կարողությունը ուսանողի մոտ դառնա սովորույթ ,որպեսզի կանոնները դառնան նրա մտավոր կարողությունների անքակտելի մասը: Այդ նույնը վերաբերվում է նաև ընթերցանությանը:

-3-

Մեկ դժվարություն դեռ մնում է: Երեք եղանակներով կարողանալ կարդալ գիրքը՝ բավարար չէ, կարևոր է սովորել միաժամանակ կարդալ մի քանի իրար հետ իմաստով փոխկապակցված գրքեր, որպեսզի որակյալ ճշգրտությամբ յուրացնել նրանցից ցանկացածը:

Ես չեմ ասում, որ անհրաժեշտ է սովորել կարդալու ցանկացած գրքերի համադրություն: Խոսքը գնում է միայն իմաստով փոխկապակցված կամ նույն խնդիրներին վերաբերող գրքերին: Եթե դուք չեք կարողանում « փոխկապակցված » կարդալ այդ գրքերը, ապա , հավանաբար ` չեք կարող ինչպես հարկն է յուրացնել դրանցից և ոչ մեկը: Հեղինակներն արտահայտում են միևնույն մտքերը , համաձայնվում կամ վիճում են միմյանց հետ, բայց կա արդյո՞ք երաշխիք, որ դուք կարող եք հասկանալ նրանցից գոնե մեկին առանց տեսնելու նրանց մտքերի համընկումները կամ անհամապատասխանությունները: Այստեղ անհրաժեշտ է ֆիկսել սահմանափակ և ընդլայնված ընթերցանությունների տարբերությունները: Հույսով եմ ,որ այս խոսքերը ձեզ չեն շփոթեցնի: Այլ կերպ ես չեմ կարող արտահայտվել:

Սահմանափակ ես անվանում եմ գրքի ընթերցումն առանց որևէ կապի ուրիշ աղբյուրների հետ:

Ընդլայնված ընթերցանությունը՝ դա գրքի ուսումնասիրումն է իմաստով իրար հետ փոխկապցված այլ գրքերի ենթատեքստում: Երբեմն դա միայն տեղեկատու գրականություն է, օրինակ՝ բառարաններ, հանրագիտարաններ, ավանախներ: Երբեմն երկրորդական գրքեր՝ այսինքն օգտակար մեկնաբանություններ:

Հաճախ ենթատեքստները դառնում են հանճարեղ գրքեր: Բացի դրանից նման ընթերցանությունը հաճախ օգնում է մեր ունեցած փորձը, որին մենք դիմում ենք զիրքը հասկանալու համար: Այն կարող է ձեռք բերել լաբորատորիայում, ինչպես նաև ամենօրյա կյանքում: Սահմանափակ և ընդլայնված ընթերցանությունը համակցվում են միևնույն գրքի թե՛ փոխըմբռման, թե՛ քննադատության ժամանակ:

Ամեն-ինչ, այն յուրահատկությունները ինչ-որ ես ասացի փոխկապակցված գրքերի ընթերցանության մասին ,հատկապես վերաբերվում է հանճարեղ գրքերին: Կրթության վերաբերող իմ դասախոսություններում ես հաճախ եմ հենվում այդ գրքերի վրա: Սովորաբար դրանցից հետո սովորողները ինձ դիմում են այդ գրքերի ցուցակը ներկայացնելու խնդրանքով: Ես խորհուրդ կտամ օգտվել Ամերիկյան գրադարանային ասոցիացիայի հրատարակած «Արևմուտքի դասականները » ցուցակից: Կարող եք օգտվել նաև Մերլենդ շտատի Աննապոլիս քաղաքի Սենտ-Ջոն քոլեջի հրատարակած գրքերի ցուցակից:

Ավելի ուշ իմ ունկնդիրները ինձ հաղորդում են ,որ այդ գրքերի ընթերցումն իրենց համար իրենց համար դարձել է ծարյահեղ բարդ գործընթաց: Այդ ոգեշնչումը, որ նրանց արթնացրել էր գտնել այդ ցուցակը և սկսել կարդալ, հաճախ փոխվում է անհույս անկարողության հետ: Դա ունի երկու պատճառ: Առաջինը, որ նրանք չեն կարողանում ճիշտ կարդալ:

Բայց դա բոլորը չէ: Երկրորդ պատճառը թաքնված է ընթերցողների այն համոզման հետ, որ կարող են հասկանալ առաջին իսկ պատահած գիրքն այդ ցուցակից, առանց հաշվի առնելու, որ դրանք իրար հետ խիստ փոխկապակցված են: Հավանաբար նրանք փորձել են կարդալ «Ֆեդերալիստի գրառումները», առանց ուշադրություն դարձնելու «Կոնֆեդերացիայի հողվածերը»-ի կամ Սահմանադրության վրա: Կամ նախատեսել են այս ամենը կարդալ առանց մտորելու Մոնտեսքյուի «Օրենքների հոգու մասին», Ռուսոյի «Հանրային պայմանագրի», կամ Ջոն Լոկայի էսսեն քաղաքացիական կառավարման մասին:

Հանճարեղ գրքերը ոչ միայն փոխկապակցված են: Պետք չէ մոռանալ ,որ դրանք գրվել են որոշակի հաջորդականությամբ ,որն անհրաժեշտ է հաշվի առնել գրքերի ընթերցման ընթացքում:

Ակնհայտ է ,որ ըստ ժամանակագրության ավելի ուշ հեղինակը իր նախորդ հեղինակի ազդեցությունն է կրել: Եթե դուք սկզբից կարդաք ավելի վաղ հեղինակի

գիրքը, դա կօգնի ձեզ կարդալ ավելի ուշ գրված գրքերի իմաստը:  
Կարդալ գրքերը փոխկապակցված և ճիշտ ժամանակագրական հաջորդականության մեջ-սա է ընդլայնված ընթերցանության հիմնական կանոնը:

Ընդլայնված ընթերցանության օժանդակող մեթոդները ես դիտարկում եմ տասնչորսերորդ գլխում: Իսկ այժմ մենք կխոսենք միայն սահմանափակ ընթերցանության կանոնների մասին: Մեկ անգամ ևս կրկնում եմ, որ այս բաժանումը մեզ անհրաժեշտ է ուսուցման ընթացքում, որի ավարտին այս բաժանումը ինքնաբերաբար վերանում է:

Հմուտ ընթերցողի ինտելեկտուալ պահոցում այն պահին, երբ կարդում է որևէ գիրք, անշուշտ, արդեն պահպանվում են բազմաթիվ այդ գրքի հետ փոխկապակցված ուրիշ գրքեր: Բայց այժմ ձեզ ուշադրությունը պետք է բևեռեք եզակի- միակ գրքի ընթերցանության էտապներին, կարծես այն առանձնացված է և ոչ մի ուրիշ գրքի հետ կապ չունի: Իհարկե ես չեմ կարող բացառել գրքերի ըմբռման ձեր սեփական փորձի գործընթացը: Այդպիսի մակարդակի ընդլայնումը բացարձակապես անհրաժեշտ է, ինչպես մենք կտեսնենք հետագայում:

Վերջիվերջո անհնար է ընկղմվել գրքերի աշխարհը, չտրվելով սեփական ընթերցանության նախկին փորձին:

Սահմանափակ ընթերցանության կանոնները վերաբերվում են ոչ միայն գրքերին, այլ նաև դասախոսությունների կուրսին: Ես համոզված եմ, որ գիրքն ամբողջությամբ լավ կարդացող մարդը սովորական դասախոսությունների կուրսից կարող է ձեռք բերել շատ ավելի գիտելիքներ, քան քուլեջի սովորողների հիմնական մասը քուլեջում ուսուցանելու ընթացքում: Հիմնականում այս երկու դեպքերը իրարից քիչ են տարբերվում, բայց դասախոսության կուրսի լուսմները կարող են պահանջել հիշելու և ամփոփելու մեծ ունակություն:

Այստեղ կա ևս մեծ դժվարություն: Դուք կարող եք կարդալ գիրքը երեք անգամ, եթե ուզում եք կիրառել յուրաքանչյուր մեթոդ առանձին-առանձին: Դասախոսությունների հետ դա հնարավոր չէ անել: Դրանք հեշտ կյուրացնի նա, ով ունի ընկալելու համապատասխան փորձ, անփորձ լսողներին համար կլինի դժվար:

Այդ իսկ պատճառով խելքին մոտ կլինի եթե, դասախոսը այս կամ այն ուսանողին դասախոսության հրավիրելուց առաջ համոզվի ,որ նա ընդունակ է գիրք կարդալու: Այսօր քուլեջներում և ավագ դպրոցների ուսուցման համակարգում ամեն ինչ այլ կերպ է կառուցված: Շատերը պատկերացնում են են ,որ դասախոսությունների կուրսը դա գիտելիք ստանալու արագացված եղանակ է ,ստանալու այն ինչը չի հաջողվում կարդալու գրքերում: Բայց դա բնավ ամենակարճ ճանապարհը չէ: Իրականում դա կարող է բերել ուղիղ հակադիր էֆեկտի:



Այս կանոնների կիրառման միայն մեկ շեղում կամ սահմանափակում կա ,որի մասին դուք կարող եք գլխի ընկնել:Ես մի քանի անգամ ընդգծել եմ ,որ այդ կանոնների նպատակն է օգնել կարդալու գիրքն ամբողջությամբ:

Ծայրահեղ դեպքում հիմնական նպատակը:

Միսալ կլինի օգտագործել այդ կանոնները միայն ենթատեքստից դուրս հատվածների ընթերցման համար: Չի կարելի սովորել կարդալ` ընթերցելու համար տասնհինգ բույս ժամանակ տրամադրելով, ինչպես գրված է «Հարվարդի դասականը» տեղեկատուում : Բանն այն չէ,որ տասնհինգ բույսն օրական բավարար չէ,այլ այն որ չի կարելի կարդալ քիչ- քիչ,ինչպես նշված է «Հինգ ֆուտանոց դարակ» տեղեկատուում: «Հինգ ֆուտանոց դարակ»-ում կարող ենք գտնել շատ հանճարեղ գրքեր , սակայն դրանց մեջ պատահում են նաև կենցաղային ստեղծագործություններ: Մեծ մասամբ այդ սերիայի գրքերի տեքստերը հրատարակվում են ամբողջությամբ ,բայց երբեմն հանդիպում են պարզապես մեծ հատվածներ: Բայց ոչ ոք խորհուրդ չի տալիս ուսումնասիրել գիրքն ամբողջությամբ կամ կարդալ նրա որևէ հատվածը : Հետևաբար ձեզ առաջարկվում է հավաքել մի փոքր նեկտար այստեղից, հոտ քաշել մի փոքր մեղրից այնտեղ: Հիանալի է, բայց դուք կդառնաք գրականության սովորական թիթեռնիկ և ոչ թե փորձված ընթերցող:

Օրինակ` այսօր դուք կարդում եք վեց էջ Բենջամին Ֆրանկլինի «Ինքնակենսագրականից»,վաղը` տասնմեկ էջ Միլտոնի վաղ շրջանի բանաստեղծություններից,իսկ վաղը չէ մյուս օրը` տաս էջ Ցիցերոնի «Ընկերության մասին» տրակտատից անհամապատասխանությունները: Հետո դուք ուսումնասիրում եք ութ էջ Համիլտոնի մասին « Տեղերալիստի գրառումներից», ապա Էդուարդ Բյորկի տասնհինգ էջանոց գրառումները և էլի տասներկու էջ Ռուսոյի` « Անհավասարության մասին» էսսեից: Միակ բանը, որ պետք է որոշել ընթերցման հաջորդականություն է . պատմական կապը` ընթերցվող հատվածի և շարափվա որոշակի օրվա միջև: Գրքի ճիշտ ընտրության հարցում դժվար թե տրամաբանական է հիմնվել միայն օրացույցի վրա:

Հատվածները շատ կարճ են լրջագույն ընթերցման ջանքերի և ուսուցման համար: Բացի այդ ,դրանց հաջորդականությունը չի թույլ տալիս զգալու առաջարկվող ընտրանու ամբողջականությունը կամ հասկանալու մի հատվածը մյուսի ենթատեքստում: «Հարվարդի դասականները» կողմից առաջարկվող ընթերցման պլանը հանճարեղ գրքերը դարձնում է հասկանալու համար նույնչափ անհասանելի, որքան քուլեջում ինքնուրույն ընտրված գրքերը: Հնարավոր է,որ այս պլանը կազմվել է դոկտոր Էլիոտի ` առարկաների ազատ ընտրության ուսուցման մեթոդի Հայր - հիմնադրի փառաբանման համար: Ինչպես նաև «Հինգֆուտանոց դարակ» «Пятифутовая полка» գրական շարքի համար:

Մեր ընթերցման կանոններում կա ևս մի սահմանափակում: Մեզ հետաքրքրում է ընթերցման նպատակներից միայն մեկը, այն է՝ ընթերցանություն հանուն ուսուցման, այլ ոչ թե ընթերցանություն զվարճանքի համար: Այդ նպատակը հավասարապես վերաբերում է և՛ հեղինակին, և՛ ընթերցողին:

Մեր ուշադրության կենտրոնում գրքեր են, որոնք ուղղված են գիտելիք փոխանցելու, ինչ-որ բան սովորեցնելու: Առաջին գլխում ես արդեն բացատրել եմ, թե որն է հիմնական տարբերությունը գիտելիք ստանալու համար ընթերցանությունը զվարճանքի համար ընթերցանությունից, ընդգծելով, որ մեզ հետաքրքրում է հենց առաջինը: Այժմ մենք պետք է անենք հաջորդ քայլը. առանձնացնել գրքերի երկու մեծ դաս, որոնք տարբերվում են ըստ հեղինակների՝ ընթերցողների մտավոր պահանջները բավարարելու նպատակների և հնարավորությունների: Դա կարևոր է, քանի որ մեր կանոնները վերաբերում են մեկ տիպի գրքերին և մեկ նպատակի ընթերցանության: Այդ դասի գրքերը համընդհանուր ընդունված անվանում չունեն: Շատ գայթակղիչ կլիներ այդ գրքերի մի մասին անվանել պոեզիա կամ գեղարվեստական գրականություն, երկրորդ մասին՝ ոչ գեղարվեստական կամ գիտական գրականություն: Բայց այսօր «պոեզիա» բառը որպես կանոն նշանակում է բանաստեղծություններ, այլ ոչ թե ամբողջ գեղարվեստական գրականություն, որին երբևէ անվանել են նաև հերյուրանք-հորինվածք: Նմանապես «գիտական գրականություն» արտահայտությունը հազվադեպ է օգտագործվում պատմության և փիլիսոփայության գրքերի վերաբերյալ, չնայած երկու առարկաներն էլ ենթադրում են գիտելիքների փոխանցում: Եթե շեղվենք տերմինաբանությունից, ապա պարզ կդառնա, որ տարբերությունը հեղինակների մտադրությունների մեջ է: Բանաստեղծը կամ գրողը զբաղվում է գեղեցիկ արվեստով, ձգտում է պարզել իր ընթերցողին հաճույք կամ հիացմունք է առաջացնում իրենց գեղեցիկ ստեղծագործություններով՝ երաժշտի կամ քանդակագործ նման:

Գիտնականը կամ հումանիտար գիտությունների ոլորտի մասնագետը ձգտում է սովորեցնել ուրիշներին լուսաբանելով: Գեղարվեստական գրականություն ընթերցել ուսուցանելը, պակաս բարդ խնդիր չէ, գիտելիքների ձեռք բերելու համար ընթերցման խնդրի հետ համեմատած: Միաժամանակ դրանք իրարից կտրուկ տարբերվում են: Ընթերցանության կանոնները, որոնք կրճատ ես թվարկել եմ և այժմ ավելի մանրամասն քննարկում եմ, վերաբերում են հանուն ուսուցման ընթերցմանը, այլ ոչ թե արվեստի գործով զգացմունքային վայելքին տրվելուն:

Գեղարվեստական գրականության ընթերցման կանոններն, անկասկած, ունեն իրենց յուրահատկությունները: Դրանք մարամասն շարադրելու և բացատրելու համար ինձ անհրաժեշտ կլինի ևս մի հաստ գիրք գրել: Ամբողջությամբ դրանք հավանաբար շատ մոտ են գիտական և հետազոտական գրքերի ընթերցման կանոնների երեք դասերին:

Առաջին դասի կանոնները վերաբերվում են ամբողջի վերլուծությանը՝ որպես միասնական կառուցվածք: Դրանց հետևում են բանաստեղծության կամ տեքստի գեղարվեստական և լեզվական էլեմենտների ճանաչման կանոնները: Հետո հարկ է հիշել ստեղծագործության որակի մասին քննադատական մտքի կանոնների կազմումը, որոնք կարող են ճաշակ գարգացնել և ըմբռնողականություն գարգացնել: Սակայն այսքանով համընկումները ավարտվում են, քանի որ պատմվածքի և գիտական հետազոտության կառուցվածքները խիստ տարբերվում են իրարից, լեզվական էլեմենտները տարբեր ձևով են ազդում երևակայության վրա և տարբեր ձևով են փոխանցում գաղափարներ, իսկ գնահատման չափանիշները չեն համընկնում: Մի դեպքում վերլուծության է ենթարկվում գեղեցկությունը, մյուս դեպքում՝ ճշմարտությունը: Վայելքի կամ հաճույքի համար նախատեսված գրքերն ունեն նույնքան որակի մակադակներ, որքան այն գրքերը, որոնք կոչված են սովորեցնելու: Այն ինչ մենք անվանում ենք «թեթև ընթերցանություն», մեզնից պահանջում է միջին գարգացման հմտություն ,ինչպես և հատկապես տեղեկատվական գրքերը: Հասկանալու համար այստեղ համարյա ջանք չի պահանջվում: Մենք կարող ենք կարդալ պատմվածքներ միջակ որևէ ամսագրում նույնքան պասիվ, որքան պասիվ ձևով կարդալ հարևան էջերում զետեղված հոդվածները: Խանութների դարակներում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի գրքերի, որտեղ կրկնվում կամ կարճ ուրվագծվում է այն, ինչն ավելի ճիշտ է իմանալ առաջին աղբյուրից: Այնտեղ ներկա է նաև երկրորդ կարգի պոեզիան: Ես նկատի չունեմ այուժետի տառացիորեն վերարտադրությունը, քանի որ բոլոր լավ այուժենները ,արդեն բազմաթիվ անգամ կրկնվել են: Ավելի շուտ ես կնշեի այն արձակի կամ բանաստեղծությունների մասին, որոնք ոչ մի նոր զգացմունք չեն առաջացնում և չեն ազդում մեր երևակայության վրա: Սակայն հիասքանչ արձակով և զարմանահրաշ բանաստեղծություններով իսկապես հարուստ են հանճարեղ գրքերը, օրիգինալ ստեղծագործությունները, որոնց մակարդակին անընդհատ պետք է փորձել հասնել: Հանճարեղ արձակը ընդլայնում է մեր իմացության սահմանը, իսկ հանճարեղ պոեզիան մեզ ոգեշնչում է, օգնում է հումանիտար արժեքները խորությամբ ճանաչել, մեզ ավելի մարդկային է դարձնում: Գրականության երկու տեսակներում էլ ընթերցման ունակություն և ակտիվություն պահանջում են այն գրքերը, որոնք գերազանցում են մեզ: Մնացած բոլորը մենք կարող ենք կարդալ պասիվ առանց տեխնիկական պատրաստվածություն:

Այսպիսով գեղարվեստական գրականության ընթերցանության կանոնները առաջին հերթին նախատեսված են մեզ օգնելու հասկանալու, ուսումնասիրելու հանճարեղ ստեղծագործությունները՝ էպիկական սագա, պիես, վեպեր և բանաստեղծություններ: Բացի այդ ընթերցման կանոնները հանուն ուսուցման,

կիրառելի են առավելապես մեծագույն պատմական,գիտական և փիլիսոփայական գործերի համար:

Ափսոս,որ այս կանոնների երկու համախմբերն էլ հնարավոր չէ համապատասխան ձևով քննարկել մեկ գրքում:Ոչ նրա համար,որ գրագիտության համար անհրաժեշտ են երկու ընթերցման ձևերն էլ,այլ այն, որ լավագույն ընթերցողը պարտավոր է հավասարաչափ տիրապետել երկու հմտություններին էլ:

Ընթերցման ուսուցման արվեստի երկու կողմերը փոխլրացնում են մեկը մյուսին:Մենք հազվադեպ ենք կարդում միայն մեկ եղանակով,առանց կիրառելու մյուսը:Գրքերը գործնականում երբեք չեն լինում բացառապես գիտական կամ գեղարվեստական: Հանճարեղ գրքերում հաճախ համակցվում են գրականության երկու հիմնական չափանիշները:

Պլատոնի երկխոսությունը «Հանրապետություն»-ում անհրաժեշտ է կարդալ միաժամանակ և՛ պիեես և՛ մտավոր գրույց: Դանթեի «Աստվածային կատակերգությունը» դա ոչ միայն փայլուն պոեմ է ,լուրջ փիլիսոփայական փնտրտուք: Գիտելիքն անհնար է փոխանցել առանց զգացմունքային և ստեղծագործական աջակցության,իսկ զգացմունքներն ու կերպաներն անխուսափելիորեն ներծծված են մտքով:

Այնուհանդերձ այս երկու ընթերցման արվեստները տարբերվում են: Միսալ կլինի ենթադրել,որ այստեղ դիտարկվող կանոնները հավասարաչափ ընդունելի են և՛ գիտության , և՛ պոեզիայի մեջ: Խիստ ասած նրանք վերաբերում են միայն գիտությանը վերաբերող կամ գիտելիքներ փոխանցող գրքերի ընթերցանությանը: Ինձ հայտնի են երկու եղանակ փոխհատուցելու այդպիսի ընթերցանությանն ուղղված սահմանափակ հայացքները:

Առաջինը կոչ է անում մեզ հաջորդ երկու գլուխներից մեկը նվիրել գեղարվեստական գրականության ընթերցման խնդրին: Երբ դուք ավելի մանրամասն կձանոթանաք ոչ գեղարվեստական գրքերի ընթերցման կանոններին ,ես կարող եմ ձեզ համար տասնհինգերորդ գլխում համառոտ պատմել գեղարվեստական արձակի և չափածոյի ընթերցման համանման կանոնները: Հետո ես ավելի հեռուն կգնամ և կփորձեմ ընհանրացնել բոլոր կանոնները, որպեսզի դրանք կարողանանք կիրառել ընթերցանության ձևերից ցանկացածի համար:

Երկրորդ եղանակը նրանում եմ տեսնում,որպեսզի խորհուրդ տամ ձեզ կարդալու գրքեր՝ գեղարվեստական արձակի և պոեզիայի ճիշտ ընթերցման մասին :Նրանցից մի քանիսը ես այժմ կանվանեմ իսկ մնացածը տասնհինգերորդ գլխում:

Պոեզիայի գնահատմանը կամ քննադատությանը նվիրված գրքերը,իրենք արդեն գիտական են: Նրանք հեռարձակում են որոշակի գիտելիքներ,որոնք երբեմն անվանում են գրականության քննադատություն: Այս գրքերը ամբողջությամբ նման են

այս գրքին, որն այժմ դուք կարդում եք: Այս գիրքն նախատեսված է ընթերցանության արվեստի ուսուցման, իսկ ավելի ճիշտ ընթերցանության նույն արվեստի առանձնակի ասպեկտներին:

Եթե այս գիրքն կօգնի ձեզ կարդալ ցանկացած գիտական գիրք, դուք կարող եք առանց դժվարության ինքնուրույն կարդալ դրանք և օգտագործել ստացված գիտելիքները պոեզիայի կամ մասսայական գրականության /բեսսելերների/ նյութերի ընթերցման համար:

Այդ թեմայի դասական մեծագույն գրքերից է Արիստոտելի «Պոետիկան»: Ավելի ուշ գրվածներից կարող եմ խորհուրդ տալ Թոմաս Էլիոտի էսսեները և երկու գրքեր Ի. Ռիչարդսի՝ «Քննադատության սկզբունքները» և «Գործնական քննադատություն»: Էդգար Ալան Պոյի քննադատական էսսեների ցիկլը նույնպես արժանի են ուշադրության, հատկապես՝ «Պոեզիայի սկզբունքը» հոդվածը:

Թոմաս Գիլբին իր «Բանաստեղծական փորձ » վերլուծական աշխատանքի մեջ հիանալի լուսաբանում է բանաստեղծական արտահայտության առարկան և եղանակը: Ուիլյամ Էմպսոնը իր «Անորոշության յոթ տեսակները» գործում հատկապես հետաքրքիր պատմում է լիրիկական պոեզիայի ընթերցման սկզբունքների մասին: Վերջերս լույս է տեսել նաև Գորդոն Գերոլդի «Ինչպես կարդալ գեղարվեստական գրականությունը» իմացաբանական գիրքը: Եթե դուք դիմեք այդ աղբյուրներին, ապա դրանք ճանապարհ կբացեն դեպի ուրիշ, հավանաբար, ավելի արժեքային աղբյուրների: Ընդհանրապես այդ գրքերում դուք կգտնեք շատ օգտակար տեղեկատվություն, որը պարունակում է ոչ միայն կանոններ, այլ գրականությունից գործնական օրինակներ, քանի որ այստեղ ավելի քան գիտության մեջ անհրաժեշտ է ուղեկից, որը սեփական օրինակով ցույց կտա ինչպես է պետք ճիշտ ընթերցել:

Մարկ Վան Դորենը վերջերս հրատարակեց իր նոր գիրքը «Շեքսպիր» պարզագույն վերնագրով: Դա նրա Շեքսպիրյան պիեսների սեփական վերծանումն է: Այստեղ չկան ընթերցման կանոններ կա միայն ընդօրինակման օրինակներ: Հնարավոր է, դուք ինքներդ կգտնեք կանոններ, որոնցով նա առաջնորդվել է տեսնելով դրանք գործողության մեջ: Եվ վերջապես ես կուզենայի ևս մի գրքի մասին, որովհետև նրա մեջ պարունակվում է նմանություն գեղարվեստական ընթերցման և գիտական գրականության միջև: Սկոտ Բյուկենենի «Պոեզիա և մաթեմատիկա»-ն զուգահեռներ է անցկացնում գիտության կառուցվածքի և գեղարվեստական ստեղծագործության տեսակի միջև:

– 6 –

Հնարավոր է դուք ինձ հետ չհամաձայնվեք և ասեք, որ ես արհեստական պատնեշ եմ դնում այնտեղ, որտեղ չկա դրա կարիքը:

Դուք կարող եք պնդել նաև ,որ գոյություն ունի ընթերցման միայն մեկ եղանակ,կամ ընդակառակը ցանկացած գիրք կարելի է կարդալ ամենատարբեր եղանակներով:

Ես կանխատեսել եմ այդ առարկումները,դեռ այն ժամանակ,երբ պնդում էի,որ շատ գրքեր ունեն մի քանի ուղղվածություն,

Օրինակ՝ գեղարվեստական և գիտական: Ես նույնիսկ ասում էի,որ գրքերի մեծ մասը՝ հատկապես հանճարեղ գրքերը,կարելի է կարդալ երկու եղանակներով:Բայց դա չի նշանակում,որ ընթերցման երկու եղանակները պետք է խառնել կամ շփոթել միմյանց հետ:Մենք չպետք է մոռանանք ընթերցման սկզբնական նպատակի կամ գիրքը ստեղծելուց հեղինակի հիմնական մտադրության մասին:

Կարծում եմ հեղինակների մեծամասնությունը գիտի ովքեր են նրանք՝ առաջին հերթին բանաստեղծներ են,թե՞ գիտնականներ: Անկասկած դա գիտեն նաև հանճարեղ գրողները: Լավ ընթերցողը պետք է հասկանա, թե ինչ է սպասում ինքը գրքից՝ գիտելիք թե՞ հաճույք: Հետևաբար գիրքն ավելի հեշտ ես ընտրում իմանալով հեղինակի մտադրությունը:

Երբ գիտական որոնումներն մեջ ես,ողջամիտ է կարդալ այնպիսի գրքեր,որոնց հիմնական նպատակը ուսուցումն է:

Եթե անհրաժեշտ են կոնկրետ ոլորտի գիտելիքներ,լավ է դիմել համապատասխան ոլորտի թեմայով գրքերին:

Աստղագիտությամբ հետաքրքրվողին հազիվ թե անհրաժեշտ լինի կարդալու Հռոմի պատմությունը: Դա չի նշանակում, որ միևնույն գիրքը չի կարելի կարդալ տարբեր եղանակներով և տարբեր նպատակներով: Հեղինակները կարող են ունենալ տարբեր նպատակներ, սակայն իմ կարծիքով դրանցից մեկը միշտ գերակա է, թելադրելով գրքի ընդհանուր բնույթը: Գրքերն , ինչպես մենք նշեցինք կարող են ունենալ երկու ուղղվածություն՝ հիմնական և երկրորդական: Օրինակ՝ Պլատոնի

«Երկխոսությունները» առաջին հերթին փիլիսոփայություն է,հետո նոր պիես:

«Աստվածային կատակերգությունը առաջին հերթին պոեմ է, հետո նոր

փիլիսոփայություն: Ընթերցողն իր հերթին կարող է համանման ձևով դիտարկել ցանկացած գիրք: Ցանկության դեպքում նա կարող է փոխել հեղինակի մտադրության տեղերը և կարդալ Պլատոնի «Երկխոսությունները» իբրև պիես,իսկ «Աստվածային կատակերգությունը» առաջին հերթին որպես դիտարկել փիլիսոփայական թեզ:

Այստեղ տեղին է անցկացնել զուգահեռներ ուրիշ ոլորտներ հետ:

Բարձրարժեք արվեստի օրինակ հանդիսացող երաժշտական ստեղծագործությունը կարող է օգտագործվել երեխային հանգստացնելու, քնեցնելու համար: Նստելու համար նախատեսված աթոռը կարելի է դարձնել թանգարանային ցուցանմուշ և հիանալ նրա գեղեցկությամբ: Նպատակների նման երկակիությունը և գլխավոր ու երկրորդական դիրքերի փոփոխությունները,չեն ազդում հիմնական մտքի վրա: Ինչ

եղանակով էլ դուք կարդաք գիրքը ,ինչ առաջնային նպատակ էլ ունենաք ,դուք պետք է իմանաք ինչ եք անում և հետևեք այդ գործունեության կանոններին:Դուք սխալ չեք գործում ,եթե պոեմը կարդաք որպես փիլիսոփայական գործ կամ գիտական հետազոտությունը որպես պոեզիա:

Գլխավորը գիտակցել է ընթերցանության որ եղանակն էք օգտագործում և ինչպես ճիշտ այն օգտագործել: Այդ դեպքում ձեր մոտ հարց չի ծագի ձեր ընտրության ճիշտ լինելու և ճիշտ ընթերցման եղանակի մասին: Դուք կհասկանաք,որ կանոնները ունեն մեծ նշանակություն:

Սակայն այս դեպքում պետք է զգուշանալ երկու հնարավոր սխալներից, որոնք ես կանվանեի *пуризмом* և *обскурантизмом*: «Պուրիզմ»-ն իմ մեկնաբանմամբ դա ,այն սխալ ենթադրությունն է, որ գիրքն կարելի է կարդալ մեկ եղանակով: Սակայն գրքերն ի սկզբանե տարասեռ են իրենց բնույթով,քանի որ մարդկային միտքը,որի օգնությամբ մենք կարդում կամ գրում ենք, ենթակա է մեր զգացումներին և երևակայությանը: Նա ներգործում է մեր զգացումների վրա գեներացնելով գեղարվեստական միջոցների և ձևերի բազմազանություն:

«Աբսկուրանտիզմը » դա նույնպես իմ պատկերացմամբ սխալ այն ենթադրությունն է, որ բոլոր գրքերը կարելի է կարդալ միակ եղանակով: Այստեղ հեշտ է ընկնել մյուս ծայրահեղության մեջ,երբ մարդը դառնալով *Эстетизации* –էսթետիզացման համակիր, բոլոր գրքերը դիտարկում է որպես գեղարվեստական, անտեսելով գրականության մյուս տեսակները և ընթերցանության եղանակները:

Երկրորդ , որ պակաս վտանգավոր ծայրահեղությունը՝ դա *Интеллектуализация*-ինտելեկտուալիզացիան է, երբ մարդը բոլոր գրքերը դիտարկում է որպես ուսումնական և նրանց տեսնում է որպես գիտելիքների աղբյուրի:

Երկու սխալները շատ դիպուկ մեկ տողով նկարագրել է Ջոն Կիտսը:«Գեղեցիկի մեջ է ճշմարտությունը,իսկ ճշմարտության մեջ՝ գեղեցկությունը»:

Ես արդեն ձեզ բավականաչափ զգուշացրել եմ, ինչ կարելի է սպասել ընթերցանության կանոններից ,որոնք մենք մանրամասն քննարկելու ենք հետագա գլուխներում: Կարծում եմ դուք դրանք ճիշտ կօգտագործեք,քանի որ ինքներդ կհասկանաք մի պարզ բան: Այդ ընթերցանություն կանոնները ճիշտ են աշխատում միայն իրենց սահմանափակ օգտագործման շրջանակում:

Աղլեր Մորտիմեր «Ինչպես ընթերցել գիրքը» Գլուխ 7

*Թարգմանությունը՝ Մարգարիտ Գյուլբեկի Հարությունյանի, 2015թ.*

**ՄԵՐԱԲ ՄԱՄԱՐԴԱՇՎԻԼԻ «ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»**

Ես ուզում եմ կիսվել գրաքննադատություն կոչվածի վերաբերյալ անձնական տպավորություններով (նկատի ունենալով, իհարկե, փիլիսոփայի տպավորությունները): Վերջ ի վերջո՝ և՛ փիլիսոփայությունը, և՛ ցանկացած այլ արվեստի տեքստ հանգում է կենսական հարցերին՝ սեր, մահ, գոյության իմաստ ու արժանապատվություն, այն ամենին, ինչը մենք իրապես զգում ենք կյանքում ու սպասում դրանից և, ակնհայտ է, մենք ընթերցում ենք այն, ինչը մոտ է մեր հոգեկան փորձին: Այն, ինչը մեր հոգու մեջ չի ընկղմվում, մեզ համար գրականություն չէ: Գրականության ինչ որ հատվածներ մեզ համար փակված են ուղղակի այն պատճառով, որ նրանք, երևի, չեն համընկնում մեր կյանքի ուղու և ամենագլխավոր գործընթացի՝ սեփական անձի բացահայտման հետ այն բանում, ինչի մասին հուշում է ընթերցանությունից ստացած տպավորությունը: Եվ դրան, երևի, գրաքննադատը չպիտի դիպչի:

Եթե մենք կարդացածի մեջ մեզ չճանաչեցինք, ապա այն մեզ համար դատարկ է և հավանաբար այդ դեպքում չպետք է հաշիվ տանք գրաքննադատության տերմիններում և գրաքննադատություն չի կարող գոյություն ունենալ այն ամենի վերաբերյալ, ինչը գրաքննադատին խորթ է և սրտին չի դիպել: Նա չի կարող տեքստում պարզաբանումներ անել այնպես, որպեսզի ինքն էլ կատարելագործվի ու ընդլայնի և՛ գրքի, և՛ նրա ընթերցողների փորձը:

Ինձ ապշեցրեց մի այդպի հանդիպում. գրող Մարսել Պրուստի հետ հանդիպումը, որը միաժամանակ երկու առավելություն ուներ՝ և՛ հանճարեղ էր, և՛ ժամանակակից, այսինքն՝ նա XX դարի գրող է, մեր և այդ դարի մարդու փորձին ավելի մոտ: Գլխավորն այն է, որ Պրուստի տեքստում պատկերավոր երևում է մարդու ուղին: Իսկ «ուղին», ըստ էության, եթե բառը վերցնենք մեծատառով, ճանապարհ է, որով մարդը դուրս է գալիս ինչ որ խավարից՝ իր կյանքի խավարից, տպավորությունների խավարից, առկա սովորությունների, առկա հասարակարգի, առկա մշակույթի, սեփական «ես»-ի և նրա կրողի խավարից ու պիտի գնա ինչ որ տեղ ուր լուսավորում է իր սեփական փորձի յուրահատուկ ուղեցույց սլաքը: Դրա հետ մեկտեղ պետք է քայլել նաև մշակույթի «հենակներին»՝ նրա արտեֆակտային օրգանների վրա հենված: Եվ ամբողջ կյանքը որոշ իմաստով կայանում է նրանում, ունա՞կ է մարդը մինչև վերջ վերանայել այն, թե ինչ է իր հետ իրականում կատարվել, ինչ է նա իրականում զգացել և ինչ պատմություն է աճում իր կոչումից: Իսկ տարբերել իրականում կատարվածը



թվացյալից, շատ բարդ է: Եվ հատկապես բարդ է միաձուլվելը սեփական անփոխարինելի տեսիլքի ոչ արտաձին արմատի հետ, որի միջոցով ենք միայն բարձրանում դեպի իրական իրողությունն ու միասնությունն այլ մարդկանց հետ:

Եվ ահա ինձ ապշեցրեց տեքստը գրող մարդու (կատի ունեմ Պրուստի) և իմ փորձի բացարձակ մոտ լինելը և մոտ էր նաև, ինչպես պարզվեց, Պրուստի հարաբերությունը հնարավոր գրաքննադատության խնդիրների հետ՝ ընկալելով նրա փիլիսոփայական իմաստը կողքից:

Ես պատահական չեմ խոսում Պրուստի ժամանակակից լինելու մասին: Նկատի ունեմ նաև, որ նրա հեղինակային փորձը սկսվում կամ մտահոգավում էր յուրօրինակ ու ոչ ավանդական վեպի ձևով, որտեղ հիմնական «բովանդակային» առանցքը պետք է լիներ Պրուստի հաշվենկատությունը գրաքննադատության հետ, այսինքն փաստորեն այն բանի հետ, թե ինչպես է ընկալվում ստեղծագործությունը և ինչ է անհատն այնտեղ կարդում(քննադատը կամ ընթերցողը):

XX դարում ողջ սրությամբ հառնեց այն խնդիրը, թե ինչ տեղ ունի արվեստը կյանքում, հեղինակ-ստեղծագործություն հարաբերությանը և հենց իր՝ հեղինակի սկզբունքային գոյությունը: Եվ պատահական չէ, որ Պրուստի վեպը միաժամանակ վեպ է, որը բովանդակություն ունի և միաժամանակ վեպ է այդ բովանդակությունը հասկանալու միջոցներով և կյանքի անհատական իրացմամբ... այսինքն վեպ է վեպի մասին, մարդու մասին, որը վեպ է գրում:

Եվ երկրորդ պահը, որի մասին ուզում էի խոսել. XX-րդ դարում որոշակիորեն հասկացան մի վաղեմի ճշմարտություն, որ տեքստում է առաջին անգամ որպես անհատ և որպես կենդանի մարդ ծնվում նաև այդ տեքստի հեղինակը , այլ ոչ թե իր հաղորդագրության մեջ նախորդում որպես «չար» կամ «բարի» քեռի : Այդ իմաստով պարզվեց, որ գրականությունն ընդհանրապես արտաքին «շրմփոց» չէ կյանքին (զվարճալի կամ ուսուցողական) և տեքստին ոչ մի հաղորդագրություն չի նախորդում, որով կարող էր հեղինակը ընթերցողներին դիմել: Իսկ այն, ինչ գրել է, ընդերք է, որտեղ նա առաջին անգամ իրական «ես» է դարձել, այդ թվում ինչ որ բանից ազատվել ու ինչ որ ուղի անցել տեքստի միջոցով: Մինչև գիրքը դառնալը իմ վկայությունն էլ ինձ համար անհայտ էր: Եվ կյանքս էլ չեմ իրացրել:

XX դարի արվեստը գնաց նոր ուղիով՝ ավելի խիստ անհատական որոնումի ճանապարհով, բառի նկատմամբ ավելի համեստ վերաբերմունքով, հասկանալով, որ տեքստը արարվում է, որովհետև անհատապես ու կենսապես անհրաժեշտ է նրա միջոցով կանգնել փորձարկման կետի , գոյության վկայության վրա, քանզի ճշմարտությունը հնարավոր չէ որևէ տեղից ստանալ, նրան կարելի է միայն ստեղծել,

ինչպես Պրուստն է ասում՝ ամբողջապես, յուրաքանչյուր հատվածում և գրողը ինքը պիտի կայանա ստեղծվող տեքստի միջոցով, որը իհարկե բնական երևույթ չէ, այսինքն հոգեբանական շարժառիթ է, մտադրություն, գեղագիտություն, երևակայության ներքին ցուցանիշ և այլն: Ջրույցը բնական երևույթ է, որտեղ ոչինչ տեղի չի ունենում, իսկ տեքստը բնական երևույթ չէ: Տեքստը ասես գոյություն ունի այլ ժամանակի մեջ և այնտեղ ինչ որ բան կարող է տեղի ունենալ: Մենք հաճախ գրում ենք այնպես, ինչպես խոսում ենք: Պրուստը այդպիսի դեպքերում ասում էր, որ դա տեղի է ունենում, երբ մարդիկ գրում են առանց սիրո, միայն իրենց նկատմամբ սիրո զգացումով, կամ եսասիրությամբ: Նա պնդում է, որ միայն այն ժամանակ է հասկանում, թե ինչ է մտածել ու զգացել, երբ գրում է: Այդ պատճառով նրա մտքի ընթացքը կարելի է ավարտել Մալարմեյի հայտնի աֆորիզմով. «Պոեմները չեն գրվում մտահղացումներով, պոեմները գրվում են բառերով»: Բայց «բառերի» տակ պետք հասկանալ իհարկե տեքստը այն իմաստով, որի մասին ես հենց նոր խոսում էի:

Բորխեսը՝ XX դարի փայլուն գրողներից մեկը, ասում է այդ կապակցությամբ. պոեզիան միշտ խորհրդավոր է, որովհետև երբեք չգիտես, թե ինչ է քեզ վերջ ի վերջո հաջողվել գրել: Իսկ դա գրաքննադատության համար մի պարզ բան է նշանակում, որ որոշակի իմաստով ընթերցողը, այսինքն իրացնողը և գրողը տեքստի նկատմամբ հավասարեցված են, այսինքն գրողը նույնքան «չի հասկանում» իր տեքստը և նույն կերպ պետք է գաղտնագրերծի ու մեկնաբանի այն, ինչպես ընթերցողը: Գրողը նույնպիսի մարդ է, ինչպես մենք, բայց որոշակի փորձով:

Հետևաբար գրաքննադատությունը իմ աչքում փիլիսոփայական առումով լուրջ ընթերցանության ընդարձակ գործընթաց է նշանակում. Իրենից ներկայացնում է իմ և ձեր ընթերցանության գործընթացի ընդլայնում, և ոչ ավելին: Այդ իմաստով գրաքննադատությունը կարող է միայն օգնել գիտակցական անվերջության հարաբերություններում իմ մասնակցությանը, այսինքն կենդանի վիճակի պահպանմանը: Գրքի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը, բնական է, հավասարեցնում է գրքի ընթերցանության գործընթացը այլ կենսական գործընթացների հետ: Դա է ինձ, ինչպես ասացի, գրավում Պրուստի մեջ:

Բայց և այնպես տեղը, որը թողնվել է քննադատության համար, զգալի է, քանզի երբեք չի տեղավորվում իրողության մեջ, այդ թվում և այն, ինչը իրականություն է դարձել գրական տեքստի ուժով: Այն միշտ «դուրս է մղվել», «խորտակվել» է վերջինիս կողմից: Մեծագույն ստեղծագործությունները հենց նրանով են տարբերվում, որ նրանցում ձայն կա, թաքնված տեքստ, ի տարբերություն երևացող բովանդակության:

Երկրորդը. քննադատությունը կարող է կառուցվել փիլիսոփայի համար, կարևոր լինել վերջինիս համար միայն ընթերցողի հետ բովանդակության բացահայտման մասնակցության պայմանով և այն եզրահանգման դեպքում, թե գրքերը

մտահղացումներ ու բառեր են, ոչ թե ֆետիշ: Ցանկացած այլ վերաբերմունք գրքերի ու բառերի նկատմամբ կռապաշտական է, որտեղ մեր իրական «ես»-ը ծածկված է տասանյակ ուրիշ «ես»-երով(ի դեպ, «ես»-ի բազմակիության գաղափարը, պոլիանհատականությունը Պրուստի և XX դարի ամենաէական գաղափարն է): Եվ գրականությունը սուրբ կով չէ, այլ ընդամենը հոգեկան գործիքների ընթացք, որպեսզի կյանքի իրական փորձության մեջ ինքդ քեզ բացահայտես. բացառիկ բացահայտում, որը զգացել ես միայն դու և բացի քեզանից ու քո փոխարեն ոչ ոք այդ փորձառությունից իրականություն կորզել չի կարող:

*Հատվածներ («Կլոր սեղանի» ելույթը «Գրականությունը և գրականագեղարվեստական քննադատությունը փիլիսոփայության և հասարակագիտության ենթատեքստում»): Մերաբ Մամարդաշվիլի (կենսագրությունը)*

*Թարգմանիչ՝ Լիանա Տեր-Պողոսյան*

## ԼԻԱՆԱ ՀԱՅԹԻՆ

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎՈՂ ԴԵՄՔԸ

ԻՆՉՊԵՍ Է ՊԵՏՔ ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ

Քննարկման ենթակա չէ այն, որ ընթերցելու բնույթը փոխվել է վերջին տասնամյակում՝ էլեկտրոնային շարժական սարքերի, էլեկտրոնային մուլտիմեդիա կայքերի, թվայնացված գրքերի, ինտերակտիվ գծապատկերների և սոցցանցերի

զարգացումներով: Բայց արդյո՞ք տարրական դպրոցներում էլ է փոխվել կարդալ սովորեցնելու ձևը: Ի՞նչ պետք է ուսուցիչներն անեն, որպեսզի սովորողներին նախապատրաստեն ժամանակակից իրական ընթերցանությանը:

Մինչև հիմա ընդհանուր համաձայնություն չկա այն բանում, թե ինչպես պետք է ներառել թվային սարքերով աշխատելու կարողությունները գրագիտության ուսուցանման մեջ: Գործող ուսուցիչները քիչ ուղենիշներ ունեն և նրանցից շատերն իրենց դասերը պարզապես հարմարեցնում են նոր իրողությանը իրենց հայեցողությամբ: Գրագիտության ուսուցանման շատ փորձագետներ էլ գոնե մեկ բանում ընդհանուր համաձայնության են եկել. բոլոր սովորողները՝ նույնիսկ ամենակրտսերները, պետք է միաժամանակ սովորեն և՛ տպագիր և՛ թվային տեքստերով:

«Հենց այնպես ինչպես մենք կրտսեր տարիքի երեխաներին սովորեցնում ենք գեղարվեստական և ոչ գեղարվեստական խոսքը հասկանալը, կարող ենք խոսել նախադպրոցական և մանկապարտեզային տարիքի երեխաների հետ. սա այն տեքստն է, որի էջերը շրջում ենք, իսկ այս տեքստի տարբեր էջերին կտտացնում ենք», ասել է Ֆորդիեն համալսարանի անգլերենի ուսուցման և ժամանակակից գրագիտության դոցենտ Քրիսթեն Հոլին: Շատերի կողմից է ընդունված, որ վաղ հասակում սովորողներին իրական ու ժամանակակից ձևով կարդալ սովորեցնելու եղանակը միաժամանակ տպագիր և թվային տեքստեր տալն է:

«Սա այն ձևն է, որով մարդիկ ժամանակակից աշխարհում կարդում, գրում, հաղորդակցվում և սովորում են, և ուրեմն երեխաներն էլ պետք է սկսեն նույնկերպ սովորել ամենասկզբից», ասել է Կոլորադոյի համալսարանի գրագիտության ուսուցանման դոցենտ Բրիջիտ Դալտոնը, «չի կարելի սպասել, մինչև նրանք լավ յուրացնեն կարդալու մի ձևը և հետո անցնեն մյուսին: Դա համաժամանակյա զարգացում է»: Բայց, ինչպես փորձագետներն են ասում, դժբախտաբար այդ ձևով ուսուցանման անցումը շատ վայրերում դանդաղ է իրականացվում: «Կարդալ» բառը տարրական դասարաններում դեռ հաճախ վերաբերում է միայն տպագրին:

Ըստ Կրթության զարգացման ազգային գնահատման 2015 թվականի հարցման տվյալների՝ 4-րդ դասարանցիներից օրեկան միայն 10-ից մեկն է համակարգիչ օգտագործում, որպեսզի հասանելի լինի ընթերցանության համար նախատեսված կայքերին: Չորրորդ դասարանցիների մոտավորապես 30%-ը երբեք, կամ գրեթե երբեք այդպիսի էլեկտրոնային տեքստեր կարդալու համար համակարգիչ չի օգտագործում դպրոցում:...

**Հավելում Տպագրային ունակություններին**

Կրտսեր դպրոցի սովորողներին տպագիր տեքստ կարդալու հիմնարար ունակություններ սովորեցնելու արդեն իսկ դժվար աշխատանքին թվայնացված տեքստեր ավելացնելը կարող է վիատեցնող լինել:

Նույնիսկ թվայնացված դարում ծնված սովորողները կարիք ունեն մի խումբ նոր ունակությունների ձեռքբերման, ինչը ներառում է նոր սարքեր ու առցանց գործիքներ աշխատացնելուն, ուշադրության կենտրոնացնելուն, անվտանգության և անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելուն:

«Դժվար է մեր համար: Լինելով ուսուցիչներ՝ ինքներս ենք նոր միայն գիտակցում, թե որքան է փոխվել մեր ընթերցելն ու գրելը առօրյա կյանքում», խոստովանել է Ֆրենկի Սիբերսոնը՝ երրորդ դասարանի ուսուցիչը Դուբլինից, Օհայո նահանգ, ով նաև անգլերենի ուսուցիչների ազգային խորհրդի փոխնախագահն է:

Շատերն են այն կարծիքին, որ տեխնիկական ունակություններ սովորեցնելու ամենալավ ձևերից մեկը մոդելավորման միջոցով է լինում: Ուսուցիչները կարող են իրենք գործածել տեխնոլոգիան և միաժամանակ էլ բարձրաձայն ասել, թե ինչ են անում: Չիկագոյի առաջին դասարանի ուսուցիչ Քրիստին Ջիմկեն էլ այսպես է արտահայտվել. «Այս շաբաթ մենք կարող ենք թղթե տպագիր գիրք կարդալ, իսկ հաջորդ շաբաթ կարող եմ անցնել իմ ընտրած «[Kindle](#)»-ին (էլեկտրոնային գրքերի հավաքածու): Ես ուզում եմ, որ իմ աշակերտները տեսնեն, թե ինչպես եմ ես էլեկտրոնային գրքի էջը առաջ և հետ շրջում: Կարիք չկա, որ յուրաքանչյուր սովորող՝ հատկապես ամենակրտսերները, ունենա իր սեփական համակարգիչը դասարանում: Մեկ համակարգիչը իր պրոյեկտորով ամեն ինչ փոխում է և ուսուցիչների և սովորողների համար»:

«Կրտսեր սովորողների համար բոլորովին էլ դժվար չէ տպագիր բառերից ու տեքստից հայացքներն ուղղել էկրանին: Դա իրենց աշխարհընկալման բնական ձևի ընդլայնում է: Դա այն է, ինչին առերեսվում են իրենց կենցաղում», ասել է Կարեն Պելեքիսը՝ առաջին դասարանի ուսուցիչը Սքարսդեյլից:

## **Ոչ գծային տեքստեր**

Թղթե տպագիր և էլեկտրոնային առցանց ընթերցումների ամենամեծ տարբերությունն այն է, որ վերջինս ընթերցելուց բացի տալիս է նաև որոշում կայացնելու հնարավորություն: Քեթրին Հեյլը՝ տեխնոլոգիայի դասավանդողը Արլինգտոն քաղաքից, հայտնել է հետևյալ կարծիքը. «Տպագիր ընթերցանությունը վերջ ունեցող մեկուսի ընթերցանություն է, իսկ թվային ընթերցանությունը ավելի շատ նման է արկածներ որոնելուն: Դու կարող ես կոտացնել մի այլ բանի վրա ու նորից շարունակել ընթերցելը»: Այլ խոսքերով ասած ընթերցանությունը գծային բնույթով տպագրից անցում է կատարում դեպի ոչ գծային առցանցը: Փորձագետներն ասում են,

որ ուսուցիչները պետք է ուղղակիորեն օգտվեն այդ տարբերությունից՝ ցույց տալով սովորողներին, որ երբեմն մի որևէ հոդվածի կեսին հասնելով ճիշտը դադար առնելն է և մի հղումին կտտացնելը կամ էլ՝ մի տեսաֆիլմ դիտելը, եթե դա օգնելու է նրանց տեքստի բովանդակությունը ավելի լավ հասկանալ: Թերներն ասել է. «Մենք պետք է կրտսեր սովորողներին սովորեցնենք, որ թվայնացված տեքստերը հղումներով են և համացանցի տարբեր կայքերում են, և ընթերցողը մի տեղից մյուս տեղն է գնում թռիչքաձև, այլ ոչ թե միայն ձախից աջ»:

Միևնույն ժամանակ սովորողները պետք է գիտակցեն, որ առցանց ընթերցանության և տպագիր ընթերցանության ֆորմատները տարբեր են, բայց նպատակը նույնն է մնում:... Այդուհանդերձ, որոշ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ 3-ից 6 տարեկան երեխաները, երբ իրենց ծնողների հետ էլեկտրոնային գրքեր են կարդում, ավելի քիչ բովանդակային մանրամասներ են հիշում, քան երբ աշխատում են տպագիր գրքերով:... Առցանց ընթերցման ընթացքում կրտսե սովորողները կարիք ունեն, որպեսզի իրենց սովորեցնեն, թե ինչպես է կարելի չջեղել ուշադրությունը ընթերցանության բուն նյութից. ե՞րբ անտեսել հղումները, հարակից ներդիրները և չթռչել մի այլ տիրույթ: ...

### **Առցանց տեքստերի որոնում**

Շատ փորձագետներ այն կարծիքին են, որ հենց այնպես, ինչպես սովորողները սովորում են տպագիր գրքեր ընտրել գրադարանում, նույնկերպ էլ նրանք պետք է սովորեն տեքստեր որոնել առցանց, բայց, իհարկե, առցանց որոնումը լի է անվտանգության և անձնական տվյալների գաղտնիության խնդիրներով և այս պատճառով կրտսեր սովորողները որոնումը պետք է կատարեն ավելի սահմանափակ տիրույթներում: Փելեկիսն, օրինակ, խուսափում է իր առաջին դասարանցիներին որոնում առաջադրելուց և միանգամից տալիս է նրանց պահանջվող տեքստի հղումը:... Այդ ձևով նա իր սովորողներին հեռու է պահում հնարավոր անպատշաճ տեքստերից: ...

### **Իսկական ընթերցանությունը ընդդեմ խաղերի**

Անհաշիվ քանակության առցանց խաղեր կան, որոնք օգնում են սովորողներին վարժանքների միջոցով բարելավել իրենց կարդալու կարողությունները և դասավանդողներն էլ տարիներ շարունակ օգտագործում են դրանք, բայց թվային ընթերցանության փորձագետները զգուշացնում են, որ էական տարբերություն կա ընթերցանական խաղեր (հնչյունական բնույթի, բառապաշարային) օգտագործելու և իսկական առցանց ընթերցանության միջև:

Խաղերի վերաբերյալ Զիմկեն հետևյալ միտքն է ասել. «Երբ ինձ հարցնում են, թե որն է երկրորդ դասարանի համար ամենալավ բառային խաղը, որը հիմնված է ամենաշատ

օգտագործվող բառերի վրա, ես պատասխանում եմ, որ չգիտեմ, ես չեմ օգտագործում խաղային տեխնոլոգիան: Ես որևէ կերպ դեմ չեմ խաղերին, բայց երբ խոսքը վերաբերում է ամնասկզբին, թե ինչից սկսենք, ես այն կարծիքին եմ, որ մենք այնքան շատ բան կարող ենք անել մեր ամենօրյա աշխատանքը մոդելավորելով և տեխնոլոգիան նպատակային իսկական ձևով օգտագործելով»:...

### **Դասարանային խոչընդոտներ**

...Շատ ուսուցիչներ բողոքում են, որ իրենք դասարանում չունեն համակարգիչներ և ինտերնետ կապ, որպեսզի սկսեն առցանց ընթերցում իրականացնեն: Թերևերն այն կարծիքին է, որ դա ուսուցիչների ամենափոքր խնդիրն է: «Ավելի մեծ խնդիր է այն, որ ուսուցիչները երկրնտրանքի մեջ են ընկնում և չգիտեն, թե ինչպես վարվեն, քանի որ տարվող կրթական քաղաքականությունը անհրաժեշտաբար չի զարգացնում թվային առցանց ընթերցանությունը: Համացանցը լցված է միօրինականացված թեստերով, որոնք չեն պահանջում իսկական ընթերցանական կարողություններ, ինչպիսին է համացանցում որոնողական մեխանիզմների գործածումը: Եվ շատ դեպքերում, քանի որ իսկական առցանց ընթերցման կարողությունը չի գնահատվում, ուսուցիչները առաջնայնություն չեն տալիս դրա ձևավորմանը»:...

Չեստերֆիլդի մանկավարժական նորարարության համակարգող Բասսը իր բլոգում գրել է. «Մեծ հաշվով ժամանակին մեզ չեն պատրաստել որպես ուսուցիչներ, ովքեր աշխատելու էին թվայնացված տիրույթում սովորողների հետ: Մենք հետ ենք ընկնում և ապավինում ենք այն ամենին, ինչին մեզ են սովորեցրել, իսկ դա հենց խոչընդոտ է»: Որոշ ուսուցիչներ էլ այլ մտածելակերպեր ունեն, որ հետ են պահում իրենց առցանց ընթերցանությունից: Զիմկեն իր բլոգում նշել է. «Կան ուսուցիչներ, ովքեր սպասում են մինչև կանցնեն այլ աշխատանքի, կամ էլ ասում են, որ կգնան այլ դպրոց, որտեղ տեխնոլոգիային այնքան էլ ուշադրություն չեն դարձնում: Որոշ մանկավարժներ էլ գիտակցորեն կապված են այն մտքին, որ սիրահարված են տպագիր գրքերին՝ ասելով ...Ինչ-որ մի ձգող կախարդական բան կա գիրքը ձեռքում պահելու և թերթերը շրջելու մեջ», բայց Հալեն գրել է. «Ընթերցելն այլևս տպագիր տեքստ ընթերցել չէ: Ընթերցելը աշխարհի ընթերցումն է դարձել»:

*Հեղինակ՝ Լիանա Հայթին «Education Week» շաբաթաթերթ, 8 նոյեմբերի, 2016*

*Թարգմանությունը՝ Յուրա գանջայյանի 2016թ.*

**ԳՐԱԴԱՐԱՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՆՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ՝  
ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**Գրադարան-ամենալայն հասկացությամբ.**

1. Գրադարան, որն իր մեջ ներառում է առարկայական այն տեղեկատվությունը, որը դասի ժամանակ ուսուցիչը տալիս է, բայց տվյալ առարկայի ինքնակրթության զարգացմանը նպաստում է գրադարանը:

2. Առաջին հերթին գրադարանը նշագրումների արխիվ է, որոնց օգնությամբ ֆիքսված են դասընթացների ընթացքում տվյալ դասարանում ուսուցանված հավանական ուղիները, որի հիմքի վրա ստեղծվում ու լրացվում է կատալոգը:

\*Յուրաքանչյուր դասարան ունի իր հավականության ճանապարհն ու յուրահատուկ կրթական պատմությունը:

\*Արդեն դասարանի հավանականության ճանապարհին ստեղծած պատմությունը ներառվում է գրադարանի արխիվում:

\*Այս դեպքում արդեն հնարավոր է լինում ստեղծել երկխոսություն մեթոդական ու կրթական արխիվների միջև:

3. Գրադարանը մշակութատեղեկատվական կենտրոն է թղթային, թվային, վիդեո և աուդիո կրիչների վրա՝ «Մեծ» մշակույթի անընդհատ տարածվող մոդել:

4. Հավանականության կրթության գրադարանն անպայման պիտի ունենա հեղինակություն, դրանում իհարկե կարող են լինել փոթորիկներ ու խմբավորումներ, սակայն գրադարանավարի դերն այնքան հաստատուն պիտի լինի, որ թելադրի իր սեփական ճաշակը:

5. Գրադարանը ոչ թե դպրոցի օղակներից մեկն է, այլ պետք է հանդիսանա հեղինակային ծրագրերի տարողունակ բազա կրող ուսումնական հաստատության բոլոր դասարանների համար:

\*Կրթական կարևոր ծրագիր է հանդիսանում գրադարանավարի ուսումնահետազոտական ճանապարհորդությունը օտար աղբյուրներում՝ բլոգներում:

Գրադարանային նոր ծրագրերի ուսուցման դեպքում առաջանում է անհրաժեշտություն և հնարավորություն ծրագրերի միջև ստեղծելու քննարկում-երկխոսություն՝ հնարավոր խաչաձև և զուգահեռ ճանապարհներով:



*Թարգմանեցին՝ Մարի Գաբանյանը և Ջարուհի Առաքելյանը  
Հատված՝ Лобок А. Избыточность - как минимальное условие вероятности գրքից*

## **ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՆԴԱԿԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ**

Գրադարանը մեր բանականության տունն է, մեր մտահայեցողական ակտիվությունը:  
Կա միայն մեկ վերապահում՝ ոչ ոք չի ավարտում այն: Հավանաբար ոչ մեկը չի  
կարող և պետք էլ չէ, որ ավարտի...  
*Վարդան Գրեգորյան, 1981-88 թթ Նյու-Յորքի հանրային գրադարանի նախագահ*

Համակարգիչների մուտքը հեղաշրջում կատարեց  
տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների,  
թանգարանների աշխատանքի նորովի կազմակերպում: ԱՄՆ-ը լինելով թվային  
գրադարանի ստեղծողը հսկայական փորձ է կուտակել այդ բնագավառում:

Թվային գրադարանը համապատասխան ծառայություններով հագեցած այնպիսի  
տվյալների կառավարելի հավաքածու է, որոնք պահվում են թվային ֆորմատներով և  
մատչելի են համակարգչային ցանցերի օգնությամբ:

Թվային գրադարանը ունի մի շարք առավելություններ ավանդական գրադարանի  
համեմատությամբ:

1. Ավանդական գրադարանի դեպքում ընթերցողը իրեն անհրաժեշտ նյութը գտնելու  
համար պետք է այցելի գրադարան կտրվելով իր աշխատանքից, իսկ թվային  
գրադարանի դեպքում պետք է միայն համակարգչի միջոցով միանա համացանցին և  
ստանա իրեն անհրաժեշտ ինֆորմացիան:
2. Թվային գրադարանը իր հզոր որոնման համակարգերի, գիտելիքի մատչելի լինելու,  
հեշտ յուրացման, օրվա բոլոր ժամերին հասանելի լինելու պատճառով ունի  
անվիճելի առավելություն ավանդական գրադարանի նկատմամբ:
3. Ամեն տարի ավելացող գրքերի, պարբերականների  
թվայնացումը էկոլոգիական շատ կարևոր խնդիր կլուծի (չեն հատվի մեծ  
քանակությամբ ծառեր):
4. Տեղեկատվության մատուցման նոր եղանակների ի հայտ գալը: Թվային  
գրադարանում հնարավոր է միաժամանակ օգտվել հիպերտեքստից, տեսալսողական  
նյութերից, մասնակցել գիտաժողովների և քննարկումների:

5.Տեղեկատվության արդիականության ապահովում: Համակարգչային տեղեկատվության արդիական պահելը անհամեմատ հեշտ է: Այդ պատճառով աշխարհի շատ գրադարաններ ձեռք են բերում հանրագիտարանների, բառարանների տեղեկատու հրատարակությունների թվային տարբերակները:

6.Տարածքների խնայողական օգտագործում: Խոշոր, ավանդական գրադարանները նյութական մեծ ներդրումներ պահանջող կառույցներ են: Այժմ թվային ընթերցանիչները թույլ են տալիս պահպանելու թվային գրքերի հարյուրավոր հատորներ:

Թվային գրադարանում գրադարանավարը հանդես է գալիս որպես «գիտելիքի» ճարտարագետ:

Գրադարանավարը թվային գրադարանի համակարգում դրսևորվում է որպես`

1. Տեղեկատվության բնագավառի փորձագետ, որը տիրապետում է տվյալների որոնման ու արտածման, գիտելիքների կառավարման, տեղեկատվության նախագծման ու մատուցման գործընթացներին:

2. Կառավարիչ` որը ղեկավարում է տարբեր ծրագրեր:

3. Բարձր տեխնոլոգիայի մասնագետ:

4. Ստրատեգիական պլանավորող:

Տեղեկատվական այս հասարակարգում գրադարանների ապագայի մասին կարծիքները խիստ տարբեր են: Մենք կարծում ենք, որ որքան էլ կատարյալ լինեն տեխնոլոգիաները և աճի էլեկտրոնային պարբերականների, հրապարակումների քանակը, միևնույնն է գրադարանը որպես սոցիալական երևույթ, որպես մարդկանց ինտելեկտուալ հավաքատեղի, կշարունակի իր առաքելությունը դեռ շատ երկար ժամանակ:

*Նյութը պատրաստեց` Մարգարիտ Հարությունյանը*

*Տիգրան Զարգարյան «ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ»*

## ԻՆՉ ԱՍԵԼ Է՝ ԼԱՎ ԳԻՐՔ

*«Յուրաքանչյուր լավ գրքի աներկբայելի հասկանիշն է. որքան մարդ մեծանում է, այնքան այն ավելի շատ է դուր գալիս»*

*Լիխտենբերգ*

Լավ գիրք, լավ ստեղծագործություն... Երեխաներին պետք է միայն լավը տալ: Պետք է ճաշակ զարգացնել... Բայց ի՞նչ ասել է լավ գիրք:

Ստեղծագործությունների՝ քննադատների վերլուծություններին եթե հավատանք, արժեքավոր է գրքի սյուժեն, որը, լավ կլինի, սրընթաց, աշխույժ լինի: Հերոսներն այնպես կերտված լինեն, որ ընթերցողը նրանց ապրումներին հաղորդակից դառնա, հերոսներն իրենք արտակարգ մի բան լինեն. զարմանալի, հիանալի՝ անհատականություններ լինեն, տեքստը խորք՝ ասելիք ունենա, ճանաչողական լինի ու էլ չգիտեմ՝ ինչ:

Լավ կլիներ... Բայց սրանք բոլորը միասին քիչ է պատահում, որ լինեն: Փոխարենը շատ են, օրինակ, սրընթաց սյուժեով ստեղծագործությունները: Անընդհատ հետապնդում է, փախուստ, հերոսին փրկել ձգտող մարդիկ, որ գոհվում են այդ «վեհ» առաքելության ճանապարհին...

Սարսափի ժանրում, եթե շատ ապաշնորհ չէ, իհարկե, հերոսի հետ սարսափում ես՝ հաղորդակից ես նրա զգացմունքներին: Ավելի շատ մարդ հաղորդակից է թախծաթաթախ մելոդրամաների հերոսների զգացմունքներին՝ «խեղճ աղջիկ, խեղճ տղա»... Հոգեբանորեն սրանք արդարացված են. մարդն իրեն հերոսների հետ չի նույնացնում, ընդհաառակը՝ հակադրում է, իրեն հերոսներից ավելի կայացած ու լավն է զգում: Եվ՝ ի՞նչ. Դա արդեն լավ գրականություն է:

Կա և մյուս ծայրահեղությունը՝ «ինտելեկտուալ» գրականությունը. սա ոչ բոլորին է հասու: Ֆոլկները, Ջոյսը, Դոստոևսկին ամեն մարդու համար չեն: Շատերը նույնիսկ չեն նայի դրանց կողմը, ոմանք կփորձեն՝ ի սեր բարձրահունչ անունի մի քանի էջ կկարդան, բայց ի՞նչ արժեք կունենա այն գրականությունը, որ ընթերցված է՝ պարծենալու համար, թե կարդացել ես...

Գեղարվեստական ստեղծագործություններն իրենց ստեղծողների զգացածն ու իմացածն են, նրանց մտքերը, կենսափորձը... Ընթերցելով համաշխարհային գրականություն՝ հաղորդակցվում ենք հենց այդ համաշխարհային կենսափորձի, մտքի ու տեղեկացվածության հետ:

Գիրքը հավանում էս, երբ քեզ ինչ-որ բան է ասում և դու հասկանում էս, կամ երբ ասում է այն, ինչ դու վաղուց հայտնաբերել էիր, բայց չգիտեիր՝ համախոհ ունե՞ս, շատ տարօրինակ չե՞ք մտածածը...

Այս տեսակետից գեղարվեստական գրականությունը քո անշահախնդիր գրուցընկերն է: Եվ գրքի հետ էլ կարող էս վիճել, չընդունել, չհամաձայնել, նույնիսկ նրանից խռովել, բայց հավանել, որովհետև դու նրա հետ ապրում էս: Այսինքն՝ գիրքը պիտի ասելիք ունենա:

Ասելիքը ցանկացած խոսքում, ինչպես մի անգամ իմ հոգեբան ընկերներից մեկն ասաց, որպես կանոն, կա: Պարզապես հաճախ թաքնված է խոսողի ենթագիտակցության մեջ, բայց ավելի հաճախ, կախված խոսողի մտավոր զարգացածությունից, վատ է թաքնված: Դա սովորաբար ինքնագովեստն է, իրեն ցուցադրելու, հանրության կողմից գնահատվելու ցանկությունը: Եթե գեղարվեստական գրականության ասելիքն է այս մակարդակում, հազիվ թե բավարար համարվի, և դժվար թե դա կարելի է լավ գրականություն կոչել: Ու եթե, ինչպես ասում է Հարուկի Մուրակամին «... Խորքային իմաստը կարող է միանգամից չհայտնաբերվել. այն կարող է քեզ սպասել նախասրահում կամ վերջում՝ դուռը փակելուց հետո», իսկ դա շատ հաճախ հենց այդպես է, ապա ասելիքի բացակայությամբ, այսինքն՝ հանուն պատմելու պատմված մի սյուժեն, երբ «դուռը փակելուց հետո էլ ոչինչ չես գտնում, հիասթափություն է առաջացնում, չի բերում մարդուն ո՛չ իր մտքերն ամփոփելուն, ո՛չ նոր մտքերի: Մի առիթով կարծեմ Մարկեսն էր ասում՝ չի կարող իսկական գիրքը վերջին էջով ավարտվել: Գիրքը քեզ պիտի ուղեկցի դեռ: Բայց դրա համար դու էլ պիտի «ճանապարհորդ» լինես:

Գրականությունն իր ասելիքով պիտի քո առաջ բացահայտի աշխարհը կամ ինքդ քեզ: Որքան տարբեր լինեն մարդիկ, որ գտնում են իրենցը տվյալ ստեղծագործության մեջ, այնքան արժեքավոր է ստեղծագործությունը: Դա ամենաուղղակի ցուցիչն է, որ նյութը բազմաշերտ է՝ լայն ընդհանրացումներով, իր առաջադրած խնդիրներին (մտածվում է, որ խնդիրներ պիտի առաջադրվեն) միանշանակ պատասխան չի տալիս, չի խրտնեցնում ընթերցողին բարդ ոճով, անհասկանալի կառույցներով: Ի դեպ՝ ոճի ու կառուցվածքի մասին:

Որքան էլ այսօրվա համաշխարհային ու նաև հայ գրականության մեջ միտում կա հրաժարվելու ձևից (դա արձանագրում և խրախուսում են գրականագետները՝ Ռոնալ Բարտից մինչև մեր համալսարանների երեկվա շրջանավարտները), ստեղծագործությունը, միևնույն է, տեքստ է, իսկ գրական ստեղծագործությունը՝ բառային տեքստ: Եթե ստեղծագործությունը մարդկանց համար է, պիտի հասանելի ու հասկանալի լինի նրանց: Դա նման է այն հագուստին, որից դատում են մարդու ինքնության մասին: Նորից դիմենք Մուրակամին. «Այն, ինչ իրոք թաքնվում է գրքի հենց սրտում՝ սրբություն սրբոցը, կարելի է քննարկել ու տեսնել այն բանից հետո

միայն, երբ հաղթահարված է առաջին շերտը...»: Եթե այդ առաջին շերտը անհաղթահարելի կամ դժվար հաղթահարելի լինի, ինչպե՞ս պիտի մարդ դատողություն անի դրա «սրբություն սրբոցի» մասին: «Այն, ինչ լավ է գրված, երբեք չի ձանձրացնում. ոճը ինքը՝ կյանքն է. դա մտքի արյունն է», - ասում է Ֆլոբերը:

Երբ սովորողները հարցնում են՝ որն է լավ գրքի չափանիշը, ես երկու բան եմ ասում. ինչի մասին էր խոսում քեզ հետ այդ գիրքը՝ ինչ բացահայտեց քեզ համար և ինչպես դա արեց:

*Հեղինակ՝ Հասմիկ Ղազարյան*

## ՄԵԴԻԱԳՐԱԴԱՐԱՆԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԸ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋԱՎԱՅԸ

Թվային միջոցները շատ արագ տեմպերով ներթափանցում են կրթական միջավայր, իսկ ավելի կոնկրետ՝ անմիջապես դասային գործընթացի մեջ:

Դասի կազմակերպման վստահելի միջոց է դառնում մեդիագրադարանը: Դասին անհրաժեշտ գրականությունը, ուսումնական նյութերը այսօր մեդիագրադարանի բաղկացուցիչ մասն են: Օրեցօր համալրվում են մեր կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանի մեդիագրադարանի ֆոնդերը: «Թվային գիրք», «թվային դասագիրք», «ատլիոգիրք», «տեսանյութ» և այլ բաժիններում կարելի է գտնել դասի համար անհրաժեշտ բավարար նյութեր: Արժանին պետք է մատուցել գրադարանի աշխատակիցներին, նրանց պրպտող, եռանդուն աշխատանքի համար:

Իբրև մայրենիի ուսուցիչ՝ մեդիագրադարանում տեղ գտած գրականությունը կուզենայի տեսնել այսպիսի բաժանումներով.

գրողի ստեղծագործության մեդիաժողովածուներ  
գրողի ստեղծագործության մասին մեդիագրականություն  
տեսանյութեր

Եղած տեսանյութերն էլ, անշուշտ, բազմազան են ու բազմաբնույթ: Դասավանդողն ընտրություն կատարելու համար ժամանակ պիտի տրամադրի, ուստի առաջարկում եմ դրանք էլ խմբավորել այսպիսի բաժանումներով.

փաստավավերագրական տեսանյութեր և գեղարվեստական ֆիլմեր  
ստեղծագործությունների ընթերցում

ստեղծագործությունների երգային կատարումներ

Իսկ ինչպե՞ս պիտի մեդիագրադարանից օգտվի դասավանդողը: Նախ և առաջ շատ ամուր պիտի լինի կապը դասավանդողի և գրադարանի աշխատակիցների հետ:

Համատեղ աշխատանքի հետ կապված՝ մի առաջարկություն արդեն եղել է (նայել Մարգարիտ Մարգարյանի հոդվածը «Դպիրում»՝ <http://dpir.mskh.am/art.php?id=491>): Ես առաջարկում եմ օգտագործել նաև պարբերաբար հանդիպումների տարբերակը սեմինարի, խորհրդատվության ձևով: Դրա անհրաժեշտությունը խիստ ցանկալի է հատկապես մեր՝ մայրենիի դասավանդողներիս համար: Ահա մի օրինակ իմ աշխատանքից. 11-րդ դասարանում Լևոն Շանթի ստեղծագործությունն ուսումնասիրելիս դասարանում պրպտեցինք նրա մասին եղած նյութերը, բայց արդյունքն աղքատիկ էր: Այս օրերին մեր մեդիագրադարանը Լ. Շանթի մասին նյութերի մի մեծ շտեմարան է առաջարկում, որ, ցավոք, չէինք գտել հեղինակի գրականությունն ուսումնասիրելիս: Մի բան հաստատ է, որ դասավանդող և գրադարանավար համագործակցությունից շահում է աշակերտը և անհամեմատ բարձրանում է ուսումնառության մակարդակը:

Մեդիագրադարանը դասավանդողի ձեռքի տակ ապահով է դառնում հատկապես ուսումնական կաբինետում: Մեզանում ուսումնական կաբինետները նորություն են, բայց արդեն հասցրել ենք գնահատել դրա առավելությունները: Դասավանդողը վստահ է, որ իր համակարգչում պահած նյութերը ցանկացած պահի կարող են ծառայել դասին և այն ավելի արդյունավետ դարձնել: Իսկ ահա հաստատուն ու անխափան համացանցի ապահովումը դասային գործընթացի հաջողության երաշխիքն է:

*Ղահրամանյան Թամար*

## ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Ուսումնասիրել եմ Ֆրանսիայի գրադարանների և գրադարանավարների մասին հոդվածներ և ներկայացնում եմ 21-րդ դարում գրադարանավարների դերը վերնագրով հետևյալ ծաղկաքաղը՝

**«Այսօր գրադարանավարի մասնագիտությունը դեռևս չճանաչված է:**

**Մարդկանց մոտ դեռ այն կարծիքն է, որ գրադարանավարի դերը գրքեր դասավորելն է, մինչդեռ թվայնացման հետ աշխատանքները նույնպես բարդանում են»,**նշում է Ռեմին Հորեստեինը՝ Քեբեքի պրոֆեսիոնալ գրադարանավարների կորպորացիայի նախագահը: Գրադարանավարներին ձգտում են տեսնել փաստաթղթեր տրամադրողի դերում, մինչդեռ նրանք շատ ավելին են անում՝ մասնավորապես երիտասարդների մեջ հետաքրքրություն առաջացնելը դեպի գրադարանը: Գրադարանավարի աշխատանքը հենարան է հանդիսանում նաև մանկավարժությանը՝ ներառելով գրադարանի պաշարները տարբեր

դասապրոցեսներում: Գրադարանավարն ապահովում է գրքերի, ամսագրերի, տարբեր փաստաթղթերի, DVD-ների, CD-ների, CD-ROMS-երի, ձայներիզների ձեռքբերումն ու պահպանումը: Նա ընտրում է հասարակության կողմից պահանջված փաստաթղթերը, նոր լույս տեսած աշխատությունները և դրանց ազատ տրամադրումը, դա նրա աշխատանքի մշակութային կողմն է; տեխնիկական կողմն է՝ արձանագրել, ցուցակագրել և այբբենական կարգով դասավորել փաստաթղթերը, ընդունել ընթերցողին, օգնել ընտրության մեջ, տեղեկացնել, հետաքրքրություն առաջացնել ցուցահանդեսների և քննարկումների վերաբերյալ; այսպիսին է գրադարանավարի դերը՝ «միության գիծ» գրքի և ընթերցողի միջև: Գրադարանավարն ուղղակիորեն կապված է հասարակության բոլոր շերտերի հետ՝ երեխա, պատանի, երիտասարդ, ուսանող, գիտնական...

Այսօր երեխաները մեծանում են մի աշխարհում, որն էապես փոխվել է վերջին 10 տարիների ընթացքում: Նոր տեխնոլոգիաները բերում են նոր հարմարություններ և մարտահրավերներ ուսումնական գրադարանների և դասավանդող-գրադարանավարների համար: Այժմ դասավանդող-գրադարանավարները չեն համարվում ուղղակի «գրքերի պահապաններ», նրանք ինֆորմացիա ապահովողներ են, խորհրդատուներ, մանկավարժության ներկայացուցիչներ, մանկավարժության առաջնորդներ և ամենակարևորը ուսուցանողներ: Գրադարանների ավտոմատացումը, ինտերնետի և CD-ROM-ի գործածումն արմատապես փոխել են դասավանդող-գրադարանավարների դերը, ինչը նրանց աշխատանքը դարձրել է ավելի պահանջված: Տեխնոլոգիայի գործածումը ստիպում է նրան ուսուցանել ինֆորմացիայի տեխնոլոգիա, նոր տեխնոլոգիաներ սովորեցնել խնդիրները հաղթահարելու համար և իմանալ ինտերնետային որ աղբյուրը կարող է օգնել աշակերտին և դասավանդողին: Փոխվել են ժամանակները, երբ դասավանդողն ասում էր թեման և գրադարանավարը տալիս էր գրքերը, այժմ դասավանդողը և գրադարանավարը ընտրում են թեման և աղբյուրները: Նա համագործակցում է դպրոցի վարչակազմի, դասավանդողների, սովորողների հետ միաժամանակ: Փորձը ցույց է տալիս, որ երբ դասավանդողը և գրադարանավարը համագործակցում են աշակերտների ուսումնառության մակարդակն ավելի բարձր է լինում: **Դասավանդող-գրադարանավարները գիտեն, որ ինֆորմացիայի աղբյուրները շատ արագ են փոխվում և այս պարագայում ևս գրադարանը ստանձնում է առաջնորդի դերը: Գրադարանավարը դառնում է ուսուցման խորհրդատու**, որը իր մասնակցությունն է ունենում ուսուցման բոլոր մակարդակներում և որը բերում է ծրագրերի բարելավման հեռանկարներ: Ինֆորմացիայի աղբյուրի վերաբերյալ նրանց իմացությունը կարող է օգնել դասավանդողին՝ գտնելու անհրաժեշտ նյութը: Դասավանդող-գրադարանավարը սովորեցնում է աշակերտին քննադատական ձևով վերլուծել ինֆորմացիան և օգտագործել գիտակցաբար: Սովորողները պետք է իմանան ինչպես

Ճիշտ ծրագրել, տեղալնացնել և օգտագործել ինֆորմացիան: Գրադարանը և համակարգիչը պետք է նրանց օգնեն հարցերի պատասխանները գտնելու համար: Սովորողները չպետք է կրկնօրինակեն գրքային կամ ինտերնետային աղբյուրը, նրանք պետք է կարողանան սովորել **ինֆորմացիայի վերաբերյալ մտածելու կարողությունը**, այս հարցում ևս դասավանդող-գրադարանավարների դերն անփոխարինելի է:

### **Դասավանդող-ընթերցողն այսօրվա գրադարանի մասին**

Կարճ ժամանակ է, ինչ աշխատում եմ «Միսիթար Սեբաստացի» կրթահամալիրում, այնուամենայնիվ հասցրել եմ հիմնովին փոխել իմ պատկերացումն այն մասին, որ գրադարանը պարզապես ընթերցողին է փոխանցում եղած գրքերը:

Բոլոր դասաժամերս անց եմ կացնում գրադարանի աշխատասենյակում և կարող եմ ասել, որ գրադարանի անձնակազմն անում է ամեն հնարավորը միջավայրը հարմարավետ և հյուրնկալ դարձնելու համար: Գրադարանը զինված է ոչ միայն ժամանակակից տեխնիկական միջոցներով, ինտերնետային կապով, CD-ներով, DVD-ներով, ամսագրերով, թերթերով այլ նաև ժամանակ առ ժամանակ ձեռք է բերում նոր գրականություն և տեխնիկա՝ ընդառաջելով նաև ընթերցողի պահանջներին: «Տիգրան Հայրապետյան» գրադարանը կարող եմ ասել, որ համայնքային նշանակություն ունի, քանի որ այն ծառայում է ոչ միայն աշակերտներին, ուսուցիչներին, վերապատրաստվողներին, ուսանողներին այլ նաև համայնքի բնակիչներին՝ որտեղ հեշտությամբ կարող են ձեռք բերել տարբեր կարգի և բնույթի տեղեկատվություն՝ շաբաթվա բոլոր օրերին: Ժամանակակից ընթերցասրահում կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, սեմինարներ, քննարկումներ, գրքի շնորհանդեսներ, հանդիպումներ և այլն: Էլեկտրոնային տարբերակով ստեղծված գրքերի, հոդվածների, նյութերի տրամադրումն ընթերցողին նաև online տարբերակով գրադարանը դարձնում են հասանելի ամենքին:

Հետաքրքրություն առաջացնելու համար դեպի գիրքը և գրադարանը՝ կրթահամալիրում ստեղծվել է նաև ամառային ընթերցասրահ բակում՝ որտեղ ստեղծված են բոլոր պայմաններն արտաքին աշխարհի ադմուկից կտրվելու և հաճելի ընթերցանությամբ զբաղվելու համար: Այս ամենը հաշվի առնելով կարող եմ ասել, որ գրադարանը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և միակն է Հայաստանում:

*Տրանսերեն լեզվի դասավանդող՝ Աննա Մարության*



## ԳՐԱԴԱՐԱՆ ԱՌԱՆՑ ԳՐՔԻ

Աշխարհում մտածում են ստեղծել գրադարաններ, որտեղ կլինի թվային միջոցներով և էլեկտրոնային գրքերով հարուստ միջավայր, և ընթերցողը, երբ, որտեղ կամենա՝ կսովորի, կուսումնասիրի և ընդհանրապես կգբաղվի ընթերցանությամբ:

Պատկերացնում եք՝ ԱՄՆ –ում համացանցի ընթերցողներին էլեկտրոնային գրադարան պարզևեղու համար անհրաժեշտ է 250 000 ԱՄՆ դոլար:

Իսկ կրթահամալիրը ի՞նչ է անում և ի՞նչ միջոցներ է օգտագործում ստեղծելու համար գրադարան «առանց գրքի»: Ինչպիսի՞ մեթոդով կարելի է անցում կատարել, երբ «Մխիթար Մեքաստացի» կրթահամալիրում մեդիակրթության իրականացումը և դրա զարգացումը պահանջում են, որ գրադարանը վերափոխի իր աշխատանքի կազմակերպումը, գործի՝ ետ չմնալով տեխնիկայի «խելագար» թռիչքներով պայմանավորված ընթացքից:

Ինչպե՞ս է կրթահամալիրում իրականացվում գրադարանի զարգացումը:

Մեդիակրթություն իրականացնող կրթահամալիրի գրադարանի ֆոնդը համալրվում է դասավանդող-գրադարանավարի և սովորողների ստեղծած ուսումնական նյութերով: Այս ուսումնական տարում արդեն յուրաքանչյուր դասավանդող դառնում է նաև գրադարանավար, անցումը տեղի է ունենում այնքան բնական եղանակով, որ դասավանդողն ինքն էլ չի զգում «վերամասնագիտացումը»: Իհարկե, որպես նոր գաղափար, այն հանդիպել է իր բաժին պատենեշին. դասավանդողն ըմբոստանում էր, երբ իրեն առաջարկվում էր դառնալ գրադարանավար:

Բայց քանի որ դասավանդողներն այլևս իրենց աշխատանքը չեն պատկերացնում առանց մեդիահամտությունների ու ուսուցման կազմակերպման մեդիամեթոդների՝ բլոգներ, կայքեր, սոց. ցանցեր, նրանք քայլ առ քայլ, սահուն կերպով, իրենք էլ չհիմանալով ինչպես՝ դարձան ընթերցավարներ: Ինչպե՞ս դա կատարվեց:

Դասավանդողն իր բլոգում հավաքում է ուսումնական ռեսուրսներ՝ ուսումնական նյութեր ու հղումներ, հոդվածներ, առաջադրանքներ, ուսումնական ֆիլմեր, աուդիոգրքեր: Բնականաբար այդ հսկայածավալ տեղեկատվությունը մատչելի դարձնելու, ճիշտ կողմնորոշման համար կոմպլեկտավորման կարիք է զգում: Նյութերը չեն մնում թափթփված վիճակում, աշխատանքի ընթացքում դասավանդողը խմբավորում է յուրաքանչյուրն ըստ բաժինների: Բլոգում նյութերի կոմպլեկտավորումը գրադարանավարի մշտական աշխատանքն է՝

մատենավարություն: Յուրաքանչյուր դասավանդող գրադարանավարի նման ձևավորում, կարգավորում, դասավորում է իր բլոգը ըստ հոդվածների, թարգմանությունների, բաժին է բացում բառարանների համար, ընտրում է ճիշտ տառատեսակը, ընթերցանության համար հարմար գույնը, աչքին հարմար, գրավիչ տեսքը: Դասավանդող-մեդիագրադարանավարը բնականաբար իր բլոգում դնում է մշակված, ընտրված նյութերը, որոնք ոչ միայն սովորողին են վերաբերում, այլ դրանցից կարող են օգտվել նաև համացանցային այլ ընթերցողներ: Դասավանդողն իր բլոգում հավաքում է իր բնագավառին համապատասխան ուսումնական ռեսուրսները:

Իսկ գրադարանավարը գրադարանի կայքում՝ մեկ փաթեթում հավաքում է նույն ոլորտի տարբեր դասավանդողների ստեղծած լավագույն նյութերը, որոնք նախապես արժանացել են տվյալ ոլորտի մասնագետների գնահատականին:

Այս կերպ կրթահամալիրի գրադարանը ուսումնական պրոցեսի կազմակերպման համար իրականացնում է «Գրադարան առանց գրքի» նախագիծը, որտեղ ինտեգրում է վերը նշված նորագույն տեխնոլոգիաները:

Աշխարհում տեխնիկայի զարգացումը ստիպում է դասավանդողին փոխել իր դասավանդման ոճը, օգտագործել նոր ռեսուրսներ, ստեղծել դասի նոր կազմակերպում, դրանց գույզահեռ գրադարանի ֆոնդը անընդհատ ընթացքի, զարգացման, լրացման մեջ է:

Գրադարան, մեդիագրադարան, համացանց՝ կարևոր չէ, կարևորը սովորողին ընթերցող դարձնելն է:

Կրթահամալիրի գրադարանի ֆոնդի զարգացումն էլ յուրաքանչյուր սովորողի, ուսումնասիրողի, ինքնակրթվողի համար հանդիսանում է ուսումնական հարթակ:

### **Ուսումնական մեդիափաթեթ**

Կրթահամալիրի գրադարանի առաքելությունն է մշտապես աջակցել, խրախուսել սովորող ընթերցողին: Ընթերցանությունը խրախուսելու համար գրադարանը մշտապես փնտրտուքների մեջ է՝ ի՞նչ միջոցներ ձեռնարկի, ի՞նչ մեթոդներ կիրառի, ինչպե՞ս անի, որ սովորողն ու դասավանդողը միշտ կապի մեջ լինեն գրադարանի հետ, իրարից օտարվածության զգացողություն չունենան, գրադարանն ու դասավանդողը զբաղվեն նույն գործով՝ ընթերցանություն սովորեցնեն՝ ծրագրային-առարկայական, գեղարվեստական թե գիտահանրամատչելի, դասական թե ժամանակակից գրականություն, ուղղակի նորություններ:

Ձեռնարկված քայլերին ավելացվեց ուսումնական փաթեթների ստեղծումը, որը և՛ ծրագրային է, և՛ համապատասխանում է կրթահամալիրի տոնացույցին, ստուգատեսներին ու օլիմպիադաներին:

Ինչի՞ համար է ուսումնական էլեկտրոնային փաթեթը:

Այստեղ հավաքվում են տվյալ ծրագրին համապատասխան ձեռնարկներ, հոդվածներ, ֆիլմեր, այլոց կարծիքներ, աուդիոգրքեր, ֆոտոշարքեր՝ մի խոսքով ամեն ինչ:

Գուցե լինեն մարդիկ, որ կասեն կփնտրենք (Search կտանք) Google-ում ցանկացած լեզվով, և եթե նյութ կա, կբերի: Դա, իհարկե, ճիշտ է, բայց միայն այն դեպքում, երբ գիտես, ինչ ես փնտրում: Իսկ եթե չգիտես՝...

Նախկինում կային մատենագիտության բաժիններ, որտեղ ստեղծվում էին քարտարաններ-փաթեթներ: Պարզ է, որ դա շատ աշխատատար էր և հասանելի չէր ամեն մի ընթերցողի: Խորհրդային ժամանակի ընթերցողները կհիշեն՝ որքան բարդ գործ էր միայն քարտարանին մոտենալը: Իսկ մեր առցանց փաթեթները մատչելի են յուրաքանչյուր ընթերցողի:

Անշուշտ, ուսումնական փաթեթները ստեղծվում են նրա համար, որ ընթերցողը արագ կարողանա գտնել իրեն անհրաժեշտ նյութը, կատարի վերլուծական և ստեղծագործական աշխատանք: Եվ ո՛չ միայն: Ուսումնական էլեկտրոնային փաթեթներն ուղղորդում են ընթերցողին: Այդօրինակ փաթեթների միջոցով գրադարանավարը հանդես է գալիս ոչ միայն որպես նյութ մատուցող, այլև՝ խորհրդատու:

Ուսումնական փաթեթները, անշուշտ, չեն կազմվում նրա համար, որ ընթերցողը դառնա ծույլ ու ինքը չկամենա փնտրել իրեն պետքական նյութը համացանցում: Ընդհակառակը, ուսումնական փաթեթները յուրահատուկ կողմնացույց են այն գանձարանում, որոնք ձեզ կտա համացանցը...: Ուսումնական փաթեթների մեջ գրադարանավարը ներառում է նյութեր տարբեր կայքերից, բլոգերից, ֆորումներից: Նրանք և՛ հեշտացնում են ընթերցողի աշխատանքը, և՛ միաժամանակ բարդացնում այն՝ ստիպելով կարդալ ավելին, քան նա կարող էր գտնել փնտրող-որոնող համակարգերի կողմից իրեն մատուցված միայն մի կայքում: Իսկ դասավանդողին հուշում է: Շատ հաճախ էլ դասավանդողը ինքն է առաջարկում նյութ, լրացնում է փաթեթը:

Կրթահամալիրի յուրաքանչյուր սովորող, ուսուցիչ, ծնող համալրում է կրթահամալիրի գրադարանի էլեկտրոնային ֆոնդը:

Նյութերի փաթեթ ստեղծելը գրադարանավարից խորը ուսումնասիրություն է պահանջում: Պատկերացրեք, քանի՞ նյութ է պետք ընթերցել՝ դրանցից լավագույններն

ընտրելու համար: Իսկ ուսումնական փաթեթներն ավելի շատ խնդիրներ են առաջ քաշում, որոնք պետք է լուծի գրադարանավարը. ո՞ր դասարանի համար է նախատեսվում տվյալ փաթեթը, ի՞նչ տարիքի երեխաներ են օգտվելու դրանից և այլն: Այդ դեպքում գրադարանավարը հանդես է գալիս նաև որպես մանկավարժ. առանձնացնում, տարբերակում և առաջարկում է փաթեթը:

Այնուամենայնիվ բոլոր ուսումնական փաթեթներն ուղղված են սովորող, փնտրող, հետազոտող ընթերցողին՝ լինի սովորող, դասավանդող, ծնող, և նրանց ստեղծումը անիմաստ է, եթե ընթերցողը չի օգտվում դրանցից: Փաթեթները տարածում ենք facebook սոցցանցով, և ստացված կարծիքները, նամակները վկայում են, որ այլ գրողների, հեղինակների մասին փաթեթներ ևս պետք է ստեղծենք:

Փաթեթների էջերի այցելուների քանակը գալիս է ապացուցելու, որ այն գնալով մեծ պահանջարկ է ունենում:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴԵՐԸ ԿԱԲԻՆԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կրթահամալիրում ուսումնական և հետազոտական աշխատանքների խթանման և բարելավման նպատակով անհրաժեշտ թվային միջոցներով առարկայական կաբինետ-լաբորատորիաներ են ստեղծվել: Դասարան-լաբորատորիայի առարկայական ղեկավարի առջև խնդիր էր դրված ունենալ անհրաժեշտ բոլոր կրթական ռեսուրսները (դասագիրք, բառարան... քարտեզ, և թվային ռեսուրսներ): Նշենք, որ սա նորարարություն է մեր կրթահամալիրում, որտեղ լաբորատորիայի ղեկավարն ինքն է իր մասնագիտական «ընթերցարանը» ստեղծում, իսկ գրադարանն ավելի ու ավելի է ընդլայնում այն: Սա փոխում է գրադարանի կառուցվածքը. գրադարան-գրապահոց, գրադարան-ընթերցարան, ընթերցավար-դասավանդող փոխհարաբերությունների ճիշտ կազմակերպման ժամանակ ուսուցման արդյունքն ակնհայտ է: Կաբինետ-լաբորատորիայի դասավանդողի համագործակցությունը գրադարանի հետ շարունակական է: Գրադարանը տեղեկացնում կամ ուղարկում է հղումներ էլ.փոստով, նորույթներ գրականության ու նոր ռեսուրսների մասին:

Դասավանդողի հետ անընդհատ համագործակցելով՝ գրադարանը հարստացնում է

լաբարատորիան՝ հաշվի առնելով դասավանդողի նախապես ներկայացրած ծրագիրը, ինչն էլ իր հերթին նպաստում է դասավանդողի աշխատանքի արդունավետության բարձրացմանը:

«Գրադարանը, զոնե իմ սերնդի համար, հստակ աշխատածն ունի. գիրքը գրանցվում է ձեր անունով, նշվում, թե երբ ես վերադարձնելու, այն ժպիտով հանձնվում է քեզ որոշակի ժամանակով:

Գրականությունը դասարանում ավելի շատ է պետք գալիս և ավելի անկանխատեսելի ժամանակով: Օրինակ՝ լեզվի այս կամ այն դրույթը պաշտոնական գրականությունից ճշտելու համար հարկավոր է անվանի լեզվաբանների աշխատությունները միշտ ձեռքի տակ ունենալ: Այդպես անկանխատեսելի պահին կարող է զանազան բառարաններ, տարբեր թվերի ու մակարդակների դասագրքեր և այլ գրականության անհրաժեշտություն լինի: Այս խնդրի լավագույն լուծումը գտնված է մեր կրթահամալիրում. գրադարանը մասնագիտական և որոշ ծրագրային գեղարվեստական գրքեր, նաև դասագրքերը բաժանել է համապատասխան կաբինետներին: Գրքի համար պատասխանատուն, միևնույն է, դասավանդողն է: Այս դեպքում, սակայն, ժամկետն ավելի երկար է՝ մինչև ուսումնական տարվա ավարտը, և գիրքը կարող էս օգտագործել հենց անհրաժեշտությունը ծագի: Այդ պահը կարող էս և ծրագրած չլինել:

Ինձ անձամբ գրադարանի այս աշխատակարգն օգնում է առավելագույնս», - նշում է հայոց լեզվի և գրականության դասավանդող Ղազարյան Հասմիկը:

Գրադարանի խնդիրն է կաբինետ-լաբորատորիաներին ապահովել.

- Ուսումնական ռեսուրսներով (թվային և թղթային)
- թվային միջոցներով
- ուղղորդմամբ
- տեղեկատվությամբ
- հարմարավետ միջավայր հետազոտական աշխատանքների համար

Գրադարանի ընթերցասրահներում կաբինետային համակարգը գրադարանի գործունեությանը չի խանգարում. այն բավարարում է կոնկրետ ընթերցողի կոնկրետ պահանջը:

Գրադարանի նախապես մշակած մեթոդական ուղիները հեշտացնում և էլ ավելի արդյունավետ են դարձնում դասավանդողի գործը և դասի ճիշտ կազմակերպումը, մասնավորապես՝ պահանջվող նյութը փնտրելիս, ուսումնական փաթեթը համակարգչում տեղադրելիս, այն կիրառելիս, մեղիագրադարանի և

լաբորատորիայում առկա տպագիր ուսումնական նյութերն անսպառ ու անխնա օգտագործելիս:

«Մեղիա գրադարանի առկայությունը կրթության կազմակերպման գործում լուծում է երկու կարևոր խնդիր: Նախ այն երեխային սովորեցնում է առավել արդյունավետ օգտագործել համացանցը՝ որպես կրթական միջավայր: Գրադարանի կայքում տեղադրված նյութերը անմիջականորեն առնչվում են սովորողի ամենօրյա կրթությանը: Այլևս անհրաժեշտ չէ համացանցում երկար որոնել քեզ անհրաժեշտ նյութերը: Դրանք կարելի է գտնել գրադարանի կայքում: Երկրորդ՝ այսօրվա թվային աշխարհում մեղիա գրադարանը ուղղակի անհրաժեշտություն է աշխարհի հետ համաչափ քայլելու համար: Գաղտնիք չէ, որ զարգացած երկրներում արդեն վաղուց ներդրված է թվային գրադարանը՝ որպես հանրակրթության անբաժան մի մասնիկ: Այդ առումով, խիստ կարևորում են «Տ. Հայրապետյան» գրադարանի կայքը և դրանում առկա ու ամեն օր թարմացվող թվային գրադարանի առկայությունը մեր Կրթահամալիրում: Ուսուցման գործընթացի կազմակերպումը մասնագիտական կաբինետներում պահանջում է դինամիկ և ռացիոնալ լուծումներ: Մեղիագրադարանը, իր հարուստ բազայով, անմիջականորեն ներկա է յուրաքանչյուր դասարանում: Այն ապահովում է դասապրոցեսի դինամիկությունը, բարձրացնում երեխայի ընդհանուր ակտիվությունը, ապահովում է ուսուցման գործընթացը բազմաշերտությունը, և հնարավորություն է ստեղծում ցանկացած հարցի տալ ռացիոնալ լուծում»: *Արտակ Ջարգարյան*

Կարծում են, գրադարանի առկայությունը կաբինետ-լաբորատորիայում ուսումնական միջավայրի կարևոր մասն է: Այն դեպի դասավանդողի անհատականությունը տանող ճանապարհն է և արտացոլում է դասարանի գրագիտության կարևորումը: Այսպիսով՝ 2012-2013 ուս.տարում գրադարանն իր առջև խնդիր է դրել զարգանալ և մասնագիտական գրականությամբ առավելագույնս ապահովել կաբինետ-լաբորատորիաների «ընթերցարանները», որն էլ իր հերթին կօգնի ավելի կիրթ ուսումնական միջավայր կառուցելուն:

*Մարի Գարանյան*

## ՄԵԲԱՍՏԱՑԻՆԵՐԸ ԳՐՔԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ՄԵԴԻԱԳՐԱԴԱՐԱՆ

Աշխարհում արդեն վաղուց փոխվել է գրադարանային գործը. փոխվել են գրադարանների գործառույթները, ավելացել նորերը: Գրադարանն այլևս ընդամենը գրքերի պահպանության ու ընթերցանության միջավայր չէ: Ասում են՝ ժամանակին համընթաց շարժվելու համար պետք է տիրապետել տեխնիկային: Այսօր առանց թվային միջոցների չես կարող և չես էլ պատկերացնի զարգացում, իսկ գրադարանների զարգացումը դրա մասն է կազմում: Թվային տեխնոլոգիաների թռիչքային զարգացումը և տեղեկատվական հեղեղն անճանաչելիորեն փոխել են գրադարանների աշատանքի ձևը, բովանդակությունը, դեմքը և դերը: Շատ ենք խոսում կրթության որակի բարձրացման, հեռավար ուսուցման և շատ այլ կարևոր բաների մասին: Մեդիակրթությունը նպաստում է դրան: Մարդիկ օրվա ցանկացած պահի կարող են մուտք գործել, կարդալ, գտնել այն ինֆորմացիան, որն

անհրաժեշտ է: Ներկայումս թվայնացնում ենք պահանջարկ ունեցող գրականություն, դասաքրքեր, ամսագրեր: Կարճ ասած՝ այս ամենը միանշանակ նպաստում է մեր կրթական որակի բարձրացմանը ու գործընթացի հեշտացմանը: Այսպիսի գրադարանում գրադարանավարի դերը անընդհատ զարգացումն է և տեղեկատվության մեծ պաշար ունենալը: Գրադարանավարը հենարան է դառնում նոր մանկավարժությանը. նա աշխատում է ոչ թե ավանդական ձևերով, այլ բարձրացնում է գրադարանի դերը՝ ապահովելով անընդհատ կրթություն, դառնալով հաղորդակցման ինֆորմացիոն կենտրոն:

Քանի որ կրթահամալիրում իրականացվող կրթական ծրագիրը տարբերվում է մյուս կրթական ծրագրերից իր բովանդակությամբ և մեղիակրթությամբ, իր օլիմպիականներով ու ստուգատեսներով, գրադարանը պիտի սպասարկի կրթության այդպիսի կազմակերպմանը:

Ինչպե՞ս համադրել ուսուցման ավանդական միջոցը և անընդհատ զարգացող մեղիան, որպեսզի երկուսն էլ օգտագործվեն, ի՞նչ քայլեր է անում գրադարանը: Այսօր աշխատելու համար գրադարանին հարկավոր է ստեղծել հարմարավետ միջավայր՝ գրապահարաններ, գրականություն, համակարգչային սրահ, երաժշտության և բացօթյա սրահներ, ունենալ թվային միջոցներ, ունենալ տնօրենի աջակցություն և նվիրյալ գրադարանավարներ, ընթերցողական ակտիվ: Այս բոլորի համադրության արդյունքում կստացվի ժամանակակից գրադարան:

Գրադարանավարն ինքն է դառնում տեղեկատվության բնագավառի փորձագետ, որը տիրապետում է տվյալների որոնման ու տարածման, գիտելիքների կառավարման, տեղեկատվության նախագծման ու մատուցման կարողությունների:

Գրադարանավարի մասնագիտությունը եզակի է նրանով, որ հնարավոր չէ գծել նրա գործունեությանը սահմանը:

Սպասարկման էլեկտրոնային ձևը հեշտացնում է գրադարանավարի և ընթերցողի աշխատանքը: «Տվյալներ բազան» (կա նաև <http://gradaran@mskh.am> կայքում) ընթերցավարին միանգամից տեղեկություն է տալիս ընթերցողի, գրքի վերադարձման, բնակավայրի փոփոխության, գրանցման ժամկետի, ընթերցողի կրթական նախասիրությունների մասին, ընթերցողին մատուցում իրեն անհրաժեշտ տեղեկություններ:

Գրադարանի աշխատողը կատարում է մշակույթային և տեխնիկական աշխատանք: Մշակույթային կողմը գրադարանավարի համագործակցությունն է դասավանդողի հետ՝ գրադարանում եղած գրքային և թվային նյութեր տրամադրելով: Կրթական ծրագրին համապատասխան՝ գրադարանը ձեռք է բերում գրականություն, ամսագրեր, թերթեր, ձայներիզներ, ուսումնական փաթեթներ կամ թվայնացնում անհրաժեշտ նյութերը:



Հաճախակի միջոցառումները, սեմինարները, քննարկումները, վերապատրաստումները գրադարանը դարձնում են ընթերցողների հավաքատեղի: Կատարվում են նաև խմբային, անհատական, հետազոտական աշխատանքներ: Ընթերցող-գրադարան կապի Ճիշտ օգտագործման դեպքում ընթերցողի համար գրադարանը դառնում է գրավիչ, հարագատ, սիրելի անկյուն, «ծարավը հագեցնելու» միջավայր. նա ապրում է գրադարանի հաջողություններով: Տեխնիկական կողմը գրականությունն արձանագրելը, ցուցակագրելը և այբբենական կարգով դասավորելը, ընթերցողին սպասարկելը, ընտրության մեջ օգնելը, տեղեկացնելը, համակարգչային գրագիտություն սովորեցնելը, ցուցահանդեսների և քննարկումների հանդեպ հետաքրքրություն առաջացնելն է: Այսպիսին է գրադարանավարի դերը գրքի, ինֆորմացիայի և ընթերցողի միջև:

### **Մեդիասպասարկում համացանցում**

Թվային գրադարանը համապատասխան ծառայություններով հագեցած այնպիսի տվյալների կառավարելի հավաքածու է, որոնք պահվում են թվային ֆորմատներով և մատչելի են համակարգչային ցանցերի օգնությամբ: Դրանց պահպանման և օգտագործման համար կարևոր դեր և նշանակություն ունի գրադարանը: Այն նաև փորձում է այդ մասին տեղեկացնել համացանցով: Այցելելով [gradaran.mskh.am](http://gradaran.mskh.am) դուք կմտնեք գրադարանի նոր, թարմացված կայքը, որտեղ կարող եք գտնել հետաքրքիր նյութեր, տեղեկություններ, թարգմանություններ: Կայքն հինգ տարվա գործունեություն ունի: Սակայն նրա օգտագործումը կրում էր տեղեկատվական բնույթ: Այս տարի գրադարանի աշխատանքային խումբը որոշեց այն թարմացնել, ավելացնել ընթերցողների համար ավելի հարմար բաժիններ: Գրադարանին կից ստեղծված մեդիահրատարակչատան աշխատանքները ներկայացնելու համար կայքում ավելացավ թվային գիրք, թվային դասագիրք, թվային ամսագիր բաժինները, որտեղ կայքի սպասարկման խումբը ցանկացած պահի կարող է տեղադրել նոր թվային նյութեր: Գրքերը տեղադրվում են PDF և Word ծրագրերով: Գրքերն իրենց հերթին թվայնացվում են դասավանդողների, սովորողների պատվերներով: Կարծում եմ՝ զարգացման այս ժամանակակից փուլում ցանցերում պարտադիր պետք է լինեն էլեկտրոնային գրքեր: «Տիգրան Հայրապետյան» գրադարանի հրատարակչատունն էլ իրականացնում է ժամանակների այդ պահանջը: Կայքում անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո ձևավորված կամավոր աշխատողների խումբը սկսեց տառերի այբբենական ցանկը անցկացնել կայք: Ընթացան ստուգման աշխատանքներ և խումբը անցավ ռուսերեն տառերի տեղադրմանը: Աշխատելու ժամանակ նկատեցինք որոշ թերություններ, որոնք բարդացնում էին աշխատող խմբի գործունեությունը: Այդ պատճառով կազմակերպում էինք քննարկումներ և փորձում գտնել համապատասխան լուծումները: Այդ ամեն ինչի կարգավորումից հետո խումբը կրկին անցավ աշխատանքի և այժմ գրադարանի կայքը պարբերաբար թարմացվում է

հետաքրքիր նյութերով: Ընթացքում նոր ստացված գրքերի մասին փոքրիկ տեղեկություն և լուսանկար է տեղադրվում նոր գրքեր բաժնում:

Գրադարանի յուրաքանչյուր աշխատող ծանոթ է կրթահամալիրում իրականացվող ծրագրերին և գրադարանը խթան է հանդիսանում համացանցում փնտրվող նյութը հեշտությամբ գտնելու համար: Գրադարանի աշխատողը համացանցում փնտրում է պահանջվող նյութը, կցում այն գրադարանի կայքին կամ հղում տալիս տվյալ աղբյուրի հասցեին: Օրինակ փնտրվող նյութը Բակունցի «Խոնարհ աղջիկ»-ն էր: Տեսնելով, որ տվյալ գիրքը տեղում չկար, փնտրեցինք համացանցում, գտնելով ամբողջական թվայնացված գիրքը՝ առանձնացրինք Word ծրագրով և տվյալ ֆայլը կցեցինք «Թվային գիրք» բաժնում (<http://gradaran.mskh.am/node/2203>): Ընթերցողին տեղեկացրինք, որ կայքում կարող է կարդալ էլեկտրոնային տարբերակով, այնուհետև հետևելով հաշվիչին՝ տեսանք, որ երկու օրում գիրքը կարդացվել է 10 անգամ:

*Գարանյան Մարի, Առաքելյան Զարուհի*

### ԳԼԽԱՎՈՐԸ՝ ՉՈՒՇԱՆԱԼՆ Է...

Գաղտնիք չէ, որ մենք ապրում ենք նոր տեխնոլոգիաների և համակարգիչների դարում, և այն ինչի հետ որ մենք առնչվում ենք թե՛ տանը, թե՛ աշխատանքային վայրում, և իհարկե՝ դպրոցում, անմիջական կապ ունի թվայնացման հետ: Այսօրվա նոր սերնդի երեխաների մասին ասում են՝ «ծնվել է պուլտը ձեռքին»: Եվ ի՞նչ կարող է տալ «ամենագետ» երեխային՝ մեր ժամանակակից սովորողին, դպրոցի գրադարանավարը: Այսօր գրադարանը դպրոցում պետք է լինի ավելի շատ ծավալուն ու ֆունկցիոնալ, քան ավանդական գրադարանը, որովհետև այստեղ երեխաները ոչ միայն ընթերցում են գրքերի միջավայրում, այլև հետազոտում են, հարստանում են գիտելիքներով, շփվում են միմյանց հետ: Հյուրընկալ միջավայրը տրամադրում է երեխաներին ավելի շատ ժամանակ անցկացնել գրադարանում, քանի որ այստեղ կարելի է գտնել նրանց հուզող հարցերի պատասխանները, հանդիպել ընկերներին և

պատրաստել դասերը, գրել ռեֆերատներ, մասնակցել քննարկումների, հավաքել նյութեր հետազոտական աշխատանքների համար: Չէ՞ որ միայն գրադարանում կան այդքան զանազան գրքեր, դասագրքեր, բառարաններ, հանրագիտարաններ: Եվ, իհարկե, չպետք է մոռանալ պայմանների մասին, որտեղ պետք է իրագործվեն թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքները: Բոլորս գիտենք, որ աշակերտին օգնելու համար գրադարանավարից պահանջվում են գիտելիքներ և՛ ինտելեկտուալ, և՛ տեխնիկական, և՛ հոգեբանական, որովհետև գրադարանավարը շփվում է ամբողջ դպրոցի անձնակազմի հետ: Եթե գրադարանը բաց է մինչև դասերի սկիզբը, ապա աշակերտները շտապում են գրադարան, որպեսզի ինչ-որ դաս կրկնեն, կամ տնային առաջադրանքները ավարտեն, ուսուցիչները՝ դասին անհրաժեշտ նյութը ստանալու համար կամ, ինչո՞ւ ոչ, նաև գրադարանավարի ջերմ խոսքով լիցքավորվելու համար: Դասերի ընթացքում գրադարանը նույնպես պետք է աշխատի, որովհետև դասը լիակատար անցկացնելու համար կարող են քարտեզներ, ատլասներ, բառարաններ, և այլ տեղեկատվական աղբյուրներ անհրաժեշտ լինել, և, ի վերջո, կարելի է դասը անցկացնել անմիջապես գրադարանում՝ գրքերով ու ծաղիկներով շրջապատված, կամ մաթեմատիկայի, կենսաբանության, և նույնիսկ հեքիաթի անկյուններից մեկում: Մեր գրադարանում են անցնում նաև պատմության, արվեստի, աշխարհագրության, տեխնոլոգիայի, օտար լեզուների դասերը: Ահա այստեղ է, որ անհրաժեշտ է գրադարանավարի ուղղորդող, արագ կողմնորոշող աշխատանքը: Նույնիսկ դասաժամերի ավարտից հետո գրադարանը մարդաշատ է: Սկսվում են անհատական և խմբակային պարապմունքները: Արդեն ժամը 17:00-ն է, բայց գրադարանը չես կարող փակել. երեխաները դեռ գործեր ունեն: Իհարկե, եթե այս ամենին ավելացնենք այն տեխնիկական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են գրադարանին՝ համակարգիչ՝ ինտերնետ կապով, ձայնագրիչ, ֆոտոխցիկներ, տեսախցիկներ և այլ սարքավորումներ, որոնք օգտագործում են աշակերտի զարգացման ու ուսումնական պրոցեսի գործընթացում, ապա գրադարանավարի պարտականությունների մեջ է մտնում նաև նոր տեխնոլոգիաներին տիրապետումն այնքան լավ, որպեսզի նա կարողանա սովորեցնել և՛ աշակերտներին, և՛ ուսուցիչներին: Այդպիսի գրադարանավարը պետք է անընդհատ կատարելագործի իր գիտելիքները, միշտ տեղյակ լինի կրթական և զարգացման արդի միտումներին: Դպրոցը պետք է հպարտանա ո՛չ թե իր նոր «եվրո» վերանորոգված դասարաններով և միջանցքներով, այլև իր բազմաֆունկցիոնալ գրադարանով, որը իրենից պետք է ներկայացնի մի լաբորատորիա, որտեղ թրծվում և մշակվում են գիտելիքները: Այդ լաբորատորիան պետք է նրբորեն պահպանել և խնամել: Ժամանակակից թվային գրադարանում գրադարանավարը հանդես է գալիս որպես «մտքի ճարտարագետ»: Գրադարանը՝ դպրոցի սիրտն է, նրա դեմքը: Երբ խոսում են դպրոցի որակի մասին, անմիջապես հետաքրքրվում են նրա գրադարանի վիճակի մասին, այսինքն այն միջավայրի մասին, որտեղ աշխատում են մեր երեխաները: Հուսով ենք, որ մեր հայկական դպրոցների

տնօրենների վերաբերմունքը կփոխվի իրենց գրադարանների և գրադարանավարների նկատմամբ: Չէ՞ որ դրանից է կախված պահանջված է արդյոք այդ դպրոցը ժամանակակից հանրության կողմից, թե ոչ: Կարո՞ղ է արդյոք դպրոցը այս տեղեկատվական տեխնոլոգիաների դարում ինֆորմացիայի թռիչքը մատուցել անհրաժեշտ մակարդակով: Գլխավորը՝ չուշանալն է...

*Հեղինակ՝ Նոննա Գրիգորյան*

## **ԳՐՔԻ ՏՈՆ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Երևի չեք վիճի, որ երեխայի դաստիարակության հարցում ընտանիքից, շրջապատում իր տեսածից ու լսածից հետո ամենամեծ ազդեցությունն է թողնում ընթերցանությունը: Մեծահասակներից շատերի համար ընթերցանությունը ինքնակրթության և ընդհանրապես կրթության միջոց է, ոմանց համար էլ՝ պարզապես հանգստանալու լավ ձև: Բայց երբ գործ ունենում երեխայի հետ, նրան դեռ պետք է քայլ առ քայլ մոտեցնենք գրքին: Ի՞նչ խոսք, այս այս դեպքում ևս ընտանիքում տեսած օրինակը առաջնային դեր ունի երեխայի համար: Բայց ժամանակակից դպրոցականը օրվա մեծ մասը անց է կացնում ուսումնական հաստատությունում, ազատ ժամանակի մի մեծ մասն էլ նվիրում է տնային առաջադրանքներին: Մա նշանակում է, որ նախակրթարանից և առաջին դասարանից սկսած երեխայի դաստիարակության մեջ մեծ դեր է խաղում ուսումնական հաստատությունը: Մովորողի ընթերցարանը, նոր հրատարակված գունազարդ գրքերը ընթերցանության խթանման և ընթերցողին դեպի գիրքը բերելու հնարավորություն են համարվում, որ կիրառել ենք մինչև այսօր, կիրառվելու են հետագայում: Կրթահամալիրում դրան ավելացնում ենք ուսումնական կարիներտներում-ընթերցասրահում անցկացվող պարապմունքները, գրադարանի կայքում ստեղծված մեդիափաթեթները:

2013թ. համար մշակված «Գրքի տոնը ուսումնական հաստատությունում» ուսումնական նախագիծը ընթերցասիրության զարգացման ավելի ինտերակտիվ, ավելի հետաքրքիր և մատչելի հնարավորություն է:

Նախկինում էլ հրատարակչություններն ու գրադարանները (քաղաքային, ազգային) համատեղ իրականացնում էին գրքի ցուցահանդես-վաճառքներ և գրքի համալրման ու ընթերցանության խրախուսման այլ ձևեր: Բայց փորձեք հիշել մի դեպք, երբ հրատարակչությունը մտել էր ուսումնական հաստատություն: Նախկինում ուսումնական հաստատության և հրատարակչության միջև միջնորդ էին լինում այլ

կառույցներ: Իսկ «Գրքի տոնը ուսումնական հաստատությունում» նախագծի շնորհիվ հրատարակչությունը մտավ կրթական հաստատություն առանց միջնորդի և առանց կոմերցիոն նպատակների:

Գրքի տոնի նախապատաստական աշխատանքը ևս ուսումնական աշխատանք էր, ընթերցանության խրախուսման յուրահատուկ ձև:

1. Կապ հաստատեցինք հրատարակչության հետ:
2. Սովորողների փոքր խմբերով այցելեցինք տարբեր հրատարակչություններ, ինչն անմիջապես լուսաբանվում էր mskh.am-ում սովորողների կողմից:
3. Կրթահամալիրում հյուրընկալեցինք հրատարակչության ներկայացուցիչներին:
4. Հրատարակչության կողմից առաջարկվեցին նոր հրատարակված գրքեր, որոնք կարժանանային ընթերցողների կողմից առանձնակի ուշադրության:
5. Ընտրված գրքերը հատվածաբար թվայնացվեցին:
6. Գրադարանը ծանոթացրեց ընթերցողին այդ գրքերի հեղինակների, բովանդակության հետ, որպես յուրահատուկ «գովազդ»՝ սովորողներին մատուցեց ամենահետաքրքիր հատվածները գրքերից:
7. Ընթերցանությունն ավելի գրավիչ դարձնելու և ընտրված ստեղծագործությունները տարբեր անկյուններից դիտարկելու համար գրադարանն ընթերցողին մատուցեց նաև ընտրված ստեղծագործությունների էկրանավորումները (ֆիլմ, մուլտֆիլմ), ծանոթացրեց ընթերցողին դրանց հաջողությունների, երաժշտության հետ:
8. Կրթահամալիրի դպրոցներում հետազոտող դասավանդողները ծանոթացրին սովորողներին գրադարանի մատուցած նյութերին, ընտրված ստեղծագործությունների համար պարապմունքների ծրագրեր մշակվեցին:
9. Մշակվեց նախագծի առաջին տոնի մանրամասն ծրագիրը:
10. Գրքի տոնը, ինչպես կրթահամալիրի մյուս տոները, իր հանդիսավոր բացումն ունեցավ Մարմարյա սրահում. սովորողներին ողջունեց կրթահամալրի տնօրենը, ով ևս մեկ անգամ հիշեցրեց գրքի՝ և՛ տպագիր, և՛ մեդիա, և ընթերցանության կարևորությունը մեր կյանքում:

11. Սկսվեց ցուցահանդես-վաճառքը: Կրտսեր և միջին դպրոցների սաները բաժանվեցին խմբերի, մասնակցեցին ցուցահանդես-վաճառքին: Սովորողներին խմբերի բաժանելիս հաշվի էինք առել տարիքային առանձնահատկությունները՝ հասակակիցների հետ շփումը, աշխատանքը, քննարկումը, ընթերցանությունը:

12. Ընթերցասրահում արդեն տեղի ունեցավ ընտրված գրքերի շնորհանդեսը: «Շնորհանդես» բառը այստեղ տեղին չէ, որովհետև շնորհանդեսը ենթադրում է պասիվ հանդիսատես: Իսկ մեզ մոտ, ինչպես գիտենք, հանդիսատես չկա, կան միայն մասնակիցներ: Սովորողներին դիմավորեցին Գեղարվեստի ավագ դպրոցի թատրոնի ակումբի սովորողները՝ որպես հեքիաթների հերոսներ, ովքեր ներկաներին բաժանեցին փոքր խմբերի և դարձրին մինի-ներկայացման մասնակիցներ: Մասնակիցների մի քանի խումբ միաժամանակ սիրված հերոսի հետ բեմադրում էր հատված իր հավանած ստեղծագործությունից: Այսպիսով գիրքը դարձավ ավելի «կենդանի» և ավելի գրավիչ: Մինի-ներկայացումներն ուսումնական աշխատանք էին նաև թատրոնի ակումբի անդամների համար, ովքեր նախօրոք պատրաստվել էին դրանց, ծանոթացել գրքերի հետ: Ընթերցասրահում Գեղարվեստի ավագ դպրոցի սովորողներն այնքան էին ոգևորվել, որ միաժամանակ և՛ կերպար էին, և՛ դերասան, և՛ բեմադրող, և՛ ընթերցավար: Ապրե՛ք, երեխաներ:

13. Այս ամենին «խառնել» էինք նաև ծնողներին: Այսպիսով գիրքը մտավ դասարան ու ընտանիք:

14. Ընթերցասրահից հեռանալուց հետո յուրաքանչյուր դասարան իր տեսածն ու լսածը վերհիշեց կայքում նյութ (ֆիլմ, ֆոտոշարք, հոդված) թողարկելիս:

15. Շատ կարևոր է նախագծի լուսաբանումը լրատվամիջոցների կողմից, ինչպես նաև գրքի տոնի ողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը Մարմարյա սրահում:

Նախագծի բացթողումները.

1. Չնայած երեխաների ոգևորությանը, ծնողները դեռ ավելի պասիվ են:
2. Դասավանդող - գրքի հերոս կապը հաստատված չէր:
3. Լավ կլիներ, եթե հրատարակչությունը գրքերով համալրեր գրադարանը:
4. Նախագիծն ավելի հաջողված կլիներ, եթե գրքի գինը ավելի մատչելի լինի:

Նախագիծը կարելի է համարել շարունակելի, և հենց դա է ամենահրաշալիին այս նախագծում:

Հեղինակ՝ Մարի Գաբանյան

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ  
ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑ**

**(Դիպլոմային աշխատանք)**

**Բովանդակություն**

Առաջաբան .....

Գրադարան հասկացությունը .....

Գրադարանավար .....

Գրադարանը որպես կրթական, մշակութային և տեղեկատվական միջավայր

Նախագծեր գրադարաններում .....

Գիտելիք և զբաղմունք՝ գրադարանային միջավայրում .....

Համագործակցություններ .....

Իմ գործունեությունից՝ որպես ընթերցավար.....

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանը

Եզրակացություն .....

## **Առաջաբան**

Իմ դիպլոմային նախագծի թեման է. «Գրադարանային միջավայրը ընթերցանության կազմակերպման ու խրախուսման միջոց»:

Սույն դիպլոմային աշխատանքով կփորձեմ ներկայացնել գրադարանների դերի ու նշանակության կարևորությունը, որն անմիջականորեն պայմանավորված է գրադարանային միջավայրով, ինչը կանխատեսում է ֆիզիկական և մեդիա միջոցներով բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ընթերցանության կազմակերպման ու խրախուսման համար՝ բոլոր տարիքի սովորողների, դասավանդողների և ցանկացած ընթերցասեր մարդու համար:

Գրադարանային բարենպաստ միջավայրը խթանում է սովորողի, գրադարանից օգտվող անհատի ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացմանը, գիտելիքների աճին, ինքնակրթությանը, բազմակողմանի զարգացմանը, ունեցած գիտելիքների պաշարն ավելացնելուն, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն, դասերի ընթացքում ստացած գիտելիքները և առարկայական տեղեկատվությունը համալրելուն:

Գրադարաններում են դարերի ընթացքում գրքերի միջոցով պահպանվել տեղեկություններ, պատմական իրադարձություններ, մշակութային, բժշկական, գիտական, գիտատեխնիկական, ակադեմիական, գեղարվեստական, ուսումնական,



ռազմական, մանկական, դպրոցական, անձնական (ընտանեկան) գրառումներ, փաստաթղթեր, որոնք հին դարերում լայն մասսայականություն չեն վայելել, հասանելի են եղել հատուկ ուսումնասիրողների, երբեմն էլ որոշակի թույլտվությամբ, ինչը չի կարելի ասել այսօրվա մասին: Ներկայիս և՛ ֆիզիկական, և՛ մեղիա գրադարանները հասանելի են բոլոր մարդկանց համար:

Գրադարանը ստեղծվել է մարդու կողմից և նախատեսված է մարդու համար: Գրադարանների միջոցով է իրականացվում մշակութային արժեքների պահպանման գործընթացը: Պատմա-մշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին, այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջներին համապատասխան:

«Գրադարան գոյություն ունի այնտեղ, որտեղ իրականացվում է կրթություն» վերնագրով հոդվածում «Միխիթար Մեբաստացի» կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանի ղեկավար Մարի Գաբանյանը նշում է. «Այսօր՝ տեղեկատվական մեր դարում, գրադարանների կողմից կազմակերպվող տեղեկատվական, մշակութային, կրթական և գիտական գործունեության հիմնական նպատակը պետք է լինի գրադարանային հավաքածուների, մասնագետների ու նյութա-տեխնիկական բազայի միջոցով նպաստել մարդու՝ տեղեկատվություն ստանալու և ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացմանը: Տեղեկատվական միջոցների հեղափոխության մեր ժամանակներում գրադարաններն այլևս սոսկ «գրքերի դարաններ» չեն, այլ «տեղեկատվության»:

Այդ տեսանկյունից մասնավորապես դպրոցական գրադարանները պետք է կարողանան դառնալ ավելի ընդարձակ՝ գլոբալ տեղեկատվական և գրադարանային ցանցերի մի օղակը, ոչ միայն դուռ՝ դեպի բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվության աշխարհ, այլ նաև ուղեցույց այդ աշխարհում չմոլորվելու համար»:

Եվ սա հնարավոր է ապահովել գրադարանային համապատասխան բարենպաստ միջավայր ստեղծելով, կատարելագործելով:

## **Գրադարան հասկացությունը**

Գրադարան անվանումը ծագել է հունարեն biblion — գիրք և theke — գրապահոց հասկացություններից և բառացի նշանակում է bibliotheca -գրապահոց:

Գրադարաններն ընդհանրապես, լայն իմաստով, կենսամշակութային, ուսումնական, տեղեկատվական վայրեր են, որոնք նպաստում են տեղեկատվության, գիտելիքների ձեռք բերմանը՝ գրքային և տեխնոլոգիական միջոցներով: Գրադարանը մի համակարգ է, որը կարևոր դեր և նշանակություն ունի կրթության և հասարակական կյանքի բազմակողմանի զարգացման գործում:

Դպրոցական գրադարանները նույն ֆունկցիան են կատարում, ավելացրած նաև հեղինակային ծրագրերի և բազմազան ուսումնական-հետազոտական նախագծերի իրականացումը՝ դասավանդողների և սովորողների կողմից: Դպրոցում գրադարանը հանդիսանում է բազմատարողունակ հիմնարար աղբյուր՝ հատկապես սովորողների համար:

Գրադարաններում համապատասխան միջավայր են հանդիսանում լուսավոր ընթերցասարահները, թաղարներով բույսերի առկայությունը, լուսամուտներից բնության տեսարանները, գրքերի ազատ դասավորությունը, տեխնիկայի միջոցներից օգտվելու համար համապատասխան և հարմարավետ կահույքի առկայությունը, և, իհարկե, գրագետ գրադարանավարի անմիջական և պատրաստակամ օգնությունը: Գրադարանային նման միջավայրը նպատակաուղղված է նպաստել ընթերցողների կողմից գրադարաններից օգտվելու մշակույթի զարգացմանը:

Ըստ գրադարանների և գրադարանային գործի մասին Հայաստանի հանրապետության օրենքի, գրադարանի պարտադիր գործառույթներն են.

Գրադարանը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 1) Հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման է տրամադրում գրադարանային փաստաթղթերը, դրանց վերաբերյալ և այլ բնույթի տեղեկույթ.
- 2) Ցուցակագրում, դասակարգում և կազմում է գրադարանի հավաքածուի գրացուցակը և մատենագիտությունը.
- 3) Ապահովում է գրադարանի հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- 4) Ապահովում է գրադարանից օգտվողների համար որակյալ ծառայությունների մատուցումը.

- 5) Նպաստում է կրթությանը, խթանում է ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին.
- 6) Տրամադրում է գրադարանի հավաքածուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթ՝ Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի պետական գրացուցակի համար.
- 7) Ապահովում է գրադարանային հավաքածուում գտնվող գրավոր հուշարձանների պահպանումը և վերականգնումը.
- 8) Ներդնում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ: /Հոդված 7./

### **Գրադարանավար**

Գրադարանավարները հավաքագրողներն են, գրքերի ֆոնդը պահպանողներ և համալրողներ, տարբեր ժամանակաշրջաններում նաև փաստաթղթեր վերականգնողներ, գրացուցակ կազմողներ, ներկայումս՝ թվային տարբերակով, մեդիատեխնիկայի միջոցների հնարավորություններով տրված ծրագրերի օգտագործմամբ, ինչը նպաստում է գրադարանավարի առավել արագ և արդյունավետ գործունեությանը: Գրադարանավարները նաև համապատասխան միջավայրի ստեղծողներ և պահպանողներ են:

Գրադարանավարը, տիրապետելով գրադարանային գործի հմտություններին, հստակ ուղղորդում է ընթերցողին կողմնորոշվելու և համապատասխան ընտրություն կատարելու ներկա իրականության ահռելի տեղեկատվական դաշտում: Գրքային տարբերակն առավել հստակ է, կոնկրետ, ավելի հեշտ է ընտրել, ընթերցել, բայց մեդիատեխնիկայի միջոցներից օգտվելու մշակույթը ձևավորվում է գրադարանավարի անմիջական օգնությամբ, ուսուցմամբ, քանի որ սովորողի համար, հատկապես կրտսեր տարիքի, բավականին դժվար է իրարից տարբերել տեղեկատվությունն ու գիտելիքը:

Մեդիատեխնիկան իր հնարավորություններով նպաստում է արագ գտնել ցանկացած տեղեկատվություն կամ գիրք, բայց ֆիզիկական գրքի առկայության պարագայում ընթերցողն ինքն է ընտրում՝ ո՞ր տարբերակից օգտվել:

Գրադարանավարի օգնությամբ ընթերցողները, հատկապես կրտսեր տարիքի, ծանոթանում են գրքերի որոնման եղանակներին, տեխնիկայի միջոցների ծրագրերի յուրացմանը, որոնց միջոցով կարող են մուտքագրել տեքստեր, այնուհետև դրանք մեկ ծրագրից փոխանցել մեկ այլ ծրագրի, տեղադրել համացանցում, հմտանում են

տեքստերի, գրքերի, փաստաթղթերի, նկարների թվայնացման գործում, ձեռք են բերում համացանցից առավել արդյունավետ օգտվելու մշակույթ, հմտանում թվային գրքերի ստեղծման գործում:

Մեդիագրադարանում տեղադրվում են թվային գրքեր, գրադարանավարը նաև թվայնացնում է ընթերցողների պատվիրած գրքերը՝ պահպանելով հեղինակային իրավունքները:

## **Գրադարանը որպես կրթական, մշակութային և տեղեկատվական միջավայր**

Գրադարանները, լինելով բազմատարողունակ մշակութային, տեղեկատվական և ուսումնական կենտրոններ, արհամարված և երկրորդական օղակի չվերածվելու համար մշտապես համալրվում են թե՛ գրքային միջոցներով, թե՛ մեդիատեխնիկայի բոլոր հնարավոր նորություններով, դրանց ընձեռած հնարավորություններով, որոնք հասանելի են ընթերցողների, դասավանդողների, սովորողների համար՝ իրենց գիտելիքների պաշարն ավելացնելու, ինքնակրթության, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալու, դասերի ընթացքում ստացած գիտելիքները և առարկայական տեղեկատվությունը համալրելու համար:

Գրադարաններում համապատասխան միջավայր է համարվում գրքերի դասավորությունն ըստ թեմատիկայի, որը հեշտացնում է ոչ միայն ընթերցավարի, այլ նաև օգտվողի փնտրտուքը, տեղում գիրք կարդալու համար հարմարավետ անկյունների ստեղծումը, ոչ միայն կահույքի առկայությամբ, այլ հարմարավետ միջոցներով, ինչպիսիք կարող են լինել գորգերը, բարձիկները, կրտսեր տարիքի սովորողների համար հեքիաթային անկյունի առկայությունը:

Գրադարաններն ունեն իրենց մեդիակայքերը, որի վառ օրինակն է «Միլիթար Սեբաստացի» կրթահամալիրում ակտիվ գործող «Տիգրան Հայրապետյան» գրադարանը, որտեղ ներկայացված են

Գրադարանի կառուցվածքը

Գործառույթները

Միստեմատիկ կատալոգ՝ առկա բազմաժանր գրականության մասին

Նոր գրքերի մասին տեղեկատվություն

Նյութերի թվայնացման մասին տեղեկատվություն

Պաշարների կատալոգ

Բոլոր դասարանների դասագրքեր

Այլընտրանքային դասագրքեր

Թվային գրքեր

Ֆիլմադարան

Ձայնադարան

Գրադարանների արդիականացում, գրքային և թվային տարբերակներ, լիարժեք տեքստային և թվային ռեսուրսներ

Գրադարանների արդիականացումը ոչ միայն գրքերի ֆոնդի և տեխնիկայի միջոցների համալրումն է, այլ նաև մեդիամիջոցների ծրագրերի համալրումն ու դրանց տիրապետումը, որոնց միջոցով առավել արդյունավետ թվայնացվում են գրքեր, տեքստեր, ստեղծվում թվային գրքեր, ձայնային և տեսաֆիլմային գրքեր, և այս ամենը հնարավորություն է ստեղծում նույն ստեղծագործությանը ծանոթանալ տարբեր տարբերակներով՝ ըստ ընթերցողի ընտրության: Մեդիափաթեթների ստեղծումը նպաստում է առավել արդյունավետ, հեշտությամբ գտնել որևէ հեղինակի կոնկրետ ստեղծագործությունը:

Գրադարանը միշտ նոր գաղափարների՝ բոլոր հնարավոր մոտեցումների, հետաքրքիր և ստեղծական մտահղացումների փնտրտուքի մեջ է, ինչը իրականացվում է ն՝ գրադարանավարի, և՛ գրադարանային ծառայություններից օգտվողների կողմից:

### **Նախագծեր գրադարաններում**

Գրադարաններում իրականացվում են տարաբնույթ կրթամշակութային միջոցառումներ, բազմաբովանդակ նախագծեր, հանդիպումներ տարբեր բնագավառների ստեղծագործող մարդկանց հետ, բազմաբնույթ մասնագետների հետ, նաև պաշտոնյաների հետ: Նման նախագծերի նպատակը զրույցների, հարց ու պատասխանի միջոցով ոչ միայն ծանոթությունն է տվյալ անհատի անձնական և ստեղծագործական կյանքին, ստեղծագործություններին կամ մտորումներին, այլ նաև

տվյալ մարդու մասնագիտության, մասնագիտական գաղտնիքների մասին պատկերացում կազմելը:

Հանդիպումները տարբեր գրադարանների գրադարանավարների, դպրոցների, համալսարանների, քոլեջների դասավանդողների և սովորողների, պետական և հասարակական մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, բացի միմյանց ճանաչելուց, ապահովում են փորձի փոխանակություն:

Գրադարանի նախագծային միջոցառումներից են. ցուցահանդեսներ, հանդիպումներ, դասախոսություններ, սեմինարներ, պոեզիայի ժամեր, ֆիլմերի ցուցադրություններ, քննարկումներ, բանավեճեր, բուկլետների հրատարակում և տարածում, համագործակցություն ՋԼՄ-ների հետ, համացանցում հայտարարությունների տեղադրում, գրադարանավարների վերապատրաստում, փորձի փոխանցում և փոխանակում, գրադարանի աշխատանքի և սպասարկման վերաբերյալ հարցումների անցկացում, գրքերի շնորհանդեսներ, թատերական ներկայացումներ, գրքերի նվիրատվություններ ինչպես գրադարանում իրականացվող միջոցառումների, այնպես էլ ուսումնական ճամփորդությունների ընթացքում և այլն:

Դպրոցական գրադարաններում բացի ընթերցավարից նախագծեր են իրականացնում ընթերցողները՝ սովորողներն ու դասավանդողները: Դպրոցական գրադարաններում միջոցառումները, նախագծերը կարող են կապված լինել առարկայական ուսուցման որևէ թեմայի հետ:

Նախագծերի ներկայացման, ամփոփման, հանդիպումների ընթացքում հրավիրվում են հյուրեր, եթե նախագիծը դպրոցական որևէ առարկայական ուղղվածություն ունի, հրավիրվում են տվյալ տարիքի սովորողներ՝ մյուս դպրոցներից:

### **Գիտելիքի համալրում և զբաղմունք՝ գրադարանային միջավայրում**

Գիտելիքը, բանիմացությունը որպես բարձրագույն արժեք ձեռք է բերվում գրքերի բազմաբովանդակ աշխարհի հետ ծանոթանալով, ինչի ապահովողներից է ժամանակակից գրադարանն իր բոլոր գործառույթներով, միջոցներով, նպաստավոր միջավայրով:

Գրադարաններում սպասարկման ավանդական և տեխնոլոգիական միջոցները նպաստում են համագործակցական կապերի ընդլայնմանը, միջմշակութային հաղորդակցություններին, հումանիտար զարգացմանը:

Հասարակական կյանքում կատարված փոփոխությունները չէին կարող իրենց անդրադարձը չունենալ գրադարանների գործունեության վրա: Իրականությունն այսօր այնքան էլ բարենպաստ չի գրադարանների համար: Կրճատվել է պետական ֆինանսավորումը, նվազել է համալրման հնարավորությունը:

Այս ամենին զուգահեռ փոխվել են ընթերցողների պահանջները, առաջացել է նոր տեսակի ծառայությունների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտություն: Շատ մարդիկ մեկուսանում են՝ օգտվելով միայն տեխնոլոգիական միջոցներից: Իսկ գրադարանը ամեն ինչի հետ միասին նաև հնարավորություն է տալիս ընթերցողների անմիջական շփմանը, գրքերի կամ այլ հարցերի քննարկմանը, կարելի է ասել գրադարանը նաև ընթերցողների համար հաղորդակցման, շփման միջավայր է:

Գրադարանը հանդիսանում է համապատասխան կազմակերպչական ստեղծարար կենտրոն՝ գրադարան-ակումբ, գրադարան-թանգարան, գրադարան-ընթերցասրահ, գրադարան-դասարան՝ մասնավորապես բաց-դասերի համար:

### **Համագործակցություններ**

Գրադարանների գործունեության կարևորագույն նախապայման է հանդիսանում համագործակցությունը ՁԼՄ-ների հետ, որը չպետք է սահմանափակվի միայն կազմակերպված նախագծերի, միջոցառումների լուսաբանմամբ, այլ հենց գրադարանային բարենպաստ միջավայրի ներկայացմամբ հանրությանը: Դրա համար գրադարանը մշակում է և ՁԼՄ-ների միջոցով ներկայացնում որոշակի ժամանակահատվածի կտրվածքով ծրագրեր՝ նախագծերի, միջոցառումների, շնորհանդեսների, ցուցահանդեսների, համագործակցությունների, ուսումնասիտագոտական ճամփորդությունների մասին, որոնք նախատեսվում են իրագործել և որոնք գործունեության ընթացքում կարող են համալրվել:

Գրադարանային կադրերի պատրաստմանը նպաստում են ոչ միայն կրթությունն ու մասնագիտական գիտելիքների վերապատրաստումները, ինչը ապահովում է «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրը, այլ նաև փորձի փոխանակումը տարբեր տարիք և աշխատանքային փորձ ունեցող անձանց միջև, համագործակցությունը տարբեր կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում աշխատող նմանատիպ մասնագետների հետ:

Կրթահամալիրի գրադարանը համագործակցում է տարբեր գրադարանների հետ, որոնցից են.

Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան

Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան

Հայաստանի ազգային գրադարան

### **Իմ գործունեությունից՝ որպես ընթերցավար**

Որպես ընթերցավար իմ գործունեության ամենօրյա գործառույթներն են.

Ընթերցասրահի գրքերի սպասարկում, գրանցում

Սովորողների հետ ընթերցանության կազմակերպում

Սովորողների հետ մեդիագրադարանից և համացանցից առավել արդյունավետ օգտվելու մշակույթի ձևավորում

Ներթուրքերի սպասարկում, սպասարկման գրանցում

Ներթուրքերի լիցքավորում

Դասավանդողների հետ համագործակցություն, կրթահամալիրի տոնացույցով նախագծերի իրականացում, բաց դասերի, ճամփորդությունների, հանդիպումների, անձնական նախաձեռնությունների իրականացում, լուսաբանում

Որոշ նախագծեր իրականացնելիս էլեկտրոնային հասցեներով սովորողներին նյութերի հետ ծանոթացում

Մեդիափաթեթների ստեղծում

Թվային գրքերի ստեղծում

Կրթահամալիրի կայքում և ենթակայքերում տեղադրված նյութերի, սովորողների ու դասավանդողների բլոգների ընթերցում, որոշ նյութերի ներկայացում կայքում

Գրքերի, դասագրքերի սպասարկում, սպասարկման գրանցում

Մեդիագրադարանի, կենտրոնական գրադարանի, կրթահամալիրի մյուս դպրոցների ընթերցասրահների հետ համագործակցություն



Բույսերի խնամք

Թղթի թափոնի հավաքում

Հաշվետվություն

Պարբերաբար գեղարվեստի ավագ դպրոցի ենթակայքում իմ նախաձեռնությամբ ներկայացրել եմ ընթերցանության նյութեր՝ «Ինչ ընթերցել այսօր» վերնագրով:

Իմ բլոգում առկա է «Ընթերցարան» բաժինը, որտեղ ներկայացված են հաշվետվություններ, ընթերցանության նյութեր, նախագծերի մասին տեղեկատվություն, լուսաբանում:

Կրթահամալիրում իրականացվող նախագծերը, ծրագրերն ու նախաձեռնությունները, կրթահամալիրի յուրաքանչյուր դպրոցում համապատասխան միջավայրով ձևավորված ընթերցասրահները նպաստում են սովորողների կրթությանը, ինքնակրթությանը, անհատի ձևավորմանը հասարակության մեջ, ինքնուրույն մտածողության զարգացմանը, սովորողների անհատական նախաձեռնությունների իրականացմանը, ուսումնական ճամփորդությունների շնորհիվ Հայաստանի ճանաչմանը, բնության հանդեպ սիրուն, հայկական, մասնավորապես Կոմիտասի երաժշտության, պարի, գրականության, արվեստի յուրացմանն ու տարածմանը:

Եվ այս ամենն իրականացվում է ստեղծարար գործունեության համար ստեղծված պայմաններում, ինչի համար շնորհակալություն կրթահամալիրի տնօրեն, տիար Աշոտ Բլեյանին :

### **«Տիգրան Հայրապետյան» գրադարանն ու մեդիագրադարանը որպես կրթամշակութային կենտրոն**

ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանը գործում է 1989թ.-ից: Գրադարանը կրթահամալիրի մասնաճյուղ է, որը, համաձայն կրթահամալիրի կանոնադրության, լիազորված է իրականացնելու կրթահամալիրի գործունեության առարկայից, նպատակներից և խնդիրներից բխող գործունեություն:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմում գործում են ուսումնական հաստատություններ, որոնք իրականացնում են նախադպրոցական,

հանրակրթական, արհեստագործական նախաամասնագիտական, միջին մասնագիտական, արտադարձական կրթական ծրագրեր:

ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կենտրոնացված գրադարանն սպասարկում է կրթահամալիրի շուրջ 2500 սովորողներին, ուսանողներին և աշխատողներին, ինչպես նաև Երևանյան համայնքների դպրոցներին և բնակիչներին: Գրադարանի կազմում գործում են 7 ընթերցասրահները:

Գրադարանն անընդհատ ձեռք է բերում նոր նյութեր՝ գրքեր, ամսագրեր, թերթեր, սկավառակներ, քարտեզներ, ձայնագրություններ և ուսումնական այլ նյութեր, մշակում է դրանք և սպասարկում ընթերցողներին:

Գրադարանի ֆոնդը հարստանում է նաև նվիրատվությունների շնորհիվ:

Գրադարանը աշխատում է շաբաթվա բոլոր օրերին:

«Տիգրան Հայրապետյան» գրադարանը կազմակերպում է վերապատրաստումներ, պարբերաբար համալրվում է նոր գրքերով: Գրքերի թվայնացնելու գործին ներգրավվում են նաև սովորողները: Գրադարանը համագործակցում է Հայաստանի տարբեր գրադարանների, ուսումնական հաստատությունների, հրատարակչությունների հետ: Մեդիագրադարանում ստեղծվում են թվային գրքեր, մեդիափաթեթներ, որոնք բաց են և հասանելի:

Ընթերցասրահներում բացի մի շարք նախագծերից և միջոցառումներից պարբերաբար իրականացվում են կրթահամալիրում աշխատող ընթերցավարների և «Գրադարանային գործ» բաժնում սովորողների սեմինար պարապմունքներ, քննարկումներ:

## **Եզրակացություն**

Ելնելով վերը նշվածից, գրադարաններում արդիական համապատասխան միջավայրի ստեղծումը նպաստում է և կարևորում գրադարանների նշանակությունը՝ որպես գրքի և ընթերցանության կարևոր խթանիչ՝ գրքային և թվային միջոցներով:

Գրադարանային միջավայրը կարևոր է որպես բազմատարողունակ կրթական, մշակութային, տեղեկատվական, ստեղծագործական և ուսումնական ծրագրերի, նախագծերի իրականացման համար:

Գրադարանային միջավայրը չի կարող միապադաղ և անհրապույր լինել, ընդհակառակը, այն գրավիչ, հարմարավետ, օգտագործելի և կենսունակ լինելով է ապահովում, խթանում ընթերցողի, անհատի և խմբերի ստեղծագործական, ուսումնական, հետազոտական աշխատանքների իրականացմանը:

Ժամանակակից գրադարաններում առկա տեխնոլոգիական միջոցներն ու նրանց ընձեռած հնարավորությունները օգտակար են և օգնում են:

Անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն՝ անհրաժեշտության դեպքում գրադարանավարի օգնությամբ, ով հանդիսանում է գրադարանային միջավայրի ստեղծման, պահպանման և զարգացման իրականացնողը:

Սույն դիպլոմային աշխատանքով փորձեցի ներկայացնել գրադարանների դերի ու նշանակության կարևորությունը, որն անմիջականորեն պայմանավորված է գրադարանային միջավայրով, ինչը կանխատեսում է ֆիզիկական և մեդիա միջոցներով բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ընթերցանության կազմակերպման ու խրախուսման համար՝ բոլոր տարիքի սովորողների, դասավանդողների և ցանկացած ընթերցասեր մարդու համար:

### ***Օգտագործված աղբյուրներ***

1. «Հայկական Գրադարան» գիրք
2. «Через библиотеки –К Будущему»
3. Тезисы к догладу директора центральной библиотеки им. Аветика Исаакяна
4. Խնկո Ապորանվան մանկական գրադարան
5. Գրադարանի արդիականացում նորագույն տեխնոլոգիաների՝ լրիվ տեքստային և մուլտիմեդիոն ռեսուրսների միջոցով
6. Մեդիագրադարան
7. Մեր Մանկավարժությունը՝ որպես արդիական և հանրամատչելի փոխանցում և գործիքներ
8. Տեխնոլոգիայի «Մեդիագրադարան դասին»
9. Մեդիագրադարան

Ընթերցվար՝ Անժելիկա Մանուկյան, 2015թ.

Կազմող՝ Գսպոյան Աննա  
Ղեկավար՝ Գաբանյան Մարի

*Հունվար 2017*

*«Մխիթար Սեբաստացի»*

*Կրթահամալիր*